377

2(075)
7-19

Հանձնարար Լեն Մարդերիրոսոյ

ՀԱՄԱՌՕՏ

ՍՐԲԱԶԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Բ 2001

2(075)
Պ-19

ՀԱՄԱՌՕՏ

ՍՐԲԱԶԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ

Ի ՊԷՏՍ ԱԶԳԱՅԻՆ ԴՊՐՈՑԱՅ

ՅՕՐԻՆԵԱՑ

Հ. ԳԷՈՐԳ ՊԱՅԵԱՆ

ՅՈՒԽՏԷՆ ՄԽԻԹԱՐԱՅ

35714

ՀԻՆԳԵՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

ՎԵՆԵՏԻԿ

ՄԽԻԹԱՐԵԱՆ ՏՊԱՐԱՆ

1910

Ա. Զ Դ

Համառօտ և ի համառօտին ամբողջական սրբազան պատմութեան ընթացք մի ազգային վարժարանաց մէջ կարևորագոյն տարերաց մին կը համարուի։ Մեր նախնեաց ընծայած դասագիրքն, յօրինեալ ի Հ. Եփրեմ Սեթեանէ՝ յետ զանազան անգամ տպագրուելու և սպառելու, այժմեան ազգային վարժարանաց ուսումնական ընթացից համեմատութեամբ ընդարձակ տեսնուելով, ի ներկայիս ի լոյս կ'ընծայեմք զառաջիկայս. և ուսանողաց սիրտն և միտքը առաւել ևս գրաւելու նպատակաւ՝ իւրաքանչիւր գլխոյ մէջ աւանդուած պատմութիւնն յատուկ պատկերաւ ևս կը ներկայացընեմք, առ ի դիւրութիւն ըմբռնողութեան։ Վստահ եմք որ հաճոյ պիտի անցնի այս մեր փոքրիկ աշխատութիւնն, և օգտաւէտ լինի ազգիս մանկանց. որ պիտի լինի միակ վարձատրութիւն մեր Ջանից։

Չորրորդ տպագրութեան ատեն ժամանակագրութիւնն ևս ուղղեցաւ ըստ Եօթանասնից։

ՀԱՄԱՌՕՏ
ՍՐԲԱԶԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ՀԻՆ ԿՏԱԿԱՐԱՆ

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ՍՏԵՂԾՈՒՄՆ ԱՇԽԱՐՀԻՍ

(ամք 5412 նախ քան զՔրիստոս)

1. Աստուած ի սկզբանէ վեց օրուան մէջ ստեղծեց երկինքն ու երկիրս ոչընչէն։
2. Առաջին օրը լոյսը ստեղծեց։

1. Աստուած քանի՞ օրուան մէջ ստեղծեց աշխարհս։
2. Վեց օրուան մէջ ի՞նչ կարգաւ ստեղծեց Աստուած զաշխարհս։

ՍՏԵՂԾՈՒՄՆ ԱՇԽԱՐՀԻՍ

(ամք 5412 նախ քան զԲիբլիստոս)

Երկրորդ օրը հաստատութիւնն ըրաւ, որ Երկինք ըսուեցաւ։

Երրորդ օրը երկիրս ծածկող ջուրը ցամաքէն զատեց. և առանձին տեղ ամփոփեց, որ ըսուեցաւ Ծով, ու երկրին հրաման տուաւ խոտ, բոյս և ամեն տեսակ ծառ բուսցընել։

Չորրորդ օրը երկնից աստղերն, արևն ու լուսինն ստեղծեց, և սահմանեց որ արևն ցորեկը լուսաւորէ, լուսինն՝ գիշերը. և տոնցմով օր, ամիս և տարի որոշեց։

Հինգերորդ օրը հրամայեց որ ձկներն ու թռչուններն ըլլան, և օրհնեց զանոնք որ աճին ու բազմանան, ջրոյ և օդոյ մէջ սփռուին։

Վեցերորդ օրը հրամայեց Աստուած որ երկրէն ամեն տեսակ չորքոտանի և անասուն ելնեն, և օրհնեց զանոնք որ շատնան ու բազմանան։

1. Նոյն օրն ամեն կենդանիք ստեղծելէն վերջ, ուզեց անոնց տիրապետող մ'այլ դնել, որուն պէտք էր հնազանդէին ամեն ձկունք, թռչունք և անասունք. ու զետնէն հող առնելով՝ շինեց առաջին մարդն Ադամ, և ամեն կենդանիներէն վեր՝ բանական և անմահ հոգի մը փչեց անոր, որով ըստ պատկերի և ըստ նմանութեան Աստուծոյ ստեղծուեցաւ մարդս։

2. Վերջն Աստուած ամեն կենդանիք Ադամայ առջև բերաւ, որպէս զի անոնց անուն դնէ. Ադամ ալ ամենուն մէկ մէկ անուն դրաւ։

3. Բայց Ադամ միայն էր աշխարհիս վրայ՝ որ ըստ պատկերի և ըստ նմանութեան Աստուծոյ շինուած էր, ուստի ըսաւ Աստուած. «Աղէկ չէ որ մարդն առանձին ըլլայ, իրեն նման օգնական մ'ալ տանք». և Ադամայ վրայ խորին թմրութիւն մը ձգելով, անոր քնացած ժամանակ՝ մէկ կողն առաւ, և անկէց Եւա կինը շինեց, նոյնպէս ըստ պատկերի Աստուծոյ, և անմահ հոգի մը փչեց։

4. Այսպէս Աստուած վեց օրուան մէջ երկինքն ու երկիրս իր մէջն եղած ամեն բաներով ստեղծելէն վերջ՝ եօթներորդ օրը ստեղծագործութենէ դադրեցաւ ու հանգչեցաւ. և օրհնելով այն օրն ուզեց որ սուրբ պահուի և իրեն նուիրենք։

---

1. Աստուած ի՞նչպէս ստեղծեց զմարդն։
2. Կենդանեաց ո՞վ անուն դրաւ։
3. Աստուած ի՞նչպէս ստեղծեց առաջին կինը։
4. Ի՞նչ ըրաւ Աստուած եօթներորդ օրը։

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ԱԴԱՄ ԵՒ ԵՒԱ

(ամք 5412 նախ քան զԲրիստոս)



1. Աստուած Ադամ ու Եւա գեղեցիկ պարտէզ մը դրաւ որ Երկրաւոր Դրախտ կ'ըսուէր. ուր ամէն տեսակ գեղեցիկ ծաղիկներ և պտղատու ծառեր կային: Սոնցմէ զատ երկու ծառեր այլ կային, որոց մէկը կ'ըսուէր Յառ կենաց և միւսն՝ Յառ գիտութեան բարւոյ և չարի:

2. Աստուած հրաման տուաւ Ադամայ որ դրախտին ամէն ծառոց պտղէն ուտէ, բայց գիտութեան բարւոյ և չարի ծառոյն պտղէն ուտելն արգիլեց և ըսաւ. «Այն օրն որ ուտէք՝ կը մեռնիք»:

3. Սատանան, որ մարդուս երջանկութեան վրայ կը նախանձէր, օձի կերպարանքը երևեցաւ Եւայի և ըսաւ. «Ո՛չ եթէ այն ծառէն ուտելով կը մեռնիք, այլ մանա-

ւանդ՝ գիտնալով Աստուած որ եթէ այդ պտղէն ուտէք, աչքերնիդ կը բացուին և Աստուծոյ նման կ'ըլլաք, բարին ու չարը կը ճանչնաք, անոր համար արգիլած է ձեզի ծառոյն չմօտենալ»: Եւա խաբուեցաւ այս խօսքերէն, և չդիմանալով պտղոյն գեղեցկութեան՝ փրցուց ու կերաւ, և էրկանն այլ տուաւ որ նոյնպէս կերաւ:

Այն ժամանակ աչքերնին բացուեցաւ և իմանալով թէ մերկ են, թզենւոյ տերևով իրենք զիրենք ծածկեցին, և լսելով Աստուծոյ դրախտ գալը՝ ծառերու մէջ պահուըտեցան:

Կանչեց Աստուած զԱդամ ծառոց մէջէն և ըսաւ. «Ո՞ւր ես Ադամ»:

Պատասխան տուաւ Ադամ. «Դրախտին մէջ քալելդ լսեցի ու վախցայ, և որովհետև մերկ էի՝ պահուըտեցայ»: Ըսաւ Աստուած. «Ո՞վ ըսաւ քեզի թէ մերկ ես. չըլլայ թէ արգիլած ծառոյս պտղէն կերած ըլլաս»: Պատասխանեց Ադամ. «Կինս որ ինծի տուիր՝ ինքը տուաւ ինծի և կերայ»: Այն ատեն դարձաւ Աստուած և ըսաւ կնոջն. «Ինչո՞ւ զայդ գործեցիր»: Պատասխանեց կինն. «Օձը խաբեց զիս»: Աստուած այլ օձն անիծեց որ որովայնի վրայ սողալով երթայ: Կնոջն այլ ըսաւ. «Վիշտերդ ու տառապանքդ շատնան, և ցաւով ծնանիս»: իսկ Ադամայ ըսաւ. «Որովհետև կնոջդ մտիկ ըրիր և արգիլած ծառոյն պտղէն կերար, անիծեալ ըլլայ երկիր քեզի համար, և երեսացդ քրտամբք ուտես հացդ, մինչև որ նորէն հող դառնաս, վասն զի հող էիր ու հող պիտի դառնաս»:

Եւ Ադամայ ու իւր կնոջ կաշիէ զգեստ հագցընելով դրախտէն դուրս հանեց, և հրաման տուաւ քերովբէից բոցեղէն սրով դրախտին մուտքը պահպանել:

---

1. Աստուած ո՞ւր դրաւ զԱդամ և զԵւա:
2. Աստուած ի՞նչ պատուէր տուաւ Ադամայ:
3. Ադամ պահե՞ց Աստուծոյ պատուէրը:

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

ԿԱՅԷՆ ԵՒ ԱԲԷԼ

(ամէն 5382–4482 նախ քան զԲրիստոս)

1. Ադամ երկու տղայ ունեցաւ, Կայէն ու Աբէլ։ Կայէն երկրագործ եղաւ, Աբէլ՝ հովիւ։

2. Օր մը երկուքն այլ իրենց ունեցածովն ուզեցին Աստուծոյ զոհ մատուցանել. Կայէն իւր երկրին պտուղները բերաւ. Աբէլ այլ իւր ոչխարաց գեղեցիկ ու պարարտները։ Աստուած Աբելի զոհին հաճեցաւ, իսկ Կայէնինը չընդունեցաւ և մերժեց. ասոր համար սատիկ նախանձեցաւ Կայէն՝ Աբելի վրայ, և օր մը խաբելով զինքը դրօսանքի պատճառաւ դաշտ տարաւ ու վրան յարձակեցաւ և սպաննեց։

3. Աստուած հարցուց Կայէնի. «Ո՞ւր է Աբէլ եղբայրդ»։ Պատասխանեց Կայէն. «Մի թէ ես եղբօրս պահապանն եմ»։ Այն ատեն ըսաւ Աստուած խիստ

ձայնով. «Ի՞նչ ըրիր, եղբօրդ արիւնն առ իս կը բողոքէ յերկրէ, ուստի անիծեալ ըլլաս, և թափառական չըլլիս միշտ ասկէց վերջ, շատ աշխատիս և երկիրը պտուղ չտայ քեզի»։

4. Կայէն յուսահատած՝ իր բոլոր կեանքը թափառական ապրելով անցուց, մինչև որ իր թոռը Ղամէք օր մը անտառի մը մէջ զինքը վայրենի կենդանի համարելով՝ նետով զարկաւ և սպաննեց։

5. Աստուած Ադամայ սիրտը մխիթարելու համար, Աբելի տեղ ուրիշ զաւակ մը տուաւ Սէթ անունով, որ Աստուծոյ շատ սիրելի եղաւ, իր որդւովք և ցեղովն հանդերձ, անոր համար Որդիք Աստուծոյ ըսուեցան, իսկ Կայէնի ցեղն չար ըլլալով՝ Որդիք մարդկան կոչուեցան։

Աստուած Սեթայ ցեղն օրհնեց, և շատ երևելի մարդիկ ելան աստուածպաշտութեամբ և երկարակեցութեամբ, ինչպէս Ենովք, որ Աստուծոյ սիրելի ըլլալով՝ ողջ ողջ աշխարհէս վերացաւ. Մաթուսաղա՝ որ 969 տարի ապրեցաւ, որոյ չափ երկայն ապրող մարդ չեղաւ աշխարհիս վրայ։

Քանի որ Որդիք Աստուծոյ խնամութիւն չէին ըներ Որդիք մարդկան ըսուածներուն հետ, որոնք իրենց նախահօր Կայէնի պէս աստուածպաշտութենէ թուլացած՝ կամաց կամաց կռապաշտութիւն սկսան ընել, միշտ Աստուծոյ սիրելի էին. բայց երբ այս զգուշութիւնը մէկդի թողլով սկսան անոնց հետ խնամենալ, իրենք այլ չարացան։ Անոնց խնամութենէ երևելի հսկաներ ծնան նոյն ժամանակ։

6. Ադամ նախահայրն երբ մեռաւ 930 տարուան էր։

---

1. Ադամ քանի՞ տղայ ունեցաւ։
2. Կայէն ի՞նչպէս սպաննեց զԱբէլ։
3. Ի՞նչ ըսաւ Աստուած Կայէնի։
4. Ի՞նչպէս մեռաւ Կայէն։
5. Ադամ ուրիշ զաւակ ունեցա՞ւ։
6. Ադամ քանի՞ տարուան մեռաւ։

ԳԼՈՒԽ ՁՈՐՐՈՐԴ

ՋՐՀԵՂԵՂ.

(ամէն 3270–3150 նախ քան զԲրիստոս)

1. Մարդիկ Աստուծոյ երախտիքը մոռցած՝ նորէն չարագործներ էին, և իրենց մեղքն ու անօրէնութիւնն այնչափ շատցաւ՝ որ Աստուած ուզեց մեծ ջրհեղեղով մը զանոնք աշխարհէ ջնջել։

2. Սակայն ցեղէն միայն Նոյ նահապետն արդար մնացեր էր, ուստի Աստուած զինքը փրկել ուզելով՝ իր խորհուրդը յայտնեց անոր, և հրամայեց որ մեծ տապան մը շինէ, որոյ մէջ պիտի մտնէր ինքն ընտանեօքն։ Նոյ հնազանդեցաւ Աստուծոյ հրամանին, և այն հարիւր ամաց մէջ զոր անցուց տապանը շինելու համար, չէր դադարեր յապաշխարութիւն յորդորել զմարդիկ, բայց անոնք չզղջացան։

3. Երբ տապանը շինուեցաւ՝ Նոյ նահապետն Աստուծոյ հրամանաւ մէջը մտուց աշխարհիս ամէն տեսակ սուրբ կենդանիներէ՝ եօթն եօթն զոյգ, և անսուրբ կենդանիներէ՝ երկու երկու զոյգ. վերջը ինքն, և իր կինը և երեք որդիքն իրենց կանանց հետ մէկտեղ, ութ հոգի մէջը մտան, և Աստուած այլ վրանին դուռը փակեց։

4. Եօթն օր անցնելէ վերջ, յանկարծակի երկնից սահանք բացուեցան ու սաստիկ անձրև սկսաւ գալ որոտմունքով և կայծակով, յերկրէ այլ ամէն կողմանէ սկսաւ ջուր ելնել ու բարձրանալ քառասուն օր անդադար, այնպէս որ բոլոր աշխարհս ջրով լեցուեցաւ, և բարձր լեռներէն ալ տասնուհինգ կանգուն վեր բարձրացաւ ջուրը, և ամէն մարդիկ և անասունք մեռան։

5. Տապանը տարի մը ամբողջ ջրոյ երեսը մնալէն վերջը, Աստուած հոգմ հանեց որ կամաց կամաց ջուրը ցամքեցուց, տապանն այլ Հայաստանի Արարատ լերան վրայ նստաւ։ Նոյ նահապետ ջրոյն քաշուելով երկրին ցամաքութիւնը փորձելու համար՝ տապանին պատուհանը բացաւ և ագռաւ մը թողուց որ այլ չդարձաւ։ Քանի մ'օր ետքն աղաւնի մ'այլ թողուց որ իրիկուան դէմ՝ ձիթենւոյ կանաչ շիւղ մը բերանն առած դարձաւ եկաւ տապանն։ Այն ատեն իմացաւ Նոյ որ երկիրը ցամաքեր է, ելաւ տապանէն իր ընտանեօքն և ամէն կենդանիներով, և ի շնորհակալութիւն Աստուծոյ բարեաց սեղան շինեց և զոհ մատոյց, որ շատ հաճոյ անցաւ Աստուծոյ, և օրհնեց զինքը և խոստացաւ որ այլ ջրհեղեղով պիտի չպատժէ զմարդիկ, և իր այս ուխտին նշան տուաւ ծիրանի գօտին, որ երբ ամպոց մէջ երևի՝ յիշենք Աստուծոյ մեծ գթութիւնն և ողորմութիւնը։

---

1. Ի՞նչ պատճառաւ ջրհեղեղ եղաւ։
2. Ո՞վ ազատեցաւ ջրհեղեղէն։
3. Որո՞նք տապանը մտան։
4. Ո՞րչափ ատեն տևեց ջրհեղեղը։
5. Ո՞ւր նստաւ տապանը։

ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ

ՆՈՅԻ ՈՐԴԻՔ

(ամք 3149 նախ քան զՔրիստոս)

1. Նոյ նահապետին երեք որդիքն էին՝ Սէմ, Քամ և Յաբեթ։ Ջրհեղեղէն վերջը Նոյ երկրագործութիւն կ'ընէր. և օր մը անկած այգւոյն խաղողէն գինի շինեց, և առանց անոր ուժը գիտնալու, քիչ մ'աւելի խմեց, և գինովցած՝ անվայել զիրքով պառկելով՝ քնացաւ։ Քամ իր որդին տեսնելով զհայրն այնպէս պառկած՝ փոխանակ պատկառելու՝ վազեց ծաղրելով ու ծիծաղելով միւս եղբարց պատմեց. բայց անոնք յանդիմանեցին զինքը՝ և զգեստ մ'առնելով, ետ ետ գնացին՝ և հայրերնին ծածկեցին։

Երբ արթնցաւ Նոյ և զգաստացաւ, եղածն իմանալով՝ Սէմն ու Յաբեթն օրհնեց. իսկ Քամն անիծեց և եղբարցդ ծառայ ըլլաս ըսաւ։ Իսկ ինքը ջրհեղեղէն ետքը երեք հարիւր և յիսուն տարի այլ ապրեցաւ և 950 տարուան մեռաւ։

ԲԱԲԵԼՈՆԻ ԱՇՏԱՐԱԿԸ

2. Սէմ, Քամ և Յաբեթի որդիքն և թոռունքն այնչափ բազմացան՝ որ բնակած տեղերնին քիչ կու գար իրենց. ուստի մտածեցին այս և այն կողմ ցրուիլ։ Բայց մէկմէկէ չբաժնուած՝ որոշեցին մեծ աշտարակ մը շինել, որոյ գագաթն մինչև յերկինս հասնի։ Ուստի Սենաարայ դաշտին մէջ ժողովեցան անթիւ բազմութեամբ և արագ արագ սկսան աշտարակը բարձրացընել։ Բայց այս ամբարտաւան գործն անհաճոյ եղաւ Աստուծոյ և յանկարծ լեզուներն խառնակեց. այնպէս որ իրարու ըսածը չհասկընալով՝ աշտարակին շինութիւնը դադարեցաւ և տեղւոյն անունն ալ Բաբելոն դրին, որ խառնակուրիւն ըսել է։

Ուստի խումբ խումբ բաժնուեցան, և Նոյի երեք որդիներէն յառաջ եկած մարդկութեան երեք մեծ ցեղերն գնացին բոլոր աշխարհս գրաւեցին։ Սեմայ ցեղն յԱսիա բնակեցաւ, և անկէց եղան Իսրայելացիք. Յաբեթի ցեղն յԵւրոպա անցաւ, իսկ Քամ իւր սերնդովք յԱֆրիկէ տարածուեցաւ։

---

1. Քանի՞ որդի ունէր Նոյ և ի՞նչ գործ կ'ընէր։
2. Ի՞նչպէս եղաւ աշտարակաշինութիւնը։

35714

ԳԼՈՒԽ ՎԵՑԵՐՈՐԴ

ԱԲՐԱՀԱՄ ՆԱՀԱՊԵՏ

(ամբ 2014 նախ քան զԲիբխատոս)

1. Ջրհեղեղէն ետքը հաղիւ 400 տարի անցեր էր, մարդիկ Աստուծոյ մեծ պատուհասը մոռացած՝ դարձեալ չարացան և մինչև կռապաշտութիւն ալ սկսան ընել։ Այն ատեն Աստուած որոշեց իրեն յատուկ և սեպհական ժողովուրդ մ՚ընտրել, որոյ գլուխ դրաւ զԱբրահամ Նահապետ, և ըսաւ իրեն. «Եւ քո երկրէդ և ազգէդ, և եկուր բնակէ այն երկիրն որ քեզ պիտի ցուցընեմ, և ուր զքեզ մեծ ազգի մը հայր պիտի ընեմ, և ամեն ազգք քեզմով պիտի օրհնուին, և քու զաւակներդ երկնից աստղերէն աւելի պիտի բազմացընեմ»։

2. Աբրահամ մեկէն հնազանդեցաւ Աստուծոյ, առաւ իւր Սարա կինն և Ղոտ եղբօրորդին և իւր ծառայքն ու գնաց Քանանացւոց երկրին գեղեցիկ և բերրի դաշտերու մէջ Քեբրոն քաղաքը բնակեցաւ, Մամբրէի

ըսուած կաղնի ծառին տակ։ Ղոտ ալ իւրմէ բաժնուելով՝ գնաց Սոդոմ քաղաքը նստաւ, որ ընդարձակ և հարուստ քաղաք մ՚էր, բայց բնակիչքը շատ մեղաւոր ըլլալով՝ Աստուծոյ բարկութիւնը վրանին շարժեր էին։

3. Այն ժամանակ հինգ թագաւորք, որոց մէջ էր նաև Սոդոմայ թագաւորն, ապստամբեցան Ելամացւոց թագաւորէն, որ անթիւ զօրքով վրանին ելաւ և յաղթեց, քաղաքները կողոպտեց և Ղոտն ալ գերի տարաւ։ Երբ լսեց Աբրահամ, առաւ իւր ծառայները թշնամեաց վրայ վազեց, յաղթեց և զՂոտ իւր մարդիկներով գերութենէն ազատեց։ Մինչդեռ կը դառնար, Մելքիսեդեկ Սաղիմայ թագաւորն, որ քահանայ Աստուծոյ էր, օրհնեց զԱբրահամ, որ առած աւարէն տասանորդ տուաւ անոր։

4. Աբրահամ Նահապետն՝ երբ ցորեկ ատեն իւր տան դրան առջև նստած էր, երեք հոգի տեսաւ հեռուէն որ դէպ իրեն կու գային. դիմացնին ելաւ, ողջունեց և խնդրեց որ ներս գան իւր տունը հանգչին, և իրենց կերակուր հանեց։ Անոնք իրեն ըսին՝ թէ Սառա գալ տարի այս օրս տղայ պիտի ունենայ։ Սառա որ չէր գիտեր թէ հրեշտակք են, դրան ետևէն լսեց ու ծիծաղեցաւ, իննըսուն տարեկան պառաւ ըլլալուն համար։ Երբ հրեշտակքն մեկնելու վրայ էին, պատմեցին Աբրահամու՝ թէ Սոդոմ քաղաքը կործանելու կ՚երթան։ Աբրահամ լսելուն պէս՝ գութը շարժեցաւ, և սկսաւ աղաչել որ եթէ գէթ տասն արդար գտնուի մէջը՝ քաղաքն ազատեն, այլ չգտնուեցաւ։

---

1. Ի՞նչ ըրին մարդիկ ջրհեղեղէն վերջ։
2. Աբրահամ ո՞ւր բնակեցաւ։
3. Ղոտ կրցա՞ւ հանգիստ կենալ Սոդոմայ մէջ։
4. Աբրահամ ի՞նչպէս ընդունեցաւ երեք հրեշտակները։

ԳԼՈՒԽ ԵՕԹՆԵՐՈՐԴ

ՍՈԴՈՄԱՅ ԵՒ ԳՈՄՈՐԱՅ ԿՈՐԾԱՆՈՒՄՆ

(ամէն 1915 նախ քան զԲիւրիստոս)

1. Երկու հրեշտակքն երեկոյեան գէմ Սոդոմ քաղաքն հասան։ Ղոտ, որ քաղաքին դրան քով նստած էր, երբ տեսաւ զիրենք՝ օտարական կարծեց ու գնաց ողջունեց որ իւր տունը մտնեն և հանգչին։

Բիչ վերջը Սոդոմացիք բազմութեամբ եկան տունը պաշարեցին ու կը սոխպէին զՂոտ որ երկու հիւրերն իրենց յանձնէ. Ղոտ գէմ կեցաւ և մտիկ չըրաւ. ու երբ անոնք կ'ուզէին դուռը խորտակել և բռնութեամբ ներս մտնել, հրեշտակք զՂոտ ներս տուին և ազատեցին անոնց հարուածներէն և բոլոր քաղաքացւոց աչքերը կուրցուցին, այնպէս որ ունայն տեղ մինչև առաւօտ դուռը կը փնտռէին ու չէին գտներ։

2. Այն տեղ հրեշտակք պատմեցին Ղոտայ՝ թէ քաղաքը կործանելու եկած են, և փութացուցին զինքն

որ ընտանիքն ու ազգականքը դուրս հանէ այն մեղաւոր քաղաքէն՝ որոյ վերջին վայրկեանը հասած էր Աստուծոյ առջևն իրենց անօրէնութեանց համար։ Ղոտայ ազգականք զինքը ծաղր ըրին, և չուզեցին տեղերնէն շարժիլ։

Երբ առաւօտ եղաւ՝ հրեշտակքն տուին զՂոտ և իւր կինն և երկու աղջիկներն, և ձեռներէն բռնած քաղաքէն դուրս հանեցին, և ապսպրեցին՝ որ չըլայ թէ ետեւին նային, այլ առանց տեղ մը կենալու փութան ուղղակի դիմացի լեռը ելնեն։

3. Արեգակը ծագեցաւ, և Աստուած սաստիկ կրակով խառն ծծումբէ անձրև մը թափեց յերկնից՝ որ Սոդոմ ու Գոմոր քաղաքներն և իրենց շրջակայ տեղերը բոլորովին այրեց ու կործանեց։

4. Ղոտայ կինն Աստուծոյ հրամանին գէմ՝ ետ դառնալ նայելուն համար աղէ արձան դարձաւ. Ղոտն ալ վախենալով որ թերևս լեռը չհասած կրակն իրեն հասնի, խնդրեց հրեշտակներէն որ մօտ քաղաքաց միոյն մէջ ապաւինի. անոնք ալ խնդիրքը կատարեցին, և մօտաւոր քաղաք մը տարին զինքը, որ իւր պատճառաւ ազատ մնաց այն զարհուրելի պատուհասէն, և անոր համար Սեգովր ըսուեցաւ։

Աբրահամ իւր կեցած տեղէն առաւօտանց նայեցաւ Սոդոմ և Գոմոր քաղաքներուն, և թանձր ծուխ մը տեսաւ որ երկինքը կը պատէր. իմացաւ որ Աստուած կը պատժէր այն քաղաքները՝ և շատ ցաւեցաւ։ Այսպէս չորս քաղաք, Սոդոմ, Գոմոր, Ադամա և Սեբոյիմ մոխիր դարձան իրենց մեղաց համար։ Այս չորս քաղաքաց տեղ ընդարձակ և լճացեալ աղէ ջրոյ լիճ մը բռնեց, որ մինչև ցայսօր Մեռեալ ծով կ'ըսուի։

---

1. Ղոտ ի՞նչպէս ընդունեցաւ Աստուծոյ հրեշտակները։
2. Ի՞նչ իմացուցին հրեշտակները Ղոտայ։
3. Ի՞նչպէս պատժեց Աստուած Սոդոմ և Գոմոր քաղաքները։
4. Ղոտայ կինն ինչո՞ւ համար աղէ արձան դարձաւ։

ԳԼՈՒԽ ՈՒԹԵՐՈՐԴ

ԱԲՐԱՀԱՄՈՒ ԶՈՀՆ

(ամէն 1900 նախ քան զԲրիստոս)

1. Աբրահամ նահապետն՝ Աստուծոյ խոստացած ատեն տղայ մ՚ունեցաւ Սառայէն, և անունը դրաւ Իսահակ. բայց անկէց առաջ ուրիշ տղայ մ՚ալ ունեցեր էր իւր Ագար եգիպտացի աղախնէն, որոյ անունն էր Իսմայէլ։

2. Սառա երբ ծնաւ զԻսահակ և մեծցաւ, այլ չուզեց զԻսմայէլ և անոր մայրը քովը պահել. ուստի Աբրահամ Աստուծոյ հրամանաւ Ագարայ ձեռքը ճամբու համար ուտելիք և ոիկ մը ջուր տուաւ, և որդւոյն հետ տնէն դուրս հանեց։ Ագար ճամբան մոլորած՝ անապատի մէջ կը շրջէր. քովն եղած ջուրն սպառեցաւ և ծարաւէն սկսան սաստիկ նեղուիլ. այն ատեն յուսահատած՝ թո-

ղուց որդին ծառի մը տակ, և ինքն քիչ մը հեռու գնաց նստաւ, որպէս զի անոր մեռնիլը չտեսնէ։ Աստուած տղուն լալու ձայնը լսեց, ու ջուր բղխեցուց այն տեղէն. Ագարայ ալ խոստացաւ՝ որ մեծ ազգ մը պիտի ընէ զԻսմայէլ։

3. Իսահակ իւր վարուքն ու բարուք ծնողաց մխիթարութիւն էր. Աբրահամ ալ երբ բոլորովին հանգըստութեան մէջ կը կարծէր ինք զինքը՝ տեսնելով որ իւր վրայ կը կատարուի Աստուծոյ խոստումը, յանկարծ հրաման առաւ յԱստուծոյ որ իւր Իսահակ որդին ողջակէզ ընէ։

Աբրահամ բնաւ չտարակուսեցաւ. առաւօտը կանուխ ելաւ, որդւոյն ուսին վրայ դրաւ զոհին համար պէտք եղած փայտն, ինքն ալ սուրն ու կրակը ձեռքն առած՝ Աստուծոյ ցուցած լեռան վրայ գնացին։ Ճամբան հարցուց Իսահակ. «Հայր, ըսաւ, փայտն ու կրակն ունինք, ո՞ւր է ողջակէզ ընելու ոչխարը»։ Պատասխանեց Աբրահամ. «Մի հոգար, որդեակ, Աստուած կը պատրաստէ մեզի», ու առաջ գնացին։

Երբ տեղն հասան, Աբրահամ սեղան շինեց, վրան շարեց փայտերը. վերջը զԻսահակ ալ կապեց, և սուրը քաշեց որ զոհէ. յանկարծ հրեշտակ մ՚երևցաւ յերկնից և ըսաւ. «Աբրահամ, Աբրահամ, մի՛ վնասեր որդւոյդ. հիմա իմացայ թէ երկիւղած ես յԱստուծոյ, և իրեն հնազանդելու համար մինչև միակ որդւոյդ ալ չխնայեցիր»։ Դարձուց Աբրահամ աչքը, տեսաւ խոյ մը որ եղջիւրներէն կախուած էր ծառի մը վրայ. առաւ և որդւոյն տեղ ողջակէզ ըրաւ։ Այս զոհին վրայ օրհնեց Աստուած զԱբրահամ և ըսաւ. «Որովհետև հնազանդեցար ինծի, քու ցեղդ պիտի օրհնեմ և երկնից աստղերէն աւելի պիտի բազմացընեմ»։

---

1. Քանի՞ զաւակ ունեցաւ Աբրահամ։
2. Աբրահամ ինչո՞ւ ճամբեց զԱգար։
3. Ի՞նչ զոհ հրամայեց Աստուած Աբրահամու որ մատուցանէ իրեն։

ԳԼՈՒԽ ԻՆՆԵՐՈՐԴ

ԻՍԱՀԱԿ

(ամք 1874 նախ քան զԲրիստոս)

1. Սառա 127 տարուան էր երբ մեռաւ ի Քեբրոն քաղաք, Քանանացւոց երկրին մէջ. Աբրահամ ալ Մամբրէի դիմաց երկու այր գնեց և հոն թաղեց զՍառա մեծ սգով։

2. Աբրահամ տեսնելով որ ինքն ալ ծերացեր է, կոչեց զԵղիազար իւր տան հազարապետն, և երդմնեցուց՝ որ չըլլայ թէ այլազգի կին առնու իւր Իսահակ որդւոյն. այլ Միջագետք երթայ, իւր հայրենիքը, և հոն իւր տունէն և ազգատոհմէն աղջիկ մը բերէ Իսահակայ կնութեան։ Հաւատարիմ ծառայն երդուաւ, առաւ տասն ուղտ, ոսկի, արծաթ և շատ ընծայներ, ու գնաց։

Երբ Նաքովրայ քաղաքն հասաւ, պարսպէն դուրս

ջրհորի մը քով կանգ առաւ և ուղտերն հանգչեցուց. և հոն Աստուծոյ աղօթք ըրաւ, խնդրեց որ երբ քաղաքին աղջկունք գան իրենց սափորներով ջուր առնելու համար, որ աղջկան որ ինքն ըսէ թէ ինծի քիչ մը ջուր տուր, և նա մէկէն խմցընէ և իւր անասնոց ալ ջուր տայ, այն աղջիկն է՝ զոր Աստուած պատրաստած է Իսահակայ համար։

3. Եղիազար հազիւ թէ աղօթքը լմնցուց, եկաւ Ռեբեկա, Աբրահամու եղբօրորդւոյն աղջիկն և իւր սափորով ջրհորէն ջուր առաւ։ Եղիազար խմելու ջուր խնդրեց, Ռեբեկա մէկէն ուսէն վար իջեցուց սափորը, խմցուց և իւր անասնոց ալ ջուր տուաւ։ Այն ատեն Եղիազար հարցուց թէ ո՞վ է. և երբ իմացաւ՝ շնորհակալութեամբ փառք տուաւ Աստուծոյ, հանեց ոսկի գինդեր՝ անոր ականջները դրաւ, և ոսկի ապարանջանք անցուց ձեռքը. Ռեբեկա ալ ուրախութեամբ տուն գնաց։ Լաբան անոր եղբայրն երբ տեսաւ և եղածն իմացաւ, վազեց՝ տուն կոչեց Եղիազարն և կերակուր հանեց. բայց նա չուզեց ուտել՝ մինչև ըսելիքը չզրուցէ և ինչ բանի համար եկած ըլլալը չիմացընէ. անոնք երբ լսեցին, Աստուծոյ բանն է ըսին՝ և հաւանեցան։ Եղիազար այն ատեն շատ ընծայներ տուաւ Ռեբեկայի, և իւր մօրն ու եղբօր՝ Լաբանու, և վերջը զՌեբեկա և անոր նաժիշտները հետն առած՝ դարձաւ առ Աբրահամ։

Երբ մօտեցան քաղաքին, Իսահակ դաշտն ելած կը շրջէր. տեսաւ գինքը Ռեբեկա և հարցուց Եղիազարի թէ ո՞վ է. և երբ իմացաւ թէ Իսահակն է, վար իջաւ ուղտէն և մեծարանքով գիմաւորեց։ Շատ ուրախացաւ Իսահակ, զինքն իրեն կին առաւ և մխիթարեցաւ իւր մօր Սառայի մահուան վրայ։

---

1. Սառա քանի՞ տարի ապրեցաւ և ո՞ւր մեռաւ։

2. Աբրահամ իւր որդւոյն Իսահակայ համար ո՞ր ազգէն կին ուզեց առնուլ։

3. Եղիազար ո՞ր աղջիկն ընտրեց Իսահակայ կնութեան համար։

ԳԼՈՒԽ ՏԱՍՆԵՐՈՐԴ

ՅԱԿՈԲ ԵՒ ԵՍԱՒ

(ամբ 1854 նախ քան զԲրիստոս)



1. Իսահակ երկու որդի ունեցաւ Ռեբեկայէ, Եսաւ և Յակոբ։ Յակոբ հեզահոգի էր, Եսաւ բնութեամբ խիստ. և որովհետև անդրանիկն էր, իրեն կ'ընկնէր թէ ժառանգութիւնն և թէ հայրական օրհնութիւնը։ Օր մը Եսաւ որսէն յոգնած տուն դարձաւ և տեսաւ որ Յակոբ ոսպէ ապուր եփած էր՝ և ուզեց։ Յակոբ ալ ըսաւ. «Եթէ անդրանկութեանդ իրաւունքն ինծի տաս, կու տամ»։ Եսաւ անդրանկութիւնն արհամարհեց ու տուաւ և ոսպնաթանն առաւ կերաւ։

2. Իսահակ շատ կը սիրէր զԵսաւ, վասն զի ճարտար որսորդ մ'էր, հոր սիրած կերակուրը կը պատրաստէր։ Օր մ'ալ կոչեց Իսահակ զԵսաւ և հրամայեց որ որս բերէ, որպէս զի ուտէ և վերջին հայրական օրհնութիւնը տայ։ Ռեբեկա զայս իմանալով, դաշտ ղրկեց զՅակոբ՝ զոր քան զԵսաւ աւելի կը սիրէր, որ ուլ մը բերէ, եփեց

և Եսաւայ զգեստն անոր հագցուց, ուլին մորթն անոր թևերուն և վզին յարմարցուց, որպէս զի Եսաւայ նմանի, որ շատ մազոտ էր. և կերակուրը տուաւ որ հոր տանի։ Իսահակ Յակոբայ ձայնը լսելուն պէս տարակուսեցաւ. բայց անոր ձեռները չոշափելով խաբուեցաւ, վասն զի ծերութենէ ալ չէր տեսներ, և վերջին օրհնութիւնը տուաւ։ Յակոբ հոր քովէն հազիւ մեկներ էր, մտաւ Եսաւ իւր պատրաստած որսովն՝ և հայրական վերջին օրհնութիւնն ուզեց. զարմացաւ Իսահակ, և հարցուց թէ ո՞վ էր այն որ քիչ մ'առաջ եկաւ, օրհնութիւնն առաւ։ Այն ատեն իմացաւ Եսաւ. և կրկին խաբուելուն վրայ սաստիկ սիս պահեց Յակոբայ դէմ և կ'ուզէր ըսպաննել։ Եղբօր ձեռքէն Յակոբ ազատելու համար՝ Մեսոպոտամիայ գնաց, իւր մօրեղբօր Լաբանու քով. տասնուչորս տարի քովն աշխատեցաւ, ի վարձ՝ անոր երկու դստերքն, Լիա և Ռաքէլ, իրեն կին առաւ։

---

1. Իսահակ Ռեբեկայէ քանի՞ որդի ունեցաւ։
2. Եսաւ ի՞նչպէս վաճառեց իւր անդրանկութիւնը։

ԳԼՈՒԽ ՄԵՏԱՍԱՆԵՐՈՐԴ

ՅԱԿՈԲԱՅ ԴԱՐՁԸ

(ամք 1757 նախ քան զԲրիստոս)

1. Յակոբ Լաբանու քով քսան տարի կենալէ վերջ, տեսնելով որ իւր ոչխարներն ու կենդանիներն այնչափ բազմացեր են որ Լաբանու և անոր որդւոց նախանձը կը շարժէր, միտքը դրաւ իւր երկիրը դառնալ:

2. Օր մը, մինչդեռ Լաբան հեռու տեղ մը գնացեր էր, Յակոբ գաղտուկ առաւ իւր ընտանիքը, տղայքն ու բոլոր ունեցածը. և ճամբայ ելաւ: Տեղ մը հասան և հոն հանգչեցան. նոյն գիշեր Աստուծոյ հրեշտակ մ'եկաւ և Յակոբայ հետ մենամարտեցաւ մինչև առաւօտ, և յաղթել չկարենալով՝ անոր սրունքի ջիլը թմրեցուց՝ որ սկըսաւ կաղալ. բայց Յակոբ չթողուց հրեշտակը մինչև որ զինքը չօրհնէ. հրեշտակն ալ օրհնեց և անունը փոխեց Իսրայէլ դրաւ, որ աստուածատես ըսել է. անոր համար Եբրայեցիք Իսրայելացիք ալ կ'ըսուին:

3. Երբ երկիրը մօտեցաւ, լսեց Յակոբ թէ Եսաւ եղբայրը չորս հարիւր հոգւով իւր դէմ կու գայ. սաստիկ վախցաւ և շատ ընծայներ տուաւ իւր մարդկանց ձեռքն՝ որ երթան Եսաւայ պատարագ տանին և սիրտն առնուն: Երբ մօտեցաւ Եսաւ, Յակոբ եօթն խումբ բաժնեց իւր կանայքն ու տղայքը, և անոնցմէ առաջ անցնելով՝ գնաց եօթն անգամ երկրպագութիւն ըրաւ եղբօրն և ողջունեց. հետը եղողներն ալ նոյնպէս ըրին: Այս որ տեսաւ Եսաւ, գութը շարժեցաւ, վազեց Յակոբն համբուրեց լալով: Տեսնելով Յակոբայ որդւոց բազմութիւնը, ուրախակից եղաւ, սիրով ընդունեցաւ անոր զրկած ընծայքն և ուզեց մէկտեղ դառնալ. բայց Յակոբ չնորհակալ եղաւ, չուզեց, վասն զի կամաց կամաց կ'ուզէր երթալ իւր մանր տղայոց և անասնոց պատճառաւ:

4. Երբ Յակոբ Քեբրոն հասնելու մօտ էր, ճամբուն վրայ Ռաքէլ Բենիամինը ծնանելու ատեն մեռաւ, և հոն Եփրաթայի ճամբուն վրայ թաղուեցաւ. Յակոբ ալ արձան կանգնեց, որ Շիրիմ Ռաքէլի ըսուեցաւ, և յետոյ Բեթղեհեմ:

5. Յակոբ Քեբրոն եկաւ իւր Իսահակ հօր քով, և զինքը ողջ գտաւ, որ քանի մը տարի ալ ապրելով՝ 180 տարուան վախճանեցաւ, և իւր երկու որդիքն Յակոբ և Եսաւ թաղեցին զինքը՝ իւր հարց գերեզմանին մէջ:

6. Յակոբայ որդիքը տասնուերկու էին, և անոնցմէ ձևացան Իսրայելացւոց երկոտասան ցեղերն: Յակոբայ որդւոց անուններն էին Ռուբէն, Շմաւոն, Ղևի, Յուդա, Դան, Նեփթաղիմ, Գադ, Ասեր, Իսաքար, Զաբուղոն, Յովսէփ ու Բենիամին, երկու վերջինքս Ռաքելի որդիքն էին:

---

1. Յակոբ ո՞րչափ ատեն Լաբանու քով կեցաւ:
2. Ի՞նչ տեսիլ տեսաւ Յակոբ:
3. Յակոբ ի՞նչ կերպով Եսաւայ առջև ելաւ:
4. Ո՞ւր վախճանեցաւ Ռաքէլ:
5. Իսահակ քանի՞ տարեկան վախճանեցաւ:
6. Քանի՞ որդի ունեցաւ Յակոբ:

ԳԼՈՒԽ ԵՐԿՈՏԱՍԱՆԵՐՈՐԴ

ՅՈՎՍԵՓԱՅ ԵՐԱԶՆԵՐԸ

(ամք 1746 նախ քան զԲրիստոս)

1. Յակոբ նահապետն իւր որդւոց մէջ զՅովսէփ ամենէն աւելի կը սիրէր և ծաղկեայ գեղեցիկ պատմուճան մը շինել տուած էր իրեն: Եղբայրներն կը նախանձէին Յովսեփայ վրայ, և իրենց նախանձն աւելի սաստկացաւ՝ երբ Յովսէփ իւր տեսած երկու երազները անոնց պատմեց: Առաջինն էր. Յովսէփ տեսեր էր երազի մէջ՝ որ իւր եղբարց հետ որայ կը կապէին դաշտի մը մէջ. յանկարծ իւր որայն կանգնեցաւ և եղբարց որայքն անոր երկրպագութիւն ըրին: Երկրորդ երազն այս էր. տեսեր էր որ արեգակը, լուսինն ու մեծասան աստեղք իրեն երկրպագութիւն կ'ընէին: Այսոր վրայ եղբարց նախանձն յատելութիւն փոխեցաւ և իրենց վրէժը հանելու առթի մը կը սպասէին:

2. Անգամ մը եղբարքն Սիւքեմ հեռու տեղ գնացեր էին ոչխար արածելու համար. Յակոբ հայրերնին իրենցմէ լուր չառնելով՝ և տեսնելով որ կ'ուշանան, զՅովսէփ ղրկեց որ երթայ զիրենք գտնէ և տեղեկութիւն բերէ: Երբ եղբարքը զինքը հեռուէն տեսան, «Ահա երազատեսը կու գայ, ըսին, սպաննենք զինքը»: Բայց Ռուբէն զինքը անոնց ձեռքէն ազատելու մտօք՝ ըսաւ. «Մեղք է եթէ սպաննենք. ցամաք հորի մը մէջ նետենք»: Անոնք ալ հաւանեցան, բռնեցին զՅովսէփ և ջրհորի մը մէջ իջուցին ուր ջուր չկար:

3. Քիչ վերջը բազմութիւն մարդկան տեսան որ դէպ իրենց կու գային. ասոնք խմայելացի վաճառականք էին որ բեռնաւորած ուղտերով Եգիպտոս կ'երթային, խունկ, ուռին և զմուռս կը տանէին: Մէկէն զՅովսէփ անոնց վաճառելու խորհուրդը մտքերնին ընկաւ, և հետերնին դաշնադրեցին, քսան արծաթոյ իրենց տուին զՅովսէփ. անոնք ալ Եգիպտոս Պետափրէս անուամբ Փարաւոնի դահճապետին ծախեցին զինքը:

Ռուբէն՝ որ եղբարց քով չէր երբ զՅովսէփ վաճառեցին, եկաւ ջրհորին քով, ու չգտնելով զինքը, վազեց հարցուց եղբարց թէ ի՞նչ եղաւ Յովսէփը, և երբ իմացաւ, սաստիկ տրտմութենէ զգեստները պատռեց և լացաւ: Եղբարքն ալ Յովսեփայ ծաղկեայ պատմուճանն առին, այծու արեան մէջ թաթաւեցին և տարին Յակոբայ ցուցին, ըսելով՝ թէ այսպէս գտանք դաշտի մէջ: Յակոբ ճանչցաւ իւր որդւոյն պատմուճանն, ու «Գազան մը կերաւ որդիս» ըսելով՝ անդադար կ'ողբար ու կու լար. բոլոր ընտանիքն եկան զինքը մխիթարելու համար, բայց չուզեց մխիթարուիլ:

---

1. Յակոբ նահապետ իւր որդւոց մէջ ամենէն աւելի զո՞վ կը սիրէր:
2. Յակոբ զՅովսէփ ինչո՞ւ համար ղրկեց:
3. Յովսեփայ եղբարքն ինչո՞ւ համար զինքը ջրհորէն հանեցին:

ԳԼՈՒԽ ԵՐԵՔՏԱՍԱՆԵՐՈՐԴ

ՅՈՎՍԵՓ ՓԱՐԱՒՈՆԻ ԵՐԱԶՆԵՐԸ ԿԸ ՄԵԿՆԷ

(տմբ. 1723 նախ քան զԲրիստոս)



1. Ատուած Յովսեփայ հետ էր՝ ուր որ կ'երթար. Պետափրէս ալ տեսնելով Յովսեփայ իմաստութիւնն ու հաւատարմութիւնը, զինքն իւր տան հազարապետ ըրաւ, և ամեն իշխանութիւն իւր ձեռքը տուաւ:

Պետափրեսի կինն ուզեց զՅովսէփ մոլորցընել ու մեղաց մէջ ձգել, բայց ինքն յանձն չառաւ ու փախաւ քովէն. այն ատեն կինը զրպարտութեամբ բոլոր յանցանքը Յովսեփայ վրայ ձգեց. էրիկն ալ հաւատալով՝ բանտ դնել տուաւ զՅովսէփ: Բանտապետն ալ քիչ ատենէն տեսնելով Յովսեփայ իմաստութիւնը, բանտն անոր ձեռքը յանձնեց. հոն կային նաև թագաւորին երկու ծառայքն՝ որ յանցանքի մը համար պատժուեր էին. Ատենք օր մը երազ տեսնելով շատ այլայլեր էին. Յով-

սէփ քովերնին. մօտեցաւ, քաղցրութեամբ պատմել տուաւ՝ և երազնին մեկնեց, և ինչպէս որ ըսաւ, նոյնպէս ալ կատարուեցաւ:

2. Երկու տարի վերջը Փարաւոն երազ տեսաւ ու խռովեցաւ. քնոյն մէջ իրեն երևցեր էր՝ թէ Նեղոս գետոյն եզերքն եօթն գեղեցիկ ու պարարտ կովեր կ'արածէին. վերջը եօթն վատոյժ ու զազիր կովեր ելան առաջինքը կլլեցին: Արթնցաւ Փարաւոն ու նորէն քնացաւ. տեսաւ որ մէկ արմատէն եօթն պարարտ ցորենի հասկեր ելան, վերջը եօթն հատ ցամաք հասկեր որ առաջինքը կլլեցին: Փարաւոն մէկէն իւր իմաստուններն ու մոգերը կոչեց, բայց մեկնութիւն մը չկրցան տալ: Այն ատեն խմցուցին Յովսեփայ համար՝ թէ երազները ճիշդ կը մեկնէ. կոչել տուաւ ու պատմեց իւր տեսած երազները:

Պատասխան տուաւ Յովսէփ, թէ երկու երազներն ալ նոյն բանը կը նշանակեն. եօթն գեղեցիկ կովերը և եօթն գեղեցիկ հասկերը՝ եօթն առատութեան տարի կը նշանակեն. անոնցմէ վերջը պիտի գան եօթն սովոյ տարիներ՝ որ առաջին եօթն առատութեան տարիներն պիտի մոռցընեն. ուստի ըսաւ թագաւորին. «Պէտք է որ խելացի մարդ մը գտնես, որ առատութեան տարիներու մէջ ցորեն ժողովէ ու պահէ սովոյն համար»: Փարաւոն զարմանալով Յովսեփայ իմաստութեան վրայ, «Ամբողջ թագաւորութեանս մէջ՝ քեզմէ աւելի խելացի մարդ չկայ, ըսաւ, որ այս գործը կարենայ կատարել. դու ըլլաս իմ երկրորդս ու հրաման տաս բոլոր Եգիպտոսի վրայ»: Եւ իւր մատանին հանելով՝ Յովսեփայ մատն անցուց, ու փառաւոր հագուստով՝ թագաւորական կառաց մէջ՝ Եգիպտոսի ամեն քաղաքները շրջեցընել տուաւ:

Յովսէփ ուր որ գնաց՝ անթիւ շտեմարաններ շինել տուաւ, և բոլոր երկրին ցորենը ժողովեց. երբ անցան առատութեան եօթն տարիները և սովն եկաւ, այն ատեն ամենայն մարդ Յովսեփայ կը դիմէր ու դրամով ցորեն կ'առնուր:

---

1. Պետափրէս ի՞նչ գործ յանձնեց Յովսեփայ:
2. Ի՞նչպէս ելաւ Յովսէփ բանտէն:

064

ԳԼՈՒԽ ՁՈՐԵՔՏԱՍԱՆԵՐՈՐԴ

ՅՈՎՍԷՓ ԶԻՆՔՆ ԻՒՐ ԵՂԲԱՐՑ ԿԸ ՅԱՅՏՆԷ

(ամք 1714 նախ քան զՔրիստոս)



1. Սովը սաստկանալով՝ մինչև Քանանացւոց երկիրն հասաւ. Յակոբ ալ լսելով թէ Եգիպտոս ցորեն կը վաճառուի, հոն ղրկեց իւր որդիքը ցորեն գնելու համար:

Յովսէփ իւր եղբարքը տեսնելով՝ չճանչել ձևացուց ու խստութեամբ խօսեցաւ հետերնին թարգմանով. «Լրտես էք, ըսաւ, երկիրս դիտելու եկեր էք»: Անոնք ալ «Քաւ լիցի տէր, ըսին, Քանանացւոց երկրէն եկանք ցորեն գնելու. մենք ամենս մարդու մը զաւակ ենք, տասնուերկու եղբարք. կրտսերը ծերունի հօրերնուս քով է, ու մէկն ալ կորսուած է»: Այն ատեն ըսաւ Յովսէփ. «Զբսի՞ թէ լրտես էք. չեմ թողուր որ երթաք՝ մինչև ձեր պզտի եղբայրն ալ առջևս չգայ». ու զիրենք բանտ դնել տուաւ: Երկրորդ օրն հանեց, ու Շմաւոնը քովը

պահելով, միւսներուն առատ ցորեն տուաւ ու տեղերնին ղրկեց:

Անոնք գնացին իրենց հօր պատմեցին՝ թէ ի՞նչպէս Եգիպտոսի իշխանը խստութեամբ վարուեցաւ հետերնին, և թէ կ'ուզէ Բենիամինն ալ տեսնել: Հայրերնին նեղացաւ իրենց ըսելով. «Ինչո՞ւ համար պատմեցիք իրեն՝ թէ կրտսեր եղբայր մ'ալ ունիք. Յովսէփ մեռաւ, Շմաւոնը քովս չէ, Բենիամինն ալ կ'ուզէք առնուլ». և չուզեց որ Բենիամին հետերնին երթայ:

Բայց երբ ցորենն սպառեցաւ, ստիպուեցաւ Բենիամինն ալ եղբարց հետ ղրկել. անոնք գնացին Յովսեփայ դիմացն ելան, և բերած ընծայն իրեն մատուցին: Յովսէփ սիրով ընդունեցաւ. հարցուց թէ հայրերնիդ ո՞ղջ է. ու Բենիամինը սիրեց, Շմաւոնն ալ ազատ թողուց:

2. Երկրորդ օրն՝ երբ ճամբայ պիտի ելնէին, հրաման տուաւ Յովսէփ իւր հաղարապետին՝ իւր արծաթէ գաւաթը Բենիամինի խուրձին մէջ պահել. և երբ բաւական հեռացեր էին, մարդ հասուց՝ որ յանդիմանեց զիրենք արծաթէ բաժակը գողնալնուն համար: Անոնք չփոթեցան, ու «Մեռնի, ըսին, որոյ քով որ գտնուի»: Մարդը փնտռեց և Բենիամինի խուրձին մէջ գտաւ. իրենք ալ յուսահատած՝ քաղաք դարձան և Յովսեփայ ոտքն ընկան որ իրենց ծերունի հօր սիրոյն համար ներէ: Յովսեփայ սիրտն ելաւ, հեռացուց քովէն ամենայն մարդ. ու երբ առանձին մնաց եղբարց հետ՝ ըսաւ. «Ես եմ Յովսէփ ձեր եղբայրը». և սկսաւ իրենց լեզուով հետերնին խօսիլ. անոնք այլայլեցան ու վախցան. բայց Յովսէփ զիրենք համբուրեց ու մխիթարեց, և ամենայն պատուով իրենց հօր ղրկեց՝ որ առնուն զինքը Եգիպտոս բերեն:

Յակոբ երբ լսեց՝ սիրտը վառուեցաւ. «Յովսէփս ո՞ղջ է, չմեռած երթամ տեսնեմ զինքն» ըսաւ, ու Եգիպտոս եկաւ. և զՅովսէփ տեսնելով՝ անպատմելի ուրախութեամբ լեցուեցաւ. և քիչ տարի անցնելէն ետքը մեռաւ 147 տարիկան:

---

1. Ի՞նչպէս ընդունեցաւ Յովսէփ իւր եղբարքը:
2. Յովսէփ ի՞նչպէս ճանչցուց զինքն իւր եղբարց:

ԳԼՈՒԽ ՀՆԳԵՏԱՍԱՆԵՐՈՐԴ

ՅՈԲ ԵՐԱՆԵԼԻ

(ամք 1740 նախ քան զԲրիստոս)

1. Այս ժամանակս կ'ապրէր Աւսիդ աշխարհին մէջ Յոբ անուամբ իշխանն՝ աստուածավախ և արդար մարդ մը, եօթն մանչ և երեք աղջիկ զաւակ ունէր. հարստութեանն ալ չափ չկար։ Սատանան միտքը դնելով թէ Յոբայ ցուցած աստուածպաշտութիւնն առ երեսս է, հրաման ուզեց յԱստուծոյ զինքը չարչարելու, իւր հաւատարմութիւնը փորձելու համար. Աստուած ալ հրաման տուաւ. միայն ապպրեց՝ որ անոր անձին չդպչի։

2. Օր մը յանկարծ մէկն է եաւ ըսաւ Յոբայ. «Ձաւակները բոլոր եղներդ, ուղտերդ և էշերդ գողցան և պահապաններն սպաննեցին. ես միայն կրցայ ազատիլ և եկայ պատմել քեզի»։ Հազիւ թէ խօսքը լմնցուց՝ ուրիշ մ'եկաւ, ըսաւ։ «Երկինքէն կրակ իջաւ, ոչխարներդ ու հովիւներդ այրեց. ես միայն մնացի և եկայ պատմել քեզի»։ Շուտով վրայ հասաւ երրորդ մը և ըսաւ. «Որդիքդ և դստերքդ իրենց մեծ եղբօր տունը կ'ուրախանային. յանկարծ մեծ փոթորիկ մ'ելաւ, տունը կործանեց և զամենքը մեռուց»։ Այս որ լսեց Յոբ, ոտք ելաւ՝ պատռեց իւր զգեստն, և գետին ընկնելով Աստուծոյ երկրպագութիւն ըրաւ, և ըսաւ. «Աստուած տըւաւ և Աստուած առաւ, ինչպէս որ կամեցաւ նոյնպէս եղաւ. օրհնեալ ըլլայ իւր կամքը»։

Սատանան տեսնելով թէ այնչափ մեծամեծ չարիք հասցընելէն վերջ՝ Յոբ ամենևին տրտունջ մը չէր հանած, ըսաւ Աստուծոյ. «Հրաման տուր ինծի իւր անձին ալ դպչելու, այն ատեն կը տեսնես՝ թէ ինչպէս կ'անիծանէ զքեզ»։ Աստուծոյ թոյլ տալով՝ Յոբայ գլխէն մինչև ոտքը վէրք ու խոց ելաւ, այնպէս որ Յոբ մարդկան զզուելի եղած՝ ստիպուեցաւ քաղաքէն դուրս աղբիւսի վրայ նստիլ, և խեցւով իր թարախները կը մաքրէր. սակայն այս անտանելի տառապանաց մէջ ոչ երբէք բերանէն գանգատ մը հանեց Աստուծոյ դէմ. անոր հակառակ՝ անդադար գոհութիւն կու տար Աստուծոյ։

3. Լսելով իւր թշուառութիւնն իր երեք բարեկամ թագաւորները, եկան զինքը տեսնելու և մխիթարելու. բայց Յոբ այնչափ խեղճացեր էր՝ որ չկրցան ճանչնալ զինքն, ու օրերով առանց խօսելու կու լային իւր վրայ. Յոբ ալ զիրենք մխիթարեց ըսելով՝ թէ Աստուած իմ համբերութիւնս կը փորձէ։ Յիրաւի՝ տեսնելով Աստուած Յոբայ ամենամեծ հաւատարմութիւնն, եօթն տարի վերջ նորէն առաջին առողջութիւնը դարձուց իրեն, և զինքը օրհնելով՝ առաջինէն աւելի հարստացուց և դարձեալ եօթն մանչ և երեք աղջիկ պարգևեց իրեն։ Ասոր վրայ Յոբ 170 տարի ալ ապրեցաւ, և թոռան թոռն տեսնելով, 248 տարուան վախճանեցաւ։

---

1. Ո՞վ էր Յոբ։
2. Ի՞նչ ձախորդութիւնք պատահեցան Յոբայ։
3. Աստուած ինչո՞վ վարձատրեց Յոբայ համբերութիւնը։

ԳԼՈՒԽ ՎԵՑՏԱՍԱՆԵՐՈՐԴ

ՄՈՎՍԷՍ

(ամք 1589 նախ քան զԲրիստոս)

1. Յակոբ նահապետին մեռնելէն վերջ՝ Իսրայելացիք աստուածային վերնախնամ տնտեսութեամբ այնչափ բազմացան Եգիպտոսի մէջ, որ կը ջանային տեսակ մի անկախութիւն ձեռք բերել՝ իրենց կրօնքն և Աստուածը ազատ պաշտելու։ Այնուհետև թագաւորն և մեծամեծները անոնցմէ սաստիկ վախելով՝ սկսան հալածել. և Փարաւոն հրամայեց մինչև անգամ Իսրայելացւոց ամենայն արու տղայքը գետը ձգել։

2. Ահա հիշդ այս ժամանակին է որ կը ծնանի Մովսէս։ Ղևայ ցեղէն Ամրամ անունով մարդ մը կայտառ ու սիրուն որդի մ՚ունենելով, երեք ամսոյ չափ ծածուկ պահեց. և ալ չկարենալով աւելի պահել, իր կինը պըրտուեայ սապատ մ՚առաւ, ձիւթով օծեց, և տղայն մէջը դնելով՝ Նեղոս գետը ձգեց։ Փարաւոնի դուստրն իր նաժիշտներով լուացուելու եկած ատեն՝ կը տեսնէ սապատը, բանալ կու տայ, և տղան մէջը տեսնելով՝ շատ կը գթայ վրան. Մարիամ՝ տղուն քոյրը, որ գետին եզերքը կեցած կը նայէր՝ թէ ի՞նչ պիտի ըլայ տղուն

վախճանը, մէկէն վազեց և հարցուց իշխանուհւոյն՝ թէ կ՚ուզէ՞ որ կաթնտու կին մը կոչէ, ու գնաց մայրը բերաւ. իշխանուհին ալ իրեն յանձնեց տղան, որ երբ մեծնայ՝ թագաւորական արքունիքը բերէ։ Տղուն անունն ալ Մովսէս դրաւ, որ ջրէ ազատած ըսել է։

3. Մովսէս քառասուն տարի թագաւորական պալատը կենալով, Եգիպտացւոց ամենայն գիտութիւնները սովրեցաւ, բայց իր ազգը չմոռացաւ. և օր մը Իսրայելացւոց այց ելած ժամանակ տեսնելով Եգիպտացի մը որ զԻսրայելացի մը կը ծեծէր, վրան վազեց, սպաննեց և աւազի տակ թաղեց։ Բայց երբ լսեց՝ թէ այս դէպքի վրայ թագաւորը զինքը կը փնտռէ ձերբակալելու համար, Մադիանացւոց երկիրը փախաւ։ Հոն ոչխար արածելու ժամանակ երևեցաւ իրեն Աստուած՝ բռնկած մորենոյ մը մէջէն՝ և ըսաւ. «Մովսէս, Եգիպտոս գնա, և իմ ժողովուրդս ազատէ Եգիպտացւոց ձեռքէն»։ Այլ և այլ նշաններ ալ տուաւ, որպէս զի ժողովուրդն իրեն հաւատայ։

4. Մովսէս, և Ահարոն իր եղբայրն թագաւորին գընացին, որպէս զի ժողովուրդն արձակէ. բայց Փարաւոն ամենևին չուզեց մտիկ ընել. այլ մանաւանդ աւելի չարչարեց Իսրայելացիները։ Աստուած ալ տասն ահաւոր պատիժներ ղրկեց Եգիպտոսի վրայ, որ քիչ օրուան մէջ փճացուց երկիրն. նախ Ա, բոլոր ջրերն արիւն դարձան. Բ, երկիրը գորտերով լեցուեցաւ. Գ, մուկով. Դ, շանաճանճով. Ե, Եգիպտոսի ամէն կենդանիք սատկեցան. Զ, մարդիկներու և մնացած անասնոց վրայ ուռոյցներ ելան. Է, սաստիկ կարկտով արտերն ու բոյսերը փճացան. Ը, անթիւ մարախ ելաւ որ կարկտին մնացածը կերաւ լըմընցուց, Թ, մութ խաւար պատեց բոլոր երկիրը երեք օր շարունակ։

---

1. Ինչո՞ւ Իսրայելացիք հալածուեցան։
2. Ո՞վ էր Մովսէս։
3. Ո՞ւր երևեցաւ Աստուած Մովսիսի։
4. Որո՞նք են Եգիպտացւոց տասն պատիժները։

ԳԼՈՒԽ ԵՕԹՆԵԻՏԱՄՆԵՐՈՐԴ

ԻՍՐԱՅԵԼԱՑԻՈՑ ԵԼՔՆ ՅԵԳԻՊՏՈՍԷ

(ամք 1509 նախ քան զԳՐԻՍՏՈՍ)

1. Փարաւոն թագաւորն երբ այս սոսկալի պատիժներով չզգաստացաւ, այն ատեն Աստուած որոշեց վերջին և ահաւորագոյն պատժով ազատել զԻսրայելացիս յԵգիպտոսէ։ Հրաման տուաւ Մովսիսի՝ որ պատուիրէ ժողովրդեան ճամբայ ելնելու պատրաստուիլ, և ամէն տան մէջ գառն մը մորթուի՝ որոյ արիւնը քսեն դրան սեմոց վրայ. վասն զի գիշեր ժամանակ հրեշտակ մը պիտի իջնէ յերկնից և Եգիպտացւոց ամէն անդրանիկ տղաքը պիտի սպաննէ, բայց այն տուներէն ուր արիւնը քսուած է։ Ժողովուրդը Մովսիսի ըսածը կատարեց. և երբ կէս գիշեր եղաւ՝ մեծ աղաղակ մը լսուեցաւ Եգիպտոսի մէջ. թագաւորէն սկսեալ մինչև խեղճ աղախնոյն անդրանիկ որդիքը մեռած էին։ Ժողովուրդը սարսափած՝ բռնադա-

տեց զՓարաւոն որ ազատ թողու զԻսրայելացիս. անոնք ալ մէկէն ճամբայ ելան դէպ ի Կարմիր ծովը, 600,000 հոգի։ Իրենց առաջնորդն ցերեկ ատեն՝ ամպէ սիւն մ'էր, որ գիշեր ժամանակ կրակէ սիւն կ'ըլլար, և միշտ դիմացնին կ'երթար։

2. Քիչ վերջը Փարաւոն զղջաց Իսրայելացիքն արձակելուն վրայ, և անթիւ զօրքով ետևնէն վազեց՝ որ բռնի ետ դարձընէ։ Իսրայելացիք Կարմիր ծովուն եզերքն էին, յանկարծ տեսան թշնամիքը և սկսան սաստիկ վախել ու Մովսիսի դէմ տրտնջել. բայց Մովսէս «Մի՛ վախէք, կ'ըսէր, Աստուած կ'օգնէ ձեզի»։ Նոյն միջոց ամպեղէն սիւնն Իսրայելացւոց և Եգիպտացւոց մէջ անցաւ և կը խափանէր որ զիրար չտեսնեն. Մովսէս ալ ձեռքի գաւազանաւ ջրոյ զարնելուն պէս՝ ծովը երկու բաժնուեցաւ, և ալիքները պաղած՝ երկու կողմ քարէ պարիսպներու պէս անշարժ կեցան. Իսրայելացիք մէջը մտան և չոր ցամաք ճամբով միւս ափունքն ելան։ Եգիպտացիք ալ ուզեցին ետևէն հասնիլ, ու մէջը մտան. բայց Մովսէս նորէն գաւազանաւ զարնելուն պէս ծովը դարձեալ միացաւ, ու Փարաւոն բովանդակ զօրքը ընկղմեցաւ։

Իսրայելացիք այս մեծ հրաշքը տեսնելով՝ Աստուծոյ շնորհակալ եղան, և երգուան իրեն հաւատարիմ մնալ. վերջը Մովսիսի առաջնորդութեամբ յառաջ գնացին Արաբիոյ անապատին մէջ։

3. Քիչ ատենէն ունեցած պաշարնին սպառեցաւ, ու սկսան Մովսիսի դէմ տրտնջել. Աստուած ալ երեկոյեան դէմ լորամարգի զրկեց անթիւ բազմութեամբ՝ ամպի պէս. երկրորդ առաւօտն ալ՝ ճերմակ ձեան պէս բան մ'ելաւ յերկնից, որ իրենց հացն էր. Իսրայելացիք զարմացած սկսան ըսել Ման հոռ, որ ըսել է, «Այս ի՞նչ է». ասկէց անունը մանանա մնաց. որ ալիւրի հետ խառնած՝ մեղրի համ ունէր։ Քառասուն տարուց չափ՝ որ Իսրայելացիք անապատին մէջ անցուցին, Աստուած այս երկնատուր հացով կը կերակրէր զիրենք։

---

1. Ի՞նչպէս թողուց Փարաւոն Իսրայելացիքը՝ որ մեկնին։
2. Ի՞նչպէս մեռաւ Փարաւոն։
3. Ինչո՞վ կ'ապրէին Իսրայելացիք անապատին մէջ։

ԳԼՈՒԽ ՈՒԹԵՒՏԱՍՆԵՐՈՐԴ

ԻՍՐԱՅԵԼԱՑԻՈՑ ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐ ՕՐԷՆՔԸ ԵՒ ԻՐԵՆՑ ԿՌԱՊԱՇՏՈՒԹԻՒՆԸ

(տէր 1507 նախ քան զՔրիստոս)

1. Երեք ամիս վերջը երբ Իսրայելացիք Սինա լեռան ստորոտն հասան, Աստուած երևեցաւ Մովսիսի և ըսաւ թէ կ'ուզէ ժողովրդեան օրէնք տալ. հրամայեց իրեն Սինա լեռան ծայրն ելնել, անոր ստորոտն ալ չորս կողմ սահման դնել, որպէս զի ոչ մարդ, և ոչ անասուն անդին անցնի:

Առաւօտանց Սինա լեռն ամպով ծածկուած երևեցաւ, որոտմունքով և կայծակով կը ծխէր ու կը բորբոքէր, ժողովուրդը վախցաւ. Աստուած նոյն միջոցը տասն պատուիրանները տուաւ Մովսիսի, և ժողովուրդն ալ երդուաւ այն պատուիրանները ճշդիւ պահել:

2. Քանի մ'օր վերջ Մովսէս Աստուծոյ հրամանաւ

դարձեալ լեռան ծայրն ելաւ, և քառասուն օր կեցաւ հոն: Ժողովուրդն իւր ուշանալուն համար նեղուելով՝ դիմեց Ահարոնի վրայ սպառնալեօք ու ըսաւ. «Եգիպտոս դառնանք, վասն զի չենք գիտեր՝ թէ ի՞նչ եղաւ այն Մովսէսն որ զմեզ Եգիպտոսէ հանեց»: Ահարոն ալ հրամայեց որ իրենց կանանց և աղայոց ոսկի գինդերը բերեն. և անոնցմով որթ մը ձուլեց. առջևը սեղան մը շինեցին ու զոհ ըրին, և սկսան ուրախութեամբ պար բռնել:

3. Աստուած շատ բարկացաւ, և ըսաւ Մովսիսի. «Շո՛ւտ վար իջիր վասն զի անօրինեցաւ ժողովուրդը». ու քիչ մնաց որ բոլոր ժողովուրդը սպաննէր, եթէ Մովսէս աղաչանքով ու պաղատանքով Աստուծոյ արդար բարկութիւնը չիջեցընէր: Մովսէս՝ երկու քարէ տախտակները ձեռքն առած, երբ լեռնէն վար կ'իջնէր ու բանակին մօտեցեր էր, տեսնելով որթն ու պարը՝ սաստիկ բարկութենէն ձեռքի քարերը վար ձգեց, խորտակեց: Վերջը մտաւ բանակը, որթը կործանեց ու այրեց, և մանր մանր ջարդելով՝ ջրոյն մէջ ցանեց ու ժողովրդեան խմցուց. և բանակին մէջ կեցած, «Ո՞վ որ Աստուծոյ կողմն է, քովս գայ» ըսաւ. մէկէն քովը ժողովեցան Ղեւեայ ցեղը. ըսաւ անոնց Մովսէս. «Այս է Աստուծոյ հրամանն՝ որ իւրաքանչիւր ոք իւր սուրն առնու, և բանակին մէջէն անցնելով՝ սպաննէ, ազգական և բարեկամ չնայելով». այսպէս 3000 հոգի սպաննուեցան նոյն օրը:

Վերջը Մովսէս երկու քարէ տախտակ շինել տուաւ առաջին տախտակաց նման՝ որոց վրայ Աստուած իւր ձեռքով տասնաբանեայ պատուիրանքը գրած էր, ու վրան գրեց Աստուծոյ տուած օրէնքները:

---

1. Ի՞նչպէս տրուեցան տասնաբանեայ պատուիրանները:
2. Ի՞նչպէս կռապաշտեցան Իսրայելացիք:
3. Աստուած ի՞նչպէս պատժեց Իսրայելացւոց կռապաշտութիւնը:

ԳԼՈՒԽ ԻՆՆԵԻՏԱՍՆԵՐՈՐԴ

ԼՐՏԵՍԱՅ ԴԱՐՁԸ

(ամք 1506 նախ քան զԲրիստոս)

1. Իսրայելացիք Սինա լեռնէն ճամբանին շարունակելով՝ դէպ ի աւետեաց երկիրը գնացին. և երբ մօտեցան՝ Մովսէս տասնուերկու ցեղէն մէկ մէկ հոգի ղրկեց որ երթան զննեն՝ թէ ինչպիսի երկիր է։ Անոնք գնացին, և երկրին ամէն տեսակ պտուղներէն հետերնին առնելով, խաղողի ողկոյզ մ՚ալ բերին զոր երկու հոգի հազիւ կը վերցընէին։ Ժողովուրդն երբ տեսաւ՝ զարմացաւ երկրին բարեբերութեան վրայ. բայց լսելով անոնցմէ թէ քաղաքներն զօրաւոր են, և թէ իրենք տեղացի բնակչաց քով մարախի պէս են, սկսան վախել ու խորհուրդ ընել որ առաջնորդ մ՚ընտրեն ու Եգիպտոս դառնան. միայն Յեսու և Քաղէբ գնացողներու մէջէն սիրտ կու տային որ չվախեն, բայց չհաւանեցան, ու կատղած Մովսիսի

վրայ վազեցին որ քարկոծեն։ Աստուած այն տեղն ամպով մը ծածկեց զՄովսէս ու անոնց ձեռքէն ազատեց. բայց Իսրայելացւոց վրայ բարկանալով՝ հրամայեց որ Եգիպտոսէ ելնողներէն քսան տարեկանէ վեր մէկն ալ աւետեաց երկիրը չմտնէ, Յեսուէն ու Քաղէբէն զատ։ Ուստի ճամբանին փոխել տուաւ դէպ ի Կարմիր ծով, և քառասուն տարի անապատի մէջ շրջեցուց, ուր ամենքը մեռան։

Շատ տարի վերջ դարձեալ Սին անապատն եկան, և ժողովուրդը ջուր չգտնելով սկսաւ տրտնջել։ Աստուած Մովսիսի հրամայեց որ դիմացի ապառաժ ժայռէն ջուր բղխեցընէ. Մովսէս ալ ձեռքի գաւազանաւ երբ պիտի զարնէր՝ ըսաւ տարակուսելով. «Այս քարէս ջուր պիտի հանէ ձեզ Աստուած». ու կրկին անգամ զարկաւ, և սկսաւ առատ ջուր ելնել։ Բայց այս բանիս համար Աստուած նեղացաւ Մովսիսի ու պատիժ տուաւ որ աւետեաց երկիրը չմտնէ, և այս պատճառաւ ջրոյն անունը դրին Ջուր բաղդատանաց։

2. Իսրայելացիք Եգիպտոսէ ելնելուն քառասներորդ տարին Հոր լերան ստորոտն հասան. Աստուած Մովսիսի իմացուց թէ Ահարոնի վախճանն հասած է. ուստի Մովսէս զինքը լերան վրայ հանեց, հոն քահանայապետական զգեստներն անոր Եղիազար որդւոյն հագուց և հօրը տեղ քահանայապետ կարգեց. և հոն մեռաւ Ահարոն 123 տարուան. Իսրայելացիք երեսուն օր սուգ բռնեցին Ահարոնի մահուան վրայ։

Երբ Յորդանան գետոյն քով հասան, որ աւետեաց երկրին սահմանն էր, Աստուած հրամայեց Մովսիսի զՅեսու իւր տեղ Իսրայելացւոց վրայ առաջնորդ դնել։ Մովսէս շատ խրատներ տուաւ, օրհնութիւններ կարդաց ժողովրդեան վրայ, և Աստուծոյ հրամանաւ Նեբաւ լեռն ելնելով՝ անոր բարձրէն Աստուած ցրցուց իրեն աւետեաց երկիրը, ուր վախճանեցաւ ու թաղուեցաւ 120 տարուան։ Ժողովուրդն երեսուն օր սուգ բռնեց իւր մահուան վրայ։

---

1. Ո՞րչափ տեղն անապատին մէջ շրջեցան Իսրայելացիք։

2. Ո՞ւր վախճանեցան Ահարոն և Մովսէս։

ԳԼՈՒԽ ՔՍԱՆԵՐՈՐԴ

ԻՍՐԱՅԵԼԱՑԻՔ ՅՈՐԴԱՆԱՆ ԳԵՏԷՆ Կ'ԱՆՑՆԻՆ

(ամք 1467 նախ քան զԲիբիստոս)

1. Մովսէս մարգարէին մեռնելէն վերջ՝ Յեսու Աստուծոյ հրամանաւ ապսպրեց ժողովրդեան՝ որ պատրաստուին Յորդանան գետէն անցնիլ՝ աւետեաց երկիրը մրտնելու համար:

Երկու լրտես ալ ղրկեց որ Երիքով քաղաքն երթան, տեղւոյն և բնակչաց որպիսութիւնը քննեն. անոնք գընացին ու տեղեկացան, և Ռախաբ անուանով կնոջ մը տունն իջան: Երիքովի թագաւորն երբ իմացաւ, մարդ ղրկեց որ լրտեսները բռնեն. բայց Ռախաբ զանոնք ապահով տեղ մը պահեց ու եկող խնդրակաց ուրիշ համբայ մը ցըցուց՝ ըսելով թէ ասկէ երան գնացին: Երբ բաւական հեռացեր էին, տան պատուհանէն՝ որ պարսպին վրայ շինուած էր, չուանով մը վար իջեցուց լըրտեսները և գաղտուկ համբայ դրաւ, աղաչելով՝ որ երբ Իսրայելացիք Երիքովն առնուն, իրեն խնայեն. լրտեսներն ալ ապսպրեցին՝ որ կարմիր չուան մը կապէ պատուհանին վրայ, որպէս զի ճանչցուի ու տունը չկործանեն:

2. Յեսու լրտեսներուն բերած լրովն աւելի քաջալերուած՝ հրամայեց ժողովրդեան որ բանակը վերցընեն և դէպ ի Յորդանան գետ առաջ երթան. քահանայք ալ տապանակն առջևէն բարձած՝ երբ եկան ոտներնին Յորդանան ջրոյն դպցուցին, յանկարծակի երկու մասն բաժնուեցաւ գետը. վերին ջուրը պարսպի պէս բարձրացած դիզուած անշարժ կեցաւ, իսկ ստորին ջուրը Մեռեալ ծովը ժողովեցաւ. քահանայք չոր ցամաք ճամբով գնացին գետոյն միջավայրը կեցան տապանակով, մինչև բոլոր Իսրայելացւոց բանակն անցաւ: Յեսու հրամայեց՝ տապանակին կեցած տեղը տասուերկու մեծ քարեր ձգել գետոյն մէջ, տասուերկու ցեղից անկէ անցնելուն յաւիտենական յիշատակ: Երբ տապանակը գետէն դուրս ելաւ, նորէն միացաւ Յորդանան և առաջուան պէս սկըսաւ իւր ընթացքը շարունակել: Ժողովուրդն այս մեծ հրաշքը տեսնելով, Մովսէսի պէս սկսաւ Յեսուէն ալ պատկառիլ ու վախել:

3. Յորդանան գետոյն միւս ափունքն անցնելուն պէս՝ մանանայ իջնելը դադարեցաւ. Իսրայելացիք ցորենէ հաց սկսան ուտել, ու հոն ցորենէ շինուած բաղարջ հացով իրենց առաջին զատիկը կերան:

---

1. Աւետեաց երկիրը մտնելու համար ի՞նչ ըրաւ Յեսու:
2. Ի՞նչպէս անցան Իսրայելացիք Յորդանան գետէն:
3. Յորդանանը անցնելէն վերջ ի՞նչ սկսան ուտել Իսրայելացիք:

ԳԼՈՒԽ ՔՍԱՆԵՐՈՐԴ ԱՌԱՋՆԵՐՈՐԴ

ԵՐԻՔՈՎԻ ԿՈՐԾԱՆՈՒՄՆ

(ամք 1467 նախ քան զՔրիստոս)

1. Երիքով մեծ քաղաք մ՚էր, ամուր ու զօրաւոր պարսպօք պատած։ Անոր թագաւորն և բնակիչներն Իսրայելացւոց Յորդանան գետէն անցնիլը լսելով, մեծ վախ մ՚ընկաւ սրտերնին. և մինչդեռ դռները գոցած ամրացած կեցեր էին, Աստուած Յեսուայ հրամայեց պարապաց չորս կողմն շրջեցընել ժողովուրդը վեց օր շարունակ. օրը մէկ անգամ, քահանայքն ալ տապանակն առջևէն բարձած՝ եօթն փող հնչեցընեն. եօթներորդ օրն՝ եօթն անգամ շրջին և վերջին փողն հնչելու ժամանակ ամենքը միաբերան սկսին աղաղակել։ Այս երբ ըրին, պարիսպներն իրենք իրենցմէ մէկէն կործանեցան, և Իսրայելացիք ամեն կողմէն ներս գիմեցին, բնակիչքը թրէ անցուցին և քաղաքն այրեցին, բայց ի Ռախաբի տունէն։

2. Յեսու Երիքով քաղաքն անիծեց իւր մէջ ունեցած-

ներով, ու խստիւ ապսպրեց՝ որ ոչ ոք բանի մը ձեռք զարնէ ու առնու այս անիծեալ քաղաքէս։ Երիքովը կըրկին չինողին վրայ ալ անէծք կարդաց և ըսաւ. «Անդրանկան հիմունքը դնէ և կրտսերաւ դռները չինէ»։ Ինչպէս որ ալ եղաւ հինգ հարիւր տարի վերջ. Աքիէլ բեթելացին իւր Աբիրոն անդրանկաւը սկսաւ չինել, և ամեն որդիքը մեռան, ու կրտսեր որդւոյն հետ աւարտեց չինութիւնը։

3. Երիքովն առնելէն վերջը՝ Գայի քաղաքին վրայ գընացին. բայց Յեսու իմանալով թէ տկար քաղաք մ՚է, երեք հազար մարդ զրկեց, անոնք գնացին՝ և յաղթուած ետ դարձան։ Յեսու չփութեցաւ ու հարցուց Աստուծոյ այն ձախորդութեան պատճառը. Աստուած ալ յայտնեց՝ թէ յանցանք մը գործուեր է Երիքով քաղաքն առնելու ժամանակ, և ըսաւ. «Եթէ կ՚ուզէք որ մեղքը քաւուի, վիճակ ձգեցէք, յանցաւորը գտէք և տնով ու տեղով այրեցէք»։ Վիճակ ձգեցին, և Յուդայի ցեղէն Աքար անունով զինուորի մը վրայ ընկաւ։ Կոչեց զինքն Յեսու և քաղցրութեամբ հարցուց ըրած յանցանքը. ինքն ալ պատմեց՝ թէ Երիքով քաղաքը կործանելու ժամանակ տեսէր է գեղեցիկ հիւսած վերարկու մը. երկու հարիւր արծաթի երկդրամեան և ձոյլ մը ոսկի յիսուն կշռով գոզցեր և իւր վրանին մէջ հողոյ տակ ծածկեր է։ Յեսու հրամայեց որ երթան առնուն, և Աքարը տնով և ստացուածօք ձորի մը մէջ տանել տուաւ, և հոն քարկոծեցին զիրենք և այրեցին։

---

1. Ի՞նչպէս առնուեցաւ Երիքով քաղաքը։
2. Ի՞նչ անէծք կարդաց Յեսու Երիքովը կրկին չինողին։
3. Ո՞վ էր Աքար և ի՞նչ վերջ ունեցաւ։

ԳԼՈՒԽ ՔՍԱՆԵՐՈՐԴ ԵՐԿՐՈՐԴ

ՅԵՍՈՒ ԱՐԵԳԱԿԸ ԿԸ ԿԵՑԸՆԷ

(ամք 1466 նախ քան զԲրիստոս)

1. Յեսու Աստուծոյ պատուերին հակառակ գործուած այս յանցանքը քաւելէն վերջ՝ երեսուն հազար զօրք դարձեալ Գայի քաղաքին վրայ գնաց, և դարանի մէջ պահեց զօրքը. իսկ ինքն առաւօտը քիչ զօրքով քաղաքին առջև երևեցաւ։ Գայեցիք իրենց թագաւորովն հանդերձ վրանին յարձակեցան. Յեսու փախչիլ ձևացուց և ետ քաշուեցաւ. երբ անոնք ետևնին ընկած՝ քաղաքէն բաւական հեռացեր էին, յանկարծ Յեսուայ պահուրտած զօրքը քաղաքին վրայ դիմեցին, տիրեցին անոր ու այրեցին։ Գայեցիք իրենց քաղաքին ծուխն ու կրակը տեսնելով՝ յուսահատած ետ դարձան. բայց Յեսու փութաց զանոնք երկու կողմէն պաշարել, ու բոլորովին ջնջեց՝ թագաւորն ալ միասին։

2. Այս յաղթութեան վրայ ամէն չրջակայ ազգեր սաստիկ վախի մէջ ընկան, ու միաբանեցան դաշինք գըրին՝ որ ամենայն զօրութեամբ Իսրայելացւոց դէմ ելնեն. միայն Գաբաւոն քաղաքի բնակիչքն տեսնելով որ անհընարին է պատերազմով յաղթել անոնց, հնարք մը մըտածեցին, և իրենց իշխաններն ճանապարհորդի պատառոտուն զգեստներ և մաշած կօշիկներ հագած, ծակոտած գինւոյ տկեր և չորացած որդնոտած հացեր հետերնին, Յեսուայ ներկայացան, ըսելով թէ հեռաւոր աշխարհներէ եկած են ու լսելով Իսրայելացւոց մեծ անուանը՝ կ՚ուզեն հետերնին դաշինք դնել։ Յեսու անոնց խօսքերէն և կերպարանքէն խաբուած, առանց Աստուծոյ խորհուրդ հարցընելու՝ երդուաւ որ վնաս մը չընէ ու բարեկամ ըլլայ անոնց։ Բայց քանի մ՚օրէն իմացաւ՝ թէ մօտաւոր ազգ մի են. ու կոչելով Գաբաւոնացիքն՝ յանդիմանեց գործած խաբէութեանն համար. և որովհետև երդման դէմ չէր կրնար գործել, հրամայեց որ Իսրայելացւոց և Աստուծոյ խորանին ծառայքն ըլլան, փայտ կոտրեն և ջուր կրեն. անոնք ալ յօժարութեամբ յանձն առին։

3. Մերձակայ ազգերն լսելով՝ թէ Գաբաւոնի նման մեծ քաղաք մը անձնատուր եղած է Իսրայելացւոց, զօրքերնին միացուցած՝ յարձակեցան Գաբաւոնացւոց վրայ. անոնք ալ Յեսուայ դիմեցին։ Յեսու առաւօտը կանուխ դիմացնին ելաւ ու մինչև երեկոյ պատերազմեցաւ. և տեսնելով թէ գիշերը վրայ կը հասնի՝ և չպիտի կարենայ զանոնք բոլորովին ջնջել, հրաման տուաւ արեգական ու լուսնի որ տեղերնին անշարժ կենան. անոնք ալ մէկէն ընթացքնին դադարեցուցին, մինչև Իսրայելացիք բոլորովին ջնջեցին իրենց թշնամիքը։

---

1. Յեսու ինչպէս առաւ Գայի քաղաքը։
2. Գաբաւոնացիք ինչ ըրին երբ Իսրայելացւոց քաջութիւնները լսեցին։
3. Ինչո՞ւ Յեսու կեցուց արեգակը։

ԳԼՈՒԽ ՔԱՆԵՐՈՐԴ ԵՐՐՈՐԴ

ԴԵԲՈՎՐԱ

(ամք 1297 նախ քան զԲրիստոս)

1. Յեսուայ մեռնելէն վերջ՝ Իսրայելացիք դատաւոր ըսուած իշխաններով կը կառավարուէին, որոց մէջ եւ բեւելիքն են Դեբովրա, Գեդէոն, Յեփթայէ, Սամփսոն և Սամուէլ։

2. Դեբովրա մարգարէ կին մ'էր. երբ Քանանացւոց Յաբին թագաւորը քսան տարի տիրեց Իսրայելացւոց, Դեբովրա ըսաւ Բարակայ, որ Նեփթալիմի ցեղէն էր, թէ «Աստուած կը հրամայէ՝ որ Թաբոր լեռը երթաս, և Նեփթալիմի ու Զաբուղոնի ցեղերէն տասն հազար հոգի հետդ առնելով՝ երթաս Կիսոնի հեղեղատը՝ Յաբին թագաւորի Սիսարա զօրապետին դէմ»։ Պատասխանեց Բարակ. «Եթէ հետս գաս՝ կ'երթամ»։ Խօսք տուաւ Դեբովրա ու միասին գնացին. Սիսարա բոլոր զօրքերով

եկաւ Կիսոնի հեղեղատը։ Բայց Դեբովրայի ըսածին պէս, Աստուած սաստիկ չփոթութիւն ձգեց մէջերնին և ցիր ու ցան եղան, և Բարակ հալածելով զանոնք՝ զամենքը ջարդեց։

3. Սիսարա փախստեայ՝ Քաբեր կինեցւոյ տունը ապաստանեցաւ, Յայէլ Քաբերայ կինն հանգչեցուց զինքը, կաթ տուաւ որ խմէ, և անոր խնդրածին պէս պառկեցուց զինքը և ծածկեց որ մարդ չիմանայ։ Եւ երբ Սիսարա քնոյ մէջ էր. Յայէլ վրանին ցիցն առաւ և ուժով զարկաւ Սիսարայի գլուխը գետինը գամեց մեռուց։ Բարակ հասաւ և կը փնտռէր զՍիսարա. Յայէլ ներս կոչեց զինքը և ցըցուց։

Այսպէս Աստուած Իսրայելացիքը փրկեց. իսկ Դեբովրա Բարակայ հետ փառք տալով Աստուծոյ՝ շնորհակալութեան գովասանք մը երգեց։

---

1. Յեսուայ մեռնելէն վերջ ո՞վ կ'առաջնորդէր Իսրայելացւոց։
2. Ո՞վ էր Դեբովրա և ի՞նչ գործեց։
3. Ո՞վ սպաննեց զՍիսարա։

ԳԼՈՒԽ ՔՍԱՆԵՐՈՐԴ ԶՈՐՐՈՐԴ

ԳԵԴԷՈՆ

(մաք 1270 նախ քան զՔրիստոս)

1. Մադիանացիք Իսրայելացւոց վրայ պատերազմի ելեր էին. հրեշտակ մ'երևցաւ Գեդէոնի, որ Մանասէի ցեղէն էր, և ըսաւ. «Աստուած զքեզ կ'ընտրէ առաջնորդ՝ Իսրայելի թշնամիներն հալածելու համար»։ Գեդէոն վախելով հրաժարեցաւ. բայց հրեշտակը զինքը քաջալերեց, և ըսաւ. «Աստուած հետդ է»։ Այն ատեն Գեդէոն ուլ մ'առաւ, պատրաստեց և հրեշտակին բերաւ որ ուտէ. բայց նա չուզեց դպչիլ, ու գաւազանաւ զարնելուն պէս բոց մ'ելաւ և այրեց կերակուրը, ու ինքն ալ անհետացաւ։

2. Այս հրաշքով զօրացած Գեդէոն՝ գնաց Իսրայելացւոց այլ և այլ տեղերէ զօրք ժողվեց 30,000 հոգի. բայց պատերազմի չգնացած՝ Աստուծոյ ուրիշ նշան մ'ալ ուզեց. առաւ գզաթ մը և գիշեր ատեն դուրս բացութեայ տեղ փռեց, խնդրելով՝ որ անոր վրայ միայն անձրևէ, իսկ գետինը չոր մնայ։ Առաւօտուն ելաւ՝ գզաթը քամեց և կոնք մը ջուր հանեց. ասոր հակառակ հրաշքն ալ ուզեց, այսինքն՝ գետինն անձրևէ, իսկ գզաթը չոր մնայ. առաւօտուն ամեն տեղ սաստիկ անձրևեր էր և միայն գզաթը չոր մնացեր։ Այս երկու հրաշքներով քաջալերուած՝ թշնամեաց վրայ գնաց. բայց Աստուած «Շատ են զօրքդ, ըսաւ, ով որ վախկոտ է ետ դառնայ»։ Շատերը գնացին, ու մնացին քովը 10,000։ «Դարձեալ շատ են». ըսաւ Աստուած։ Այն ատեն Գեդէոն միայն 300 հոգի պահեց, և ամենուն ձեռքն եղջերէ փող և վառուած լապտեր տուաւ՝ սափորի մէջ պահած, և գիշերանց թշնամւոյն վրայ արշաւեցին, անոնց բանակը մտան, յանկարծակի փողերնին հնչեցուցին ու սափորներն կոտրեցին, ճրագներն դուրս երևեցան և միաբերան սկսան աղաղակել. «Սուր Տեառն և Գեդէոնի»։ Մադիանացիք սաստիկ վախցան ու շփոթեցան. և զիրար թշնամի կարծելով՝ սկսան անխնայ կոտորել մթութեան մէջ, մինչև 120,000 մարդ սպաննեցին նոյն գիշերը։ Յետոյ Գեդէոն հրաման տուաւ իրենցներուն՝ որ փախչողաց ետևէն հասնին և անխնայ ջարդեն։ Որեբ և Զէբ իշխաններն ալ բռնեցին, ու գլուխնին կտրեցին և Գեդէոնի բերին։

Այս կերպով ազատեցան Իսրայելացիք իրենց թշնամեաց ձեռքէն Գեդէոնի առաջնորդութեամբ, որ քառասուն տարի վրանին իշխեց։

---

1. Ո՞վ էր Գեդէոն։
2. Ի՞նչ յաղթութիւն ըրաւ Գեդէոն Մադիանացւոց դէմ։

ԳԼՈՒԽ ՔՍԱՆԵՐՈՐԴ ՀԻՆԳԵՐՈՐԴ

ՅԵՓԹԱՅԷ

(ամբ. 1209 նախ քան զԲրիստոս)

1. Ամոնացի այլազգիք սաստիկ կը նեղէին զԻսրայելայիս. օր մ'ալ Գաղատոյ իշխանք միաբանեցան որ մէկառաջնորդ մ'ընտրեն ու թշնամեաց վրայ պատերազմի ելնեն. գնացին Յեփթայէ անուամբ կարիճ երիտասարդը կոչեցին, որ յանձն առաւ, ու դեսպան ղրկեց Ամոնացւոց թագաւորին՝ թէ «Ինչո՞ւ համար կը նեղես զմեզ»։ Պատասխանեց թագաւորը. «Իմ երկիրներս ետ կ'ուզեմ»։ Յեփթայէ պատգամ ղրկեց՝ թէ «Իսրայելացիք երբ Եգիպտոսէ կ'ելնէին, դուք մեր դէմ ելաք պատերազմաւ. մենք ալ պատերազմական իրաւամբ ստացած ենք այս երկիրս, և 300 տարիէ ի վեր որդւոց որդի կը ժառանգենք»։ Թագաւորը չհաւանեցաւ ու պատերազմի ելաւ. Յեփթայէ իրենները ժողովեց և Աստուծոյ ուխտ ըրաւ՝ որ եթէ Ամոնացւոց յաղթէ, ի դարձին իւր

տունէն ընդ առաջ ելնողներէն առջինն Աստուծոյ զոհէ։ Երկու բանակներն զարնուեցան. և Իսրայելացիք յաղթող ելնելով չարաչար կոտորեցին թշնամիքն, ու անոնցմէ քսան քաղաք առնելով ետ դարձան։

2. Այս յաղթութեան լուրն ամեն տեղ տարածուեցաւ, և մեծ ուրախութիւն պատճառեց։ Յեփթայեայ միամօր դուստրը հօր դառնալը լսելով, ընդ առաջ ելաւ հաստակակից աղջկանց խմբով մը և անթիւ բազմութեամբ, թմբուկ զարնելով և երգելով։ Յեփթայէ երբ տեսաւ սիրտն ելաւ, և ըսաւ «Վա՜յ, դուստր իմ, գիտնայիր՝ ինչպիսի ցաւ կը պատճառէ ինձ զքեզ տեսնելս. ուխտեցի զքեզ Աստուծոյ զոհել, և պարտաւոր եմ կատարել»։ Աղջիկը սիրով յանձն առաւ. միայն երկու ամիս ժամանակ ուզեց՝ որ երթայ լերանց վրայ իւր կուսութիւնը ողբայ. երկու ամսէ վերջ դարձաւ և Յեփթայէ իւր ուխտը կատարեց։ Անկէ վերջ ամեն տարի Իսրայելացւոց աղջկունք նոյն օրը մէկտեղ կը ժողովէին ու չորս օր ողբ և սուգ կը բռնէին Յեփթայեայ դստեր վրայ։

3. Բենիամինի ցեղը բարկացաւ Յեփթայեայ վրայ զիրենք պատերազմի չկոչելուն համար, որոնց պատասխան տուաւ Յեփթայէ. «Ես զձեզ կոչեցի, բայց դուք չեկաք»։ Երբ տեսաւ որ չեն հանդարտիր, այլ աւելի կը զայրանան, վրանին պատերազմի ելաւ, ու մեծ ջարդ տալով՝ 42,000 հոգի անոնցմէ սպաննեց։

Յեփթայէ վեց տարի դատաւորութիւն ըրաւ Իսրայելի վրայ։

---

1. Ո՞վ էր Յեփթայէ, և ինչ յաղթութիւն ըրաւ Ամոնացւոց դէմ։

2. Ի՞նչ ուխտ ըրաւ Յեփթայէ պատերազմ երթալու առնն։

3. Ինչո՞ւ Բենիամինի ցեղին վրայ պատերազմի գնաց։

ԳԼՈՒԽ ՔՍԱՆԵՐՈՐԴ ՎԵՑԵՐՈՐԴ

ՀՌՈՒԹ

(ամք 1150 նախ քան զՔրիստոս)

1. Իսրայելացւոց դատաւորաց ժամանակ, Յուդայի ցեղէն Ելիմելէք անուամբ մէկը սովոյ պատճառաւ իւր Նոոմի կնաւ և երկու որդւովք Մովաբացւոց երկիրը գընաց բնակելու։ Հոն քիչ ատենէն մեռաւ ինքն և իւր երկու որդիքն՝ որ այլազգի աղջիկ առեր էին իրենց կընութեան։ Նոոմի առանձին մնաց տան մէջ՝ իւր երկու հարսներով, որոց միոյն անունն էր Որփա, միւսոյն՝ Հռութ. յետոյ ուզելով իւր հայրենիքը Բեթղեհէմ դառնալ, աղաչեց իւր երկու հարսներուն որ իրենց տունը դառնան։ Որփա շատ դժուարութեամբ և արտասուօք ետ դարձաւ. բայց Հռութ ամենևին չուզեց իւր սկեսրէն զատուիլ. «Մահը միայն կը բաժնէ զիս քեզմէ, ըսաւ. կ'երթամ ուր որ դու կ'երթաս. քու ազգդ իմ ազգս

ըլլայ և քու Աստուածդ իմ Աստուածս». և հետը Բեթղեհէմ եկաւ։ Հոն Ելիմելեքայ ազգական մը կար շատ հարուստ՝ Բոոս անուամբ, որ Նոոմիի տուն մը տուաւ բնակութեան։ Երբ ցորեն հնձելու ժամանակն եկաւ, Հռութ գնաց հնձած ցորենը ժողովելու. Բոոս իմանալով թէ Նոոմիի հարսն է, որ այնչափ սէր ու գութ ցուցեր էր անոր վրայ, հրաման տուաւ Հռութայ՝ որ իւր աղախնաց հետ ուտէ. և հնձողաց ալ ապսպրեց՝ ցորենի հասկերու մնացորդը Հռութայ թողուլ՝ որ ժողովէ տուն տանի։ Նոոմի՝ Բոոսի ըրածը լսելով, հարսին ճամբայ ցըցուց՝ զինք սիրելի ընելու Բոոսի՝ որ իրեն կին առնու. Բոոս ալ Հռութի միտքը հասկնալով՝ չհակառակեցաւ. այլ որովհետև ուրիշ մօտ ազգական մը կար, որուն կ'ընկնէր զՀռութ առնուլ, ուստի քաղաքին մեծերը ժողովեց՝ և անոնց ներկայութեամբն ըսաւ այն ազգականին՝ թէ Նոոմի իւր երկանէն՝ մնացած արտերու մաս մը վաճառել կ'ուզէ, և քեզ կ'ընկնի առնուլ. անոր հետ Հռութն ալ. որպէս զի մեռնողին անկէ ժառանգ մնայ։ Երբ նայանձն չառաւ, այն ատեն Բոոս այն մեծերը վկայ բընելով՝ արտերն ինքն ստացաւ՝ Հռութն ալ միասին և իրեն հարազատ կին ըրաւ, ուսկից որդի մ'ունեցաւ Ովբէթ անուն. և անկէ ծնաւ Յեսսէ, Դաւիթ թագաւորի ու մարգարէի հայրը։

---

1. Ո՞վ էր Հռութ։

ԳԼՈՒԽ ՔՍԱՆԵՐՈՐԴ ԵՕԹՆԵՐՈՐԴ

ՍԱՄՓՍՈՆ

(ամք 1160 նախ քան զԲրիստոս)

1. Իսրայելացիք աստուածպաշտութենէ թուլնալով՝ Աստուած զիրենք քառասուն տարի Փղշտացւոց ձեռքը մատնեց։ Մինչդեռ անոնց ձեռաց տակ կը հեծէին, օր մը հրեշտակ Աստուծոյ երևեցաւ Դանայ ցեղէն Մանովէ անունով մարդու մը կնոջը, և ըսաւ՝ թէ որդի մը պիտի ունենաս որ Աստուծոյ ուխտաւոր պիտի ըլլայ և մազերն ամենևին պիտի չկարուին։ Տղայն երբ ծնաւ ու մեծցաւ, սովորականէ դուրս ոյժ մը սկսաւ երևել իւր վրայ, այնպէս որ տասնևութ տարուան եղած ժամանակ օր մը այգիները քալած առեն առիւծի մը ձագ վրան յարձակեցաւ, ինքն ալ բերնէն բռնեց ու ճեղքեց։

2. Ուրիշ օր մ՚ալ 300 աղուէս բռնեց ու պոչերուն վառած ջահ կապեց և թողուց որ այլազգեաց արտերն երթան, և բոլոր ցորենն այրեց։ Փղշտացիք բարկացած՝

եկանպահանջեցին որ Սամփսոնի ձեռքերը կապուած իրենց մատնուի. Իսրայելացիք ալ առին, ու կապելով՝ թողուցին Ծնօտ կոչուած տեղը. բայց Սամփսոն յանկարծակի չըլանները թօթվեց, և իշու ծնօտ մը գտնելով՝ յարձակեցաւ Փղշտացւոց վրայ և 1,000 հոգի սպաննեց. վերջը ծարաւցաւ, Աստուած ալ նոյն Ծնօտէն ջուր բղխեցոյց ու խմեց։

3. Իսրայելացիք անոր արտաքոյ կարգի ոյժը տեսնելով՝ գինքը դատաւոր ընտրեցին, և գնաց Գազա քաղաքը բնակեցաւ։ Թշնամիք իմացան և գիշերանց եկան պաշարեցին որ սպաննեն. բայց Սամփսոն կէս գիշերին ելնելով՝ քաղաքին դռները տեղէն հանեց սեմովք հանդերձ ու կռնակին վրայ շալկած՝ զիմացի լերան վրայ տարաւ ձգեց։

4. Փղշտացիք յուսահատած՝ անոր Դալիլա կնոջ շատ դրամ և հարստութիւն խոստացան՝ եթէ կարենայ Սամփսոնի ուժոյն գաղտնիքն իմանալ. նա ալ օրերով ազաչեց, մինչև վերջապէս բռնադատեց զՍամփսոն իրեն յայտնելու՝ թէ ինքն ուխտաւոր ըլլալով Աստուծոյ՝ մազերն ոչ երբէք պիտի կարուին. ապա թէ ոչ իսկոյն կը տկարանայ։ Դալիլա օր մը անոր քնացած ժամանակ մազերը կարեց, և այլազգիները կոչելով բռնեցին զինքը, աչքերը կուրցուցին և շղթայակապ աղօրիք մը տարին՝ որ հոն աշխատի։

Ժամանակ անցնելէ վերջ՝ մազերն սկսան բուսնիլ և իւր զօրութիւնն ալ նորէն ածիլ։ Օր մը Փղշտացիք իրենց Դագոն կուռքին մեծ տօնը կը կատարէին, Սամփսոնն ալ ուզեցին մէջ տեղ բերել որ ծաղր ընեն ու զուարճանան. և զինքն երկու սիւներու մէջ կեցուցին՝ որոց վրայ բոլոր շէնքն հաստատուած էր։ Սամփսոն վերջին անգամ մ՚ալ զօրութիւն խնդրեց յԱստուծոյ. և երկու սիւներն ուժով թօթվելով՝ վար ձգեց և պալատը կործանեցաւ, և մէջն եղած այլազգի նախարարներն և իշխաններ 3,000 հոգւոյ չափ իւր հետ մեռան։

---

1. Ո՞վ էր Սամփսոն։
2. Ինչ՞ չարիք հասոյց Փղշտացւոց։
3. Ի՞նչպէս ազատեցաւ Սամփսոն Գազա քաղաքէն։
4. Ի՞նչպէս մեռաւ Սամփսոն։

ԳԼՈՒԽ ՔՍԱՆԵՐՈՐԴ ՈՒԹԵՐՈՐԴ

ՍԱՄՈՒԷԼ

(ամբ 1100 նախ քան զԲրիստոս)

1. Սամուէլ մարգարէն Իսրայելացւոց վերջին դատաւորն եղաւ։ Հեղեայ քահանայապետութեան ժամանակ Սամուէլ՝ Աննայի իւր մօր ուխտակոն զաւակն ըլլալով Աստուծոյ նուիրեցաւ մանուկ հասակէն, և տաճարին մէջը կը ծառայէր։

2. Գիշեր մը մինչդեռ Աստուծոյ տապանակին քովը կը քնանար, ձայն մը լսեց՝ որ կ՚ըսէր. «Սամուէլ, Սամուէլ». արթնցաւ, ու կարծելով թէ Հեղին է որ զինքը կը կոչէ՝ քովը գնաց. բայց Հեղի քաղցրութեամբ ետ դրկեց ըսելով՝ թէ չէ կոչած։ Քնացաւ Սամուէլ, և երկրորդ անգամ նոյն ձայնը լսեց, ու դարձեալ տա Հեղի գնաց. որ իմանալով թէ տեսիլ մ՚է յԱստուծոյ տա Սամուէլ, ըսաւ իրեն. «Եթէ երրորդ անգամ ալ նոյն ձայնը լսես, զբուցէ. Տէր, խօսէ, պատրաստ է քու ծառայդ»։ Սամուէլ գնաց ու երրորդ անգամ ալ նոյն ձայնը լսեց. և ինչ որ Հեղի ապագրեր էր՝ ըսաւ։ Աստուած ալ երևեցաւ իրեն և ըսաւ՝ թէ Հեղեայ տղաքը չար ըլլալով՝ պիտի պատժուին ու մեռնին, և ինքն Հեղեայ տեղ քահանայապետ և առաջնորդ պիտի ըլլայ ժողովրդեան։

3. Այն ատեններն այլազգիք Իսրայելացւոց վրայ պատերազմի ելան. իրենք ալ տապանակը հետերնին առին որպէս զի Աստուած օգնէ իրենց. Ոփնին և Փենեհէս՝ Հեղեայ երկու տղայքն ալ գնացին։ Այլազգիք Աստուծոյ տապանակը տեսնելով՝ շատ վախցան. բայց զիրար խրախուսելով՝ յուսահատաբար պատերազմեցան՝ և 30,000 հոգի սպաննեցին Իսրայելացիներէն, Ոփնի և Փենեհէսն ալ միասին. և տապանակը գերի առին։

Բանակէն մէկը շուտով քաղաքը վազեց՝ այս լուրը տալու։ Հեղի, որ ծերութենէ ալ չէր տեսներ և դրան քով նստեր էր, երբ լսեց իւր որդւոց մահը, և թէ տապանակն ալ գերի ընկած է՝ աթոռէն վար ինկաւ և մեռաւ։

Աստուծոյ տապանակն այլազգեաց շատ վնաս կը հասցներ. անոնք ալ քաղաքէ քաղաք փոխադրեցին. բայց վերջապէս յուսահատած՝ որոշեցին Իսրայելացւոց դարձընել շատ ընծայներով. ասոր վրայ պատիժներն ալ դադարեցան։

4. Սամուէլ՝ ինչպէս Աստուած յայտներ էր իրեն, Հեղի քահանայապետին յաջորդեց, և սկսաւ ժողովուրդը կառավարել, շատ բարիք ընելով անոնց, կռապաշտութիւնը ջնջելով և աստուածպաշտութիւն սորվեցնելով. տարուէ տարի ամեն քաղաք կ՚երթար՝ դատաստան կը կարէր. իսկ իւրաստվորական բնակութիւնն էր Արիմաթեմ։

---

1. Ո՞վ է Սամուէլ։
2. Ի՞նչ յայտնեց Աստուած Սամուէլի։
3. Ի՞նչ վերջ ունեցան Հեղի և իւր տղաքը։
4. Ո՞վ յաջորդեց Հեղեայ։

ԳԼՈՒԽ ՔՍԱՆԵՐՐՈՐԴ ԻՆՆԵՐՈՐԴ

ՍԱՒՈՒԼ

(տկդ 1103–1063 նախ քան զԲրիստոս)

1. Իսրայելացիք չորս կողմերնին բնակող ազգաց օրինակին նայելով՝ իրենք ալ ուզեցին թագաւոր ունենալ. Աստուած ալ Սամուէլի հրամայեց Սաւուղ օծել անոնց թագաւոր: Ուստի Սամուէլ ժողովեց բոլոր ժողովուրդը՝ թագաւոր ընտրելու. վիճակ ձգուեցաւ. և վիճակը Սաւուղայ ելաւ, որ Բենիամինի ցեղէն էր՝ Կիսեայ որդին, և հասակաւ թիզ մը բարձր էր ամենէն: Ժողովուրդը մեծ ուրախութեամբ ընդունեցաւ զինքը, մանաւանդ երբ Ամմոնացոց Նահաս թագաւորն Յաբիս քաղաքին վրայ պատերազմի ելաւ: Սաւուղ երբ լսեց, աստուածային զօրութեամբ վառեալ, երկու եղներ կտոր կտոր ըրաւ, ու Իսրայելացոց զրկեց ըսելով. «Ով որ Սաւուղի և Սամուէլի հետ չի գար, այսպէս կ'ըլլան անոր եղները»: Այսու ամենքն ոտք ելան. Սաւուղ զիրենք երեք խումբ բաժնեց: Մտան Ամմոնացոց բանակը և ցիր ու ցան փախուցին, ու մեծ յաղթութեամբ Գաղգաղա դարձան, ուր Սամուէլ մեծ հանդիսով զՍաւուղ թագաւոր օծեց, ու Աստուծոյ շնորհակալութեան զոհեր մատուցին:

2. Քիչ ատենէն Փղշտացիք Իսրայելացոց վրայ պատերազմի եկան: Սամուէլ ապսպրեց Սաւուղայ՝ որ եօթն օր սպասէ իրեն, ու միասին զոհ մատուցանեն Աստուծոյ. Սաւուղ թշնամիէն վախցած՝ փութացոյց զոհն, որոյ վրայ շատ բարկացաւ Սամուէլ, և Աստուած թողուց որ Սաւուղ յաղթուի. Փղշտացիք եկան երկրին տիրեցին:

3. Ուրիշ անգամ ալ Սամուէլ հրամայեց Սաւուղայ Ամաղեկացոց դէմ երթալ, և անոնցմէ ոչ զոք ազատել, ոչ մարդ ոչ անասուն: Սաւուղ գնաց, ջարդեց, ու խըղճալով անոնց Ագագ թագաւորին վրայ՝ ողջ պահեց. նոյնպէս և անասնոց ընտիրները: Սամուէլ չարաչար յանդիմանեց զՍաւուղ իր անհնազանդութեանն համար. և Ագագ թագաւորն առջևը բերել տալով՝ իր ձեռօք սպաննեց:

4. Աստուած զՍաւուղ երեսէ ձգեց իր պատուիրանները չպահելուն համար, և Սամուէլի հրամայեց՝ որ Բեթղեհէմ երթայ, և Յուդայի ցեղէն զԴաւիթ՝ թագաւոր օծէ: Սաւուղի վրայ ալ դիւահարութիւն մ'եկաւ, ու Դաւիթը կոչեցին՝ որ քնար զարնելով զինքը կը հանդարտեցնէր:

---

1. Ո՞վ եղաւ Իսրայելացոց առաջին թագաւոր:
2. Սաւուղ ի՞նչ պատուէր ընդունեցաւ Աստուծմէ:
3. Ի՞նչ վերջ ունեցաւ Ամաղեկացոց Ագագ թագաւորը:
4. Սաւուղ Աստուծոյ երեսէն ընկնելէն վերջ ո՞վ իր տեղ թագաւոր օծուեցաւ:

ԳԼՈՒԽ ԵՐԵՍՆԵՐՈՐԴ

ՄԱՀ ԳՈՂԻԱԹՈՒ

(ամք 1083 նախ քան զԲրիստոս)

1. Փղշատցիք նորէն պատերազմ բացին Սաուղի դէմ. երբ երկու բանակները դէմ առ դէմ ճակատեր էին, Գողիաթ անուամբ հսկայ այլազգի մը բանակէն ելնելով՝ կ'արհամարհէր Իսրայելի գունդը և կ'ըսէր. «Հանեցէք դիմացս մէկը՝ որպէս զի մենամարտինք. և ով որ յաղթէ, անոր կողմն ըլլայ յաղթութիւնը»: Սարսափեցան Իսրայելացիք, ու քառասուն օր կեցան բանակ բանակի դիմաց. և Գողիաթ ամեն օր կ'ելնէր կը նախատեր Իսրայելացիները: Դաւիթ երբ տեսաւ զԳողիաթ՝ վառուեցաւ սիրտը, և սկսաւ արհամարհել զհսկայն և յանձն կ'առնոյր անոր դէմ ելնել ու յաղթել: Սաուղայ ականջը հասաւ այս դէպքս և առջևը կոչեց զԴաւիթ. և տեսնելով՝ որ պզտիկ է, «Վախեմ թէ չկրնաս» ըսաւ: Դաւիթ պատասխանեց. «Ես իմ հօրս ոչխարներն ա-

բածելու ատեն երբ առիւծ կամ արջ վրայ կու գար ու ոչխար կը յափշտակէր, ես կ'ազատէի. և եթէ վրաս ելնէր, վզէն կը բռնէի, կը սպաննէի. յուսամ որ Աստուծով հիմայ ալ այնպէս կ'ընեմ»: Հաւանեցաւ Սաուղ. և Դաւիթ իւր հովուական գաւազանը և պարսատիկը ձեռքն առած՝ հինգ քար ալ մախաղին մէջ դրած՝ Գողիաթու դիմաց ելաւ:

2. Երբ հսկայն տեսաւ զԴաւիթ, կոչեց. «Ես շո՞ւն եմ որ գաւազանով ու քարով կու գաս վրաս»: Պատասխանեց Դաւիթ. «Շունէն ալ ցած»: Ըսաւ հսկայն. «Ե՛կ որ զքեզ թռչուններու և գազաններու կերակուր ընեմ»: «Դու զինուցդ վրայ վստահացեր ես, պատասխանեց Դաւիթ, բայց ես կու գամ Աստուծոյ զօրութեան վրայ ապաւինած՝ որ զքեզ իմ ձեռքս պիտի մատնէ». այս ըսելով՝ պարսատիկով քար մը նետեց Գողիաթու ճակատին, որ երկաթէ սաղաւարտը ծակելով զինքը մեռած գետին փռեց. վազեց վրան Դաւիթ՝ ու սուրն առնելով անոր գլուխը կտրեց: Փղշատցիք սարսափած փախան, Իսրայելացիք ալ մեծ հանդիսով Դաւիթը քաղաք բերին: Սաուղ ի սկզբան զարմանալով վրան՝ քովը պահեց զինքը և զօրագլուխ ըրաւ. և իւր Յոնաթան որդին ալ մեծ սիրով հետը կապուեցաւ: Բայց յետոյ երբ տեսաւ՝ թէ բոլոր ժողովուրդը ծնծղայներով կ'երգէին ու կ'ըսէին. «Սաուղ հազար ջարդեց, Դաւիթ տասն հազար», նախանձեցաւ վրան և հնարք կը մտածէր մեռցընելու: Օր մը դիւահարութիւնը բռնած՝ երբ Դաւիթ առջևը քնար կը զարնէր, յանկարծ գեղարդը վրան նետեց, բայց Դաւիթ փախչելով ազատեցաւ:

---

1. Ո՞վ էր Գողիաթ:
2. Ի՞նչպէս յաղթուեցաւ Գողիաթ:

ԳԼՈՒԽ ԵՐԵՍՆԵՐՈՐԴ ԱՌԱՋՆԵՐՈՐԴ

ԴԱՒԻԹ

(ամք 1063–1023 նախ քան զԿրիստոս)

1. Քանի մը տարի անցնելէ վերջ՝ յաղթուած Փղշտացիք, դարձեալ պատերազմի ելան Սաւուղայ դէմ մեծ պատրաստութեամբ. Սաւուղ վախցաւ ու խորհուրդ հարցուց Աստուծոյ, բայց պատասխան չառաւ. ուստի յուսահատած՝ դիմացնին ելաւ Գեղբուա լեռն: Պատերազմն սկսաւ և Իսրայելացիք ջարդուեցան. Սաւուղ ալ թշնամւոյն ձեռքը չընկնելու համար իւր սրոյն վրայ ընկաւ մեռաւ:

2. Սաւուղի մեռնելէն վերջ Իսրայելացիք զԴաւիթ իրենց թագաւոր ընտրեցին, որ շատ անուանի եղաւ իւր յաղթութեամբք և աստուածպաշտութեամբ: Թագաւորելուն պէս Երուսաղէմ քաղաքը մեծցուց ու բարեկարգեց. հոն շինեց իւր թագաւորական արքունիքը, և ուզեց Աստուծոյ տապանակը հոն փոխադրել. ուստի եօ-

թանասուն հազար հոգւով և նուագածուաց անհամար բազմութեամբ Երուսաղէմ բերաւ՝ և իւր նոր շինած խորանին մէջ դրաւ: Դաւիթ փառաւոր տաճար մ'ալ միտք ունէր շինելու տապանակին համար, բայց Աստուած իրեն իմացուց՝ թէ իւր որդին պիտի շինէ իրմէ վերջ. ինքն ալ ամենայն պատրաստութիւն տեսաւ, անբաւ գանձեր պատրաստեց ու վերջը Սողոմոն որդւոյն յանձնեց որ շինէ:

Սաւուղայ մահուան վրէժն ալ առնելու համար Փղշտացւոց վրայ գնաց, մեծ յաղթութիւն ըրաւ և զանոնք հարկատու ընելով՝ շատ ոսկի, արծաթ և գանձեր ձեռք ձգեց ու Երուսաղէմ բերաւ:

Նոյնպէս Ամոնացւոց դէմ գնաց և անոնց թագաւորական քաղաքն առաւ, ուր շատ աւար գտաւ. և արքունական գահը, որ տաղանդ մը ոսկւոյ ծանրութիւն ունէր, և անգին քարերով զարդարուած էր, առաւ Դաւիթ և ինքն սկսաւ գործածել: Այս պատերազմիս մէջ թշնամիք եօթն հարիւր պատերազմական կառք և քառասուն հազար ձիաւոր կորուսին. և թէպէտ վերջը դարձեալ ապստամբեցան և ուզեցին պատերազմի ելնել, բայց Դաւիթ իւր ցովաբ քաջ զօրապետը ղրկեց որ բոլոր ազգը ջնջեց և մնացածներն ալ ցիր ու ցան ըրաւ:

Այսչափ մեծամեծ յաղթութիւնք ու փառք՝ Դաւիթի առաքինութիւնը արատաւորեցին, որ իւր քաջ ու հաւատարիմ զօրավարն Ուրիա քետացին սպաննել տուաւ, անոր Բերսաբէ կինն իրեն կնութեան առնելու համար. ուսկից Սողոմոն անունով որդի մ'ունեցաւ, որ իրեն յաջորդեց: Սակայն Դաւիթ այս իւր ըրած մեծ յանցանաց համար շատ զղջում և ապաշխարութիւն ըրաւ, և Աստուած ալ ներեց իրեն:

---

1. Ի՞նչպէս մեռաւ Սաւուղ:
2. Սաւուղայ տեղ ո՞վ թագաւորեց Իսրայելացւոց:
3. Սաւուղայ վրէժն առնելու համար ի՞նչ պատերազմներ ըրաւ Դաւիթ:

ԳԼՈՒԽ ԵՐԵՍՆԵՐՈՐԴ ԵՎ ԵՐԿՐՈՐԴ

ԱԲԻՍՈՂՈՄ

(ամք 1020 նախ քան զԲրիստոս)

1. Դաւիթ իւր ծերութեան ժամանակ՝ Աստուծոյ թոյլտուութեամբ շատ վիշտեր քաշեց իւր որդիներէն։ Աբիսողոմ իւր որդին սաստիկ ոխ պահած էր Ամոն անդրանիկ եղբօր վրայ՝ անկարգութիւն մ՚ըրած ըլլալուն համար. ուստի օր մը մեծ կոչունք տուաւ Բեբրոն քաղաքին մէջ և հոն հրաւիրեց իւր ամեն եղբարքն ու իշխանազունք. և վերջը ծառայից ձեռքով սպաննել տուաւ զԱմոն, և այլազգեաց երկիրը գնաց ապաւինեցաւ։ Դաւիթի մեծ ցաւ եղաւ այս բանս, և շատ բարկանալով Աբիսողոմայ վրայ, երեք տարի չուզեց զինքը տեսնել. բայց վերջը իւր Յովաբ զօրավարին միջնորդութեամբը Աբիսողոմ Երուսաղէմ դարձաւ, և հայրն հետը հաշտուեցաւ։

2. Սակայն իւր զղջումը կատարեալ չէր, Երուսաղէմ

եղած ժամանակ նայեցաւ որ ժողովուրդն իւր կողմ ձգէ, և ամենուն կրցած բարիքը կ՚ընէր. չորս տարի անցնելէն վերջ երբ տեսաւ թէ ժողովրդեան սիրտն իւր կողմն է, հրաման առաւ հօրմէն Բեբրոն երթալու ուխտը կատարելու համար, զոր փախչելու ատեն ըրած էր։ Իրեն հետ տարաւ երկու հարիւր հոգի իշխաններէն և մեծերէն, նաև զԱքիտոփել՝ Դաւիթի մեծ խորհրդականն, և հոն յայտնեց իրենց՝ թէ թագաւորել կ՚ուզէ հօրը տեղ. ամենքն հաւանեցան, և սկսաւ այն ատեն զօրօք Երուսաղեմի վրայ գալ։

Դաւիթ ինք զինքն Աստուծոյ յանձնելով՝ քովը մնացած զօրօք Երուսաղեմէն ելաւ որ փախչի. զօրքն ու ժողովուրդն իրենց թագաւորին վրայ կուլային։ Աբիսողոմ Երուսաղէմ մտաւ տիրապետեց, բայց Աքիտոփել իրեն խորհուրդ տուաւ որ հօրը եռեւէն ընկնի քանի որ յոգնած է, որով դիւրին կ՚ըլլայ յաղթելը. իսկ Բուսի Արաքացի Դաւիթի բարեկամն, որ միայն երեսանց Աբիսողոմայ հետ միաբաներ էր, Աքիտոփելայ խորհուրդը ցրելու համար՝ խորհուրդ կու տար որ ուշանայ ու մէկէն չպատերազմի, մինչև Դաւիթի բարկութիւնն անցնի և տկարանայ. ուստի Աբիսողոմ ալ Բուսիի խորհրդոյն անսալով՝ ժամանակ տուաւ Դաւիթի որ բանակը կարգաւորէ և զօրացընէ. իսկ Աքիտոփել յայտնի տեսնելով Աբիսողոմայ կործանումն, գնաց իւր տունը ինք զինքը կախեց։

Քիչ վերջը Աբիսողոմ Դաւիթի վրայ պատերազմի ելաւ. ու Եփրեմի անտառին մօտ իրարու պատահեցան. պատերազմն սկսաւ, սաստիկ ջարդուեցաւ Աբիսողոմայ բանակը և սկսան փախչիլ. ինքն ալ իւր ջորւոյն վրայ հեծած անտառի մէջէն փախչելու ժամանակ՝ մազերէն կախուած մնաց ծառի ճիւղէ մը. Յովաբ զինքը տեսնելով, նետով զարկաւ սպաննեց՝ և խոր փոսի մը մէջ ձգեց։

---

1. Դաւիթ ի՞նչ վիշտ ունեցաւ իւր Աբիսողոմ որդիէն։
2. Ի՞նչպէս մեռաւ Աբիսողոմ։

ԳԼՈՒԽ ԵՐԵՍՆԵՐՈՐԴ ԵՐԲՈՐԴ

ՍՈՂՈՄՈՆ

(ամք 1023 նախ քան զՔրիստոս)

1. Դաւիթ մեռնելէն առաջ իւր Սողոմոն որդին տասուերկու տարեկան թագաւոր օծել տուաւ Իսրայելի վրայ։ Սողոմոն Իսրայելի թագաւորաց մէջ ամենէն երեւելին և զօրաւորն եղաւ. թէպէտ և տղայ էր, բայց շատ խելքով և արիութեամբ սկսաւ թագաւորել. Աստուած ալ երևելով իրեն, ըսաւ. «Խնդրէ ինծմէ ինչ որ կ'ուզես, որ տամ»։ Սողոմոն շնորհակալ եղաւ Աստուծոյ, և ըսաւ. «Հլու սիրտ մը և իմաստութիւն կը խնդրեմ, Տէր, որպէս զի քու ժողովուրդդ լաւ կառավարեմ»։ Աստուած ալ ոչ միայն իմաստութիւն, այլ նաև շատ հարստութիւն ու փառք խոստացաւ տալ իրեն՝ եթէ իւր Դաւիթ հօրը պէս բարեպաշտ ըլլայ։

2. Քիչ ատենէն Սողոմոն սկսաւ իւր մեծ իմաստութիւնը յայտնի ընել։ Երկու կանայք՝ մէկ տան մէջ կը բնակէին, և երկուքն ալ զաւակ ունէին. անոնցմէ մին

առաւօտը մեռած գտնելով իւր որդին, միւս կնոջ որդին կ'առնու, և իւրն անոր տեղ կը դնէ։ Մայրն արթննալով՝ սարսափած Սողոմոնի կը բողոքէ, բայց միւս կինն ալ չէր դադարեր պնդելէ՝ թէ «ողջ տղայն իմս է, իսկ մեռածն՝ անոր»։ Սողոմոն հրամայեց դահճին՝ ողջ տղայն երկու կտոր ընել, և կէսը միոյն, կէսն ալ միւսոյն տալ. այն ատեն բուն մօր գութը շարժելով՝ ընկաւ Սողոմոնի առջև և սկսաւ աղաչել՝ որ տղուն վնաս մը չըլլայ, այլ միւս կնոջ տրուի. իմացաւ Սողոմոն՝ թէ ինքն է հարազատ ու ճշմարիտ մայրն, ու հրամայեց իրեն դարձընել տղայն։

3. Այսպէս կողմէ խաղաղութիւն ըլլալով Սողոմոնի թագաւորութեան ժամանակ, իւր հարստութիւնն օրէ օր կ'աւելնար. ուստի մտածեց Աստուծոյ տաճարն համար փառաւոր տաճար շինել տալ իւր հօր պատրաստած նիւթերով. որոյ համար 80,000 հոգի կ'աշխատեցնէր քար կտրելու, 70,000 հոգի ալ քար կրելու համար, և 3,500 ճարտարապետ կը հսկէին գործոյն վրայ. եօթն տարուան մէջ լմընցաւ, և այնչափ փառաւոր եղաւ որ աշխարհիս վրայ նմանը չէ եղած, մէջն ոսկւով, արծաթով և գեղեցիկ քարերով ծեփած։ Վերջը Աստուծոյ տապանակը մեծ փառքով բերաւ այն տաճարին մէջ զետեղեց և տասնուչորս օր շարունակ տօնախմբութիւն կատարեց և 130,000 անասուն ողջակէզ ըրաւ. նոյն միջոց լուսաւոր ամպով մը լեցուեցաւ տաճարը, և երկնքէն կրակ իջնելով բոլոր ողջակէզն այրեց։

---

1. Ո՞վ յաջորդեց Դաւիթի։
2. Ի՞նչ օրինակ կայ Սողոմոնի իմաստուն դատաստանաց։
3. Ի՞նչպէս շինեց Երուսաղեմի տաճարը։

ԳԼՈՒԽ ԵՐԵՍՆԵՐՈՐԴ ԶՈՐԲԱՐԴ

ՍՈՂՈՄՈՆԻ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆԸ

(ամք 1000 նախ քան զՔրիստոս)

1. Սողոմոն Աստուծոյ տաճարին շինութիւնը լմընցնելէն վերջ՝ իւր արքունական մեծ պալատն ալ կանգնել տուաւ, որոյ մէջ ամենէն փառաւոր՝ թագաւորական աթոռն էր, փղոսկրէ՝ ոսկւով զարդարուած, որ վեց աստիճան ունէր, և երկու կողմանէ տասուերկու առիւծ դրուած էին։ Նոյնպէս մեծամեծ քաղաքներ ալ շինեց, և նաւեր ունէր՝ որ հեռաւոր երկիրներ կ'երթային տարին երեք անգամ, ոսկի և արծաթ և ամենայն տեսակ տակաւագիւտ ապրանք կը բերէին. և այնչափ եղաւ իւր փառքն ու հարստութիւնը, որ համբաւն ամեն տեղ տարածուեցաւ։

2. Սաբայ թագուհին Սողոմոնի իմաստութիւնը լսելով, շատ զօրքով և ուղտերով ընծայներ առած՝ եկաւ անոր հանճարը փորձելու համար. և հետը խօսելէն վերջ՝

տեսնելով անոր արքունեաց ճոխութիւնն ու եղած կարգ կանոնը, զարմացաւ՝ ու ըսաւ մեկնելու ժամանակ. «Քու վրայդ լսածներս՝ տեսածիս կէսը չէին»։ Սողոմոն ալ ինչ որ անոր սիրտն ուզեց՝ տուաւ առատութեամբ։

3. Բայց դժբաղդաբար այս մեծ թագաւորը մինչև ցմահ Աստուծոյ հաւատարիմ չմնաց. տարիքն առնելով Աստուծմէ սկսաւ հեռանալ, անոր օրէնքներն ոտքի տակ առաւ և մինչև կռապաշտութիւն ալ սկսաւ ընել։ Աստուած բարկացաւ վրան. «Որովհետև պատուիրաններս չպահեցիր, ըսաւ, թագաւորութիւնդ պիտի առնում ձեռքէդ ու ծառայիդ պիտի տամ. բայց Դաւթի սիրոյն համար երկու բան կը չնորհեմ. մէկն՝ որ քու օրովդ չեմ ըներ, և երկրորդ՝ որ միայն երկու ցեղ Դաւթի տան կը թողում»։

4. Յերոբովամ՝ Սողոմոնի ծառայն երբ Երուսաղեմէն ելեր կ'երթար, Աստուած մարգարէ մը ղրկեց անոր, որ մօտեցաւ Յերոբովամայ, և անոր հագած նոր զգեստն առաւ տասուերկու կտոր ըրաւ ու տասն կտորն անոր դարձուց, ըսելով. «Աստուած Սողոմոնի թագաւորութեան տասն ցեղը քեզի պիտի տայ՝ անոր ապերախտութեան համար. դու ալ եթէ Աստուծոյ պատուիրանները պահես, որդւոց որդի կը թագաւորես»։ Սողոմոն իմանալով՝ մեռցընել կ'ուզէր զՅերոբովամ, որ փախչելով Եգիպտացւոց թագաւորին քովը ապաւինեցաւ, մինչև որ Սողոմոն մեռաւ, քառասուն տարի թագաւորելէ վերջը։ Աստուած իրեն ըրած սպառնալիքը կատարեց. Սողոմոնի տէրութիւնն երկու մասն բաժնուեցաւ, և ըսուեցան Իսրայելի և Յուդայի թագաւորութիւնք։

---

1. Ուրիշ ի՞նչ երևելի շինուածներ կառոյց Սողոմոն։
2. Ո՞վ եկաւ Սողոմոնի իմաստութիւնը փորձելու։
3. Սողոմոն մինչև վերջ հաւատարիմ մնա՞ց Աստուծոյ։
4. Աստուած ի՞նչ խոստացաւ Յերոբովամայ։

ԳԼՈՒԽ ԵՐԵՍՆԵՐՈՐԴ ՀԻՆԳԵՐՈՐԴ

ՅՈՒԴԱՅԻ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆ — ՄԱՀ ԳՈԹՈՂԻԱՅ ԲԱԲԵԼՈՆԻ ԳԵՐՈՒԹԻՒՆԸ

(ամք 985-558 նախ քան զԲՐիստոս)

1. Յուդայի թագաւորութիւնն՝ Յուդայի և Բենիամինի երկու ցեղերէն կը բաղկանար, որոնք միայն հաւատարիմ մնալ ուզեցին Սողոմոնի որդւոյն՝ Ռոբովամայ։

Միւս տասն ցեղերն Իսրայելի թագաւորութիւնը կազմեցին և իրենց մայրաքաղաք ընտրեցին զՍամարիա, թողով զԵրուսաղէմ՝ որ Յուդայի թագաւորութեան մայրաքաղաք մնաց։

2. Ռոբովամ Սողոմոնի որդին շատ անօրէն ու կապաշտ թագաւոր մ'եղաւ և իրեն հետևեցան յաջորդ թագաւորքն ալ, ինչպէս Յովրամ, Ոքոզիա և ասոր Գոթողիա մայրն՝ որ սպաննել տուաւ բոլոր թագաւորութեան ժառանգները՝ որպէս զի ինքն թագաւորէ անոնց

տեղ։ Այս կոտորածէն Ոքոզիայի փոքր տղայ մ'ազատեցաւ Յովաս անուամբ՝ զոր Յովիդայէ քահանայապետը տաճարին մէջ վեց տարի պահեց. և երբ եօթն տարեկան եղաւ, բոլոր մեծամեծաց և իշխանաց խորհրդով զՅովաս թագաւոր օծեց, և զԳոթողիա սպաննեցին։

3. Բայց եղան բարեպաշտ թագաւորք ալ որ ասորւածապաշտութեամբ ծաղկեցան և կռապաշտութիւնը վերուցին, ինչպէս Եզեկիա որ զԵրուսաղէմ կործանմանէ ազատեց, երբ Սենեքերիմ ասորեստանեայց թագաւորն եկաւ պաշարեց. և իւր բարեպաշտութեանն համար Աստուած հրեշտակ մը ղրկեց գիշեր ժամանակ՝ որ թշնամւոյն բանակէն 180,000 հոգի սպաննեց։ Ուրիշ անգամ մ'ալ սաստիկ հիւանդանալով՝ Աստուած հրաշքով մը կեանքը շնորհեց և 15 տարի ալ ապրեցաւ։ Այս թագաւորս շատ գեղեցկացուց ու շէնցուց Երուսաղէմ քաղաքը։

4, Յուդայի թագաւորութեան վերջին թագաւորն եղաւ Սեդեկիա ամբարիշտ թագաւորը, որ սաստիկ կռապաշտութեան տուաւ ինքզինքը. և թէպէտ Երեմիա մարգարէն միշտ կը խրատէր, բայց ականջ չէր դներ. Աստուած ալ իրեն սպառնացած պատիժներ ղրկեց իւր արդարութիւնը ցուցնելու համար. և Բաբելացւոց Նաբուզոդոնոսոր թագաւորը վրանին ղրկեց՝ որ եկաւ երկար տաեն զԵրուսաղէմ պաշարեց, պարիսպը փլցուց, և Բաբելացիք քաղաքն ու տաճարը կողոպտեցին. ոսկի, արծաթ և սրբազան անօթքն առին տարին։ Ժողովուրդն ալ Սեդեկիա թագաւորով և ամէն իշխաններով գերի տարին ի Բաբելոն, ուր եօթանասուն տարի պիտի կենային ըստ կանուխ գուշակութեանց մարգարէից։

---

1. Քանի՞ ցեղերէ կազմուեցան Յուդայի և Իսրայելի թագաւորութիւնները։
2. Ինչպիսի՞ թագաւոր եղաւ Ռոբովամ։
3. Եզեկիա ի՞նչ շնորհք ընդունեցաւ Աստուծմէ։
4. Ի՞նչպէս վերջացաւ Յուդայի թագաւորութիւնը։

ԳԼՈՒԽ ԵՐԵՍՆԵՐՈՐԴ ՎԵՑԵՐՈՐԴ

ԻՍՐԱՅԵԼԻ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆ — ՅԵԶԱԲԷԼ

(ամք 985–736 նախ քան զԳՐԻՍՏՈՍ)

1. Իսրայելի թագաւորութիւնը տասն ցեղերէ կը կազմուէր՝ Յուդայէ և Բենիամինէ զատ. բայց ասոր թագաւորքն Յուդայի թագաւորներէն աւելի ամբարիշտ եղան։

2. Յերոբովամ առաջին թագաւորն՝ ոսկիէ որթ շինեց և տաճարի մէջ կանգնեց՝ որ ժողովուրդը պաշտէ և Երուսաղէմ չերթայ՝ որ Յուդայի թագաւորութեան մայրաքաղաքն էր. բայց ինքն ալ պատժուեցաւ, վասն զի Բաաս իւր զօրավարաց մէկը՝ թագաւորական ընտանիքը թրէ անցուց, և ինքն յաջորդեց։ Բաասայ յաջորդ թագաւորքն իրեն պէս անօրէն և կռապաշտ եղան։

3. Այս թագաւորաց մէջ չարագոյնն՝ Աքսաբ եղաւ, իւր Յեզաբէլ կինն այլազգւոյ չար աղջիկ մ'ըլլալուն համար. այնչափ ամբարշտեցաւ՝ որ Աստուած Եղիա մարգարէն զրկեց որ ըսէ իրեն՝ թէ «Քո մեղացդ համար երեք տարի ոչ անձրև և ոչ ցող պիտի իջնէ յերկնից՝ ամբողջ թագաւորութեանդ մէջ»։ Այսպէս ալ եղաւ, ու սաստիկ սով տիրեց և հազարաւոր մարդիկ մեռան։

4. Երեք տարի վերջ Եղիա Աքսաբու գնաց՝ և ըսաւ. «Հրաման տուր՝ որ ժողովուրդը Բահաղու քուրմերու հետ Կարմելոս լեռը ժողվին»։ թագաւորն ալ հրամայեց. այն ատեն ըսաւ Եղիա ժողովրդեան. «Մինչև ե՞րբ պիտի տարակուսիք ճշմարիտ Աստուծոյ վրայ. եթէ Աստուած ճշմարիտ է՝ պաշտեցէք զինքը. ապա թէ Բահաղ՝ իրեն երկրպագութիւն ըրէք. ուստի բերէք զոհեր, որ նուիրենք, և այն աստուածն՝ որ երկնքէն կրակ իջեցընէ, այն ըլլայ ճշմարիտ Աստուած»։ Ժողովուրդը բերաւ. քուրմերն սկսան առաւօտէ մինչև երեկոյ՝ իրենց Բահաղ աստուածը օգնութեան կոչել, բայց ամենևին օգուտ չեղաւ. այն ատեն դարձաւ ըսաւ Եղիա. «Մէկ կողմ կեցէք». ու ձեռներն երկինք վերցընելով, «Աստուած Աբրահամու, Իսահակայ և Յակոբայ, ըսաւ, յայտնէ ժողովրդեան՝ թէ դու միայն ես Աստուածն Իսրայելի». այս ըսելուն պէս մէկէն երկնքէն կրակ իջաւ, այրեց ողջակէզը՝ սեղանն ալ միասին։ Ժողովուրդն ապշած՝ երեսի վրայ ընկաւ ըսելով. «Այս է ճշմարիտ Աստուածն»։ Եղիա ալ հրամայեց ժողովրդեան՝ Բահաղու քուրմերը ջնջել, ու զամենքը սպաննեցին։

Աքսաբ Աստուոց դէմ պատերազմ բացաւ և այն պատերազմին մէջ վիրաւորուեցաւ ու մեռաւ, և շուներն իւր արիւնը կը լափէին։ Իսկ չարագործն Յեզաբէլ, ինչպէս մարգարէացեր էր անոր համար՝ Եղիա, իւր ներքինիք զինքը պատուհանէն վար նետեցին, որ ջախջախեցաւ և ձիերէ հոխկոտուեցաւ, ու շները կերան մարմինը։

---

1. Քանի՞ ցեղերէ կազմուեցաւ Իսրայելի թագաւորութիւնը։
2. Յերոբովամ ինչպէս մոլորեցուց ժողովուրդը։
3. Ո՞վ եղաւ Իսրայելի չարագոյն թագաւորը։
4. Ի՞նչպէս կոտորեց Եղիա՝ Բահաղու քուրմերը։

ԳԼՈՒԽ ԵՐԵՍՆԵՐՈՐԴ ԵՕԹՆԵՐՈՐԴ

ՅՈՎՐԱՄ — ՆԻՆՈՒԷԻ ԳԵՐՈՒԹԻՒՆ

(ամք 891 նախ քան զԲրիստոս)

1. Աքաաբու յաջորդեց իւր Ոքոզիա որդին, որ կապաշտութիւն ընելով՝ երկու տարիէն վերջ՝ օր մը տան պատուհանէն ընկնելով՝ չարաչար հիւանդացաւ և մեռաւ։

2. Ոքոզիա որդի չունենալով, իւր Յովրամ եղբայրը տեղը թագաւոր եղաւ. որ թէպէտ հօրը չափ չար չէր, բայց բոլորովին կռապաշտութիւնը ձեռքէ չձգեց։

3. Աստ տեն Մովաբացիք ապստամբեցան, բայց Իսրայելացիք զանոնք սաստիկ չարդեցին ու մինչև իրենց թագաւորական քաղաքը փախուցին։ Նոյնպէս Ասորիք Յովրամայ վրայ պատերազմի եկան, այլ Աստուած Եղիսէ մարգարէին ձեռքով ազատեց զԻսրայելացիս. Ասորւոց զօրաց մէջ մեծ սարսափ մը ձգելով զիշերանց, արտորանք ելան ու փախան։

4. Բայց Աքաաբու տան վրայ Աստուծոյ սպառնալիքը կատարուելու համար, որ բոլորովին պիտի ջնջէր զայն, Յէհու թագաւոր օծուելով՝ առաւ զօրքերը գնաց Յեզրայէլ քաղաքը՝ Յովրամ թագաւորին վրայ. և երբ նա սկսաւ փախչիլ՝ հասաւ ու նետով սպաննեց։

5. Իսրայելացիք կռապաշտութիւնը չձգեցին, այլ քիչ ատենէն յետ Բահաղու քրմաց չարդուելուն՝ դարձեալ կռապաշտութեան դարձան. այնպէս որ Ովսէէ թագաւորին ժամանակ Աստուած գիրենք Ասորեստանի Սաղմանասար թագաւորին ձեռքը մատնեց, որ եկաւ բոլոր երկիրն ոսնակոխ ըրաւ, առաւ Սամարիա քաղաքը՝ կողոպտեց, և Իսրայելի տասն ցեղերը գերի տարաւ ի Նինուէ։

---

1. Ո՞վ յաջորդեց Աքաաբու։
2. Ոքոզիայի ո՞վ յաջորդեց։
3. Ի՞նչ պատերազմ ըրաւ Յովրամ։
4. Ի՞նչպէս մեռաւ Յովրամ։
5. Ի՞նչպէս վերջացաւ Իսրայելի թագաւորութիւնը։

ԳԼՈՒԽ ԵՐԵՍՆԵՐՈՐԴ ՈՒԹԵՐՈՐԴ

ՏՈՎԲԻԹ

(ամք 727 նախ քան զԲիւրիստոս)

1. Նինուէ քաղաքը գերի գնացողներուն մէջ Տովբիթ անունով բարեպաշտ Իսրայելացի մը կար, որ ամեն օրէնքները կը պահէր, և իւր ազգայնոց ամեն տեսակ բարիք կ'ընէր, և Ասորեստանեայց ձեռքէն քաշած նեղութիւններէ զիրենք կը մխիթարէր։ Աստուծոյ թոյլտուութեամբ այս մարդս կուրնալով՝ իւր ընտանիքն աղքատութեան մէջ ընկաւ, և սատիպուեցաւ իւր Տուբիա որդին Մարաց երկիրը ղրկել, ուր Գաբայել ըսուած մարդու մը քով շատ դրամ աւանդ թողեր էր. և ըսաւ տղուն՝ որ իրեն ուղեկից և առաջնորդ մը փնտռէ։ Տուբիա փնտռելու գնաց, նոյն միջոց հրեշտակ մը երիտասարդի կերպարանքով, որ իւր անունն Ազարիա կ'ըսէր, դիմացն ելաւ՝ որ իրեն առաջնորդէ, հայրն ալ հաւանեցաւ ու ճամբայ ելան։

Տիգրիս գետոյն եզերքն երբ հասան, Տուբիա ուզեց լուացուիլ մէջը. յանկարծ մեծ ձուկ մը վրան վազեց. Տուբիա ալ վախցաւ ու աղաղակեց. «Մի վախեր, ըսաւ հրեշտակը, բռնէ դուրս հանէ, լեարդն ու լեղին պահէ, որ օր մը քեզի պէտք պիտի ըլլայ»։

Ճամբանին շարունակեցին և հասան Եկբատան, ուր Տուբիայի ազգական մը կար Հռագուէլ անունով. հոն կեցան, և Տուբիա անոր Սառա դուստրը կնութեան առաւ. հրեշտակն ալ Մարաց երկիրը գնաց՝ դրամն առաւ և ետ դարձաւ։

Տուբիայի ճանապարհորդութիւնն երկայն տևելով, ծերոնդը մեծ հոգերու մէջ ընկան։ Իւր մայրն ամեն օր մօտաւոր լերան ծայրը կ'ելնէր՝ տղուն դառնալուն սպասելով անհամբեր. օր մ'ալ յանկարծ տեսաւ զինքը հեռուէն՝ ու վազեց երկանն ուտեցիս տուաւ. ծերունի հայրը խարխաբելով դիմացն ելաւ, ու որդին համբուրելով փառք կու տար Աստուծոյ։ Երբ տուն եկան, Ազարիայի խորհրդով Տուբիա քովն ունեցած ձկան լեղին հօր աչքերուն քսեց՝ ու բացուեցան. Տովբիթ մեծ երախտագիտութեամբ շնորհակալ եղաւ Ազարիայի, և բերած դրամին կէսն անոր ուզեց տալ։ Այն ատեն հրեշտակն ինք զինքը յայտնեց՝ ըսելով. «Աստուած է որ զիս ղրկեց ձեզի. ես եմ Ռափայէլ հրեշտակն, որ ամեն օր ձեր աղօթքն առ Աստուած կը տանէի. փառք տուէք Աստուծոյ՝ որ ձեր ողորմութիւնքն ու բարեգործութիւնքը կը վարձատրէ»։ և մէկէն երկինք վերանալով անհետացաւ։

Ամենքն երեսի վրայ ընկան զարմանալով՝ ու երկրպագութիւն ըրին Աստուծոյ, շնորհակալ ըլլալով իրենց ըրած բարեացն համար։

---

1. Ո՞վ է Տովբիթ։

ԳԼՈՒԽ ԵՐԵՍՆԵՐՈՐԴ ԻՆՆԵՐՈՐԴ

ՅՈՎՆԱՆ — ԵՍԱՅԻ — ԵՐԵՄԻԱ. ՄԱՐԳԱՐԷՔ

(տարք 800–770–626 նախ քան զՔրիստոս)



1. Երբ Իսրայելացիք կռապաշտութեան մէջ կ՚ընկնէին, Աստուած զիրենք ճշմարիտ կրօնից դարձունելու համար՝ երբեմն մարգարէներ կը զրկէր՝ որ իրենց վրայ գալիք պատիժները կը գուշակէին։ Առնց մէջ երևելիներն են Յովնան, Եսայի, Երեմիա և Դանիէլ։

2. Յովնան մարգարէն յԱստուծոյ հրաման ընդունած էր Նինուէ քաղաքն երթալ քարոզելու, այս բանս իրեն ծանր գալով, ուզեց փախչիլ, ու նաւ մը մտաւ Թարշիշ երթալու համար։ Երբ ծովուն մէջ տեղն հասաւ, Աստուած սաստիկ փոթորիկ մը հանեց, այնպէս որ նաւն ընկղմելու վրայ էր. նաւաստիք ուզելով իմանալ թէ ո՞րու համար կ՚ըլլար այս ահաւոր պատիժը, վիճակ ձգեցին ու Յովնանու վրայ ելաւ. այն տեղն հարցուցին իրեն. ինքն ալ խոստովանեցաւ՝ ու ըսաւ. «Ծով ձգեցէք

զիս՝ որ հանդարտի». իրենք ալ ձգեցին. նոյն վայրկենին խոշոր ձուկ մը զինքը կլլեց, և երեք օր վերջ ողջ ծովեզերքն ալաղի վրայ ձգեց։

Յովնան այն մեծ հրաշքէն զգաստացած՝ Նինուէ գնաց. և ինչպէս որ Աստուած իրեն հրամայեր էր՝ սկսաւ քաղաքը պատիլ ու քարոզել թէ «Երեք օրէն Նինուէ պիտի կործանի»։ Ժողովուրդն ու թագաւորը սաստիկ վախցան և ապաշխարեցին։ Աստուած ալ վրանին զթալով՝ թողութիւն տուաւ իրենց։

3. Եսայի մարգարէն Դաւթի թագաւորական ցեղէն էր. և Յուդայի Եզեկիա թագաւորին ժամանակ կ՚ապրէր։ Ինքն առաջուց մարգարէացաւ Յուդայի և Իսրայելի թագաւորութեանց կործանումն, Բաբելոնի գերութիւնը և Յիսուսի Քրիստոսի ծնունդն ու մահը։ Իսրայելի ժողովրդեան մեծ մարգարէներէն մէկն էր. բայց Մանասէ թագաւորը՝ բարեպաշտ Եզեկիայի որդին, չկարենալով անոր յանդիմանութեանց համբերել, հրամայեց սուրը մարգարէն փայտէ սղոցով երկու մաս ճեղքել, և չարաչար կերպով մեռուց։

4. Երեմիա մարգարէն Բաբելացւոց գերութեան ժամանակակից էր. շատ ողբեր գրած է Երուսաղեմի թշուառութեանց վրայ, և քառասուն և երեք տարի անդադար կը քարոզէր Իսրայելի ժողովրդեան՝ որ իրեն մեղքերէն ետ կենան և ապաշխարեն, որպէս զի Աստուած իրենց վրայ ողորմի և զիրենք չպատուհասէ. բայց Իսրայելացիք անոր արդար յանդիմանութեանց չդիմանալով, քարկոծեցին զինքն Եգիպտոսի մէջ։

---

1. Որո՞նք են գլխաւոր մարգարէները։
2. Յովնան ի՞նչ հրաման ստացաւ Աստուծմէ։
3. Ո՞վ էր Եսայի մարգարէ, և ի՞նչպէս մեռաւ։
4. Ո՞ր ժամանակ կ՚ընկնի Երեմիա, և ո՞ւր մեռաւ։

ԳԼՈՒԽ ՔԱՌԱՄՆԵՐՈՐԴ

ԴԱՆԻԷԼ ՄԱՐԳԱՐԷ

(ամք 590–515 նախ քան զԳրիստոս)

1. Դանիէլ՝ Երեմիա մարգարէին պէս՝ Հրէից Բաբելոնի գերութեան ժամանակակից էր։ Նաբուգոդոնոսոր թագաւորին երազները մեկնեց. թագաւորն ալ անոր իմաստութիւնը տեսնելով՝ իւր երկրին իշխան դրաւ. բայց Դանիէլ իւր թագաւորակերպ մեծութեան մէջ չմոռացաւ երբեք իւր Աստուածն ու ազգը։ Ինքն ազատեց զանմեղ Շուշանը՝ երկու չարասիրտ զրպարտող ծերոց ձեռքէն. և Նաբուգոդոնոսոր թագաւորին ալ, երբ ինք զինքն Աստուծոյ պէս պաշտել կու տար, մարգարէացաւ՝ թէ Աստուած պիտի պատժէ զինքը և վայրենի կենդանւոյ մը պէս՝ մարդիկներէ հեռու՝ եօթն տարի գազաններու հետ պիտի բնակի։ Թագաւորը չկատարեցաւ. և օր մը պալատին վրայ հպարտութեամբ ճեմելով՝ Բաբելոնի գեղեցկութեան վրայ պարծենալու ատեն, յանկարծ երկնքէն

ձայն մ'եկաւ և ըսաւ. «Նաբուգոդոնոսոր, քեզի կ'ըսեմ. թող թագաւորութիւնդ ու գազաններու հետ բնակէ»։ և անոնց հետ կ'ուտէր։ Եօթն տարի վերջ խոստովանելով Աստուծոյ կարողութիւնը՝ դարձաւ եկաւ նստաւ իւր աթոռը։

2. Դանիէլ Բաբելացւոց Բէլ անուամբ մեծ կուռքը և անոր տաճարը կործանեց, որոյ վրայ սոստիկ բարկանալով Բաբելացիք և իրենց իշխաններն, ստիպեցին զթագաւորը՝ որ զԴանիէլ առիւծուց գուբը ձգէ. բայց Աստուած ազատեց իւր մարգարէն անոնց բերանէն. և վեց օր մէջերնին անվնաս հենալէն վերջ՝ թագաւորն հանել տուաւ զինքը՝ և հրամայեց անոր թշնամիները գուբը ձգել, որոնք յատակը չհասած՝ մէջի եօթն առիւծներէն պատառեցան։

3. Սակայն ժամանակն հասեր էս՝ որ Աստուած Բաբելացւոց զեղխութիւնն ու անկարգութիւնը պատժէ։ Բաղտասար՝ Նաբուգոդոնոսորի յաջորդը, որ ամբարիշտ և շռայլ մարդ մ'էր, օր մը մինչդեռ մեծ խնջոյք մը կուտար իւր իշխանաց, և Երուսաղեմայ տաճարէն կողոպտած ոսկիէ և արծաթէ անօթովք գինի կը խմէին, և իրենց կուռքերուն կը նուիրէին, յանկարծ ձեռք մ'երեւեցաւ ու պատին վրայ բան մը գրեց։ Թագաւորը սարսափած՝ զողալ սկսաւ, կոչեց զԴանիէլ՝ որ մեկնէ։ Դանիէլ թագաւորին երեսը զարնելով ըրած յանցանքներն՝ ըսաւ, «Այս է գրածը. Մանէ, թագաւորութեանդ վերջն հասեր է. Թեկել, Աստուած զքեզ քննեց՝ ու յանցաւոր գտնուեցար. Փարէս, թագաւորութեանդ կէսը Մարաց, կէսն ալ Պարսից տրուեցաւ։ Եւ յիրաւի նոյն գիշերը Դարեհ Մարաց թագաւորն պաշարեց զԲաբելոն, առաւ, և զԲաղտասար բռնեց ու սպաննեց։

---

1. Ո՞վ էր Դանիէլ։
2. Ինչո՞ւ Դանիէլ առիւծուց գուբը նետեցին։
3. Ի՞նչպէս մեռաւ Բաղտասար։

ԳԼՈՒԽ ՔԱՌԱՍՆԵՐՈՒԴ ԱՌԱՋՆԵՐՈՐԴ

ՅՈՒԴԻԹ

(ամբ 450 նախ քան զԲիբիստոս)

1. Նաբուգոդոնոսոր թագաւորն Մարաց յաղթելէն վերջ՝ ուզեց բոլոր աշխարհիս տիրել և Աստուծոյ պէս պաշտուիլ։ Ուստի իւր Հողեփեռնէս զօրավարն 120,000 հետեւակ զօրօք և նոյնչափ ձիաւորօք ղրկեց՝ որ երթայ ազգերն հնազանդեցընէ. նա ալ ամեն տեղ վախ ու սարսափ ձգեց, և անխնայ ջարդելով՝ Հրէաստան հասաւ։

Բեթիզուա քաղաքն որ Հրէաստանի դուռն կը սեպուէր, դէմ կեցաւ և ինք զինքը ամրացուց։ Հողեփեռնէս բարկացած հրամայեց քաղաքը պաշարել և ջուրը կտրեց։ Ռնակիչք ծարաւէն ոգեսպառ, երկար դիմակալութենէ վերջ որոշեցին հինգ օր ալ համբերել, և եթէ Աստուած չողորմի իրենց՝ անձնատուր ըլալ։ Անդադար կ'աղօթէին առ Աստուած գիշեր ու ցորեկ։

2. Յուդիթ՝ այրի հարուստ կին մը Շմաւոնի ցեղէն,

որ սրբութեամբ և աղօթիւք կ'անցընէր իւր օրերը յետ երկանը մահուան, Աստուծմէ լուսաւորուած, հագուեցաւ զարդարուեցաւ իւր թանկագին զարդերով, և աղախնոյն հետ քաղաքէն ելաւ գնաց։ Հողեփեռնեսի զինուորք բռնեցին զինքը և իրենց զօրապետին տարին։ Հողեփեռնէս հիացաւ անոր գեղեցկութեան վրայ, և քաղցրութեամբ հարցուց իրեն՝ թէ ուսկէ՞ն կու գայ։ Պատասխան տուաւ Յուդիթ. «Տէր իմ, տեսայ որ Աստուած բարկացեր է մեր ազգին վրայ. և իրենց վախճանը չար պիտի ըլլայ, անոր համար փախայ անոնցմէ և եկայ քեզի ապաւինեցայ»։ Հողեփեռնէս անոր խոհեմութիւնը գովեց, և հրամայեց զինքը իւր վրանը պահել և ամենայն պատուով հոգալ։ Յուդիթ գիշերները կ'ելնէր, ձորերուն և աղբիւրներու քով կը քալէր ու կ'աղօթէր։

Օր մը Հողեփեռնէս փառաւոր ընթրիք մը տուաւ իւր զօրավարաց, Յուդիթն ալ կոչեց. ու չափէն աւելի խմելով՝ գինովցան Հողեփեռնէս և իւր զօրավարներն. երբ ամենքն իրենց վրանը քաշուեցան, Յուդիթ և Հողեփեռնէս խոր քնոյ մէջ է, հանեց անոր սուրը, և մատերէն բռնելով, «Տէր օգնէ ինձ» ըսաւ, ու երկու անգամ զարկաւ կտրեց գլուխը, և աղախնոյն մախաղին մէջ դրաւ, մէկէն ելան գիշերանց Բեթիզուա գնացին։

Ժողովուրդը ջահերով և լապտերներով ընդ առաջ ելան, դռները բացին. և երբ Յուդիթ Հողեփեռնեսի գլուխը ցըցուց, ամենքն երկրպագութիւն ըրին Աստուծոյ և փառք տուին։

Առաւօտուն յարձակեցան Ասորեստանեայց վրայ, որոնք Հողեփեռնեսի սպաննուելուն վրայ սաստիկ շփոթած՝ բանակը թողուցին փախան։ Հրեայք հաղիւ երեսուն օրուան մէջ կրցան անոնց թողած աւարը Բեթիզուա կրել։

---

1. Ինչո՞ւ պաշարուեցաւ Բեթիզուա։
2. Ո՞վ էր Յուդիթ, և ինչպէս ազատեց զԲեթիզուա։

ԳԼՈՒԽ ՔԱՌԱՍՆԵՐՈՐԴ ԵՐԿՐՈՐԴ

ԵՍԹԵՐ

(ամք 1466 նախ քան զԲրիստոս)

1. Կիւրոս Պարսից թագաւորն երբ հրաման տուաւ Հրէից իրենց հայրենիքը դառնալ, ոմանք Պարսկաստան մնացին, որոց մէջ էր նաև Մուրթքէ անուամբ մէկն՝ իւր հօրեղբօր դստեր՝ Եսթերայ հետ: Այս աղջիկն իւր գեղեցկութեան և առաքինութեան համար շատ հաճելի եղաւ Արտաշէս թագաւորին որ զինքն իւր թագուհին ըրաւ:

2. Նոյն ժամանակ Համան անուամբ ամազեկացի մը կար՝ որ թագաւորին երկրորդը կը սեպուէր, և կ'ուզէր որ ամենքն իրեն երկրպագութիւն ընեն. Մուրթքէ այս իւր կամքը չէր կատարեր՝ աստուածապաշտ ըլլալով. ուստի Համան ասոր վրայ բարկացած, համոզեց զԱրտաշէս՝ որ իւր տէրութեան մէջ գտնուած բոլոր Հրեայքը ջնջուին, թագաւորին կողմանէ ալ հրովարտակ մը հանեց՝

որ ադար ամսոյն տասնեւչորսին ամենայն Հրեայք՝ մեծ ու պզտիկ՝ թրէ անցուին, իսկ Մուրթքէի համար երկայն փայտ մը տնկել տուաւ՝ որ անկէ կախել տայ:

3. Այս անօրէն հրամանին կատարուելէն քանի մ'օր առաջ թագաւորին քունը չտանելով՝ իւր յիշատակարաններն աչքէ անցընել ուզեց. ու գիպուածով այն տեղը բացաւ ուր գրուած էր՝ թէ ինչպէս տարի մ'առաջ Մուրթքէ թագաւորին կեանքը ազատեր էր դաւաճանութենէ մը. և թագաւորն ուզելով զՄուրթքէն վարձատրել, հարցուց Համանայ. «Եթէ փառաւորել ուզեմ մէկը, ի՞նչ պէտք է ընեմ»: Համան իրեն համար կարծելով այս բանս, «Տէր արքայ, ըսաւ, կը վայլէ որ այն մարդը թագաւորական զգեստով ու ձիով բոլոր քաղաքը շրջեցընել տաս, առջեւէն ալ գոչեն. «Թագաւորէն փառաւորուած մարդն է սա»: Հաւանեցաւ թագաւորն և հրամայեց իրեն՝ որ երթայ Մուրթքէին այս պատիւն ընէ: Համան չկրնալով ձայն հանել, կատարեց հրամանը և տրտում տխուր տունը դարձաւ:

4. Եսթեր իւր ազգին մօտալուտ վախճանը տեսնելով, յետ աղօթիւք առ Աստուած գիմելու՝ գնաց թագաւորին ոտքն ընկաւ և մարեցաւ. թագաւորին գութը շարժեցաւ. այլայլած ելաւ աթոռէն ու քաղցրութեամբ խօսեցաւ անոր հետ. Եսթեր ալ ըսաւ. «Տէր իմ, կը խնդրեմ որ իմ ազգիս կեանքը չնորհես, զոր խաբեբայ Համանն աչ, խարհէս վերցընել ուզեց». ու պատմեց անոր՝ Համանայ ըրած խարդախութիւնքն, և թէ զՄուրթքէ կախելու փայտ մը տնկեր է: Թագաւորը բարկացած հրամայեց զՀաման այն փայտէն կախել, և նոր հրովարտակ մը հանեց առաջնոյն հակառակ՝ որ մարդ չհամարձակի վնաս մ'ընել Հրէից պէս տիրասէր ազգին. Մուրթքէին ալ Համանայ իշխանութիւնը տուաւ:

---

1. Ո՞վ էր Եսթեր:
2. Ո՞վ էր Համան:
3. Ի՞նչ պատիւ տրուեցաւ Մուրթքէին:
4. Ի՞նչ կատարած ունեցաւ Համան:

ԳԼՈՒԽ ՔԱՍԱՍՆԵՐՈՐԴ ԵՐՐՈՐԴ

ՄԱԿԱԲԱՅԵՑԻՔ

(ամք 170 նախ քան զԲրիստոս)



1։ Հրէաստան Կիւրոսի և անոր յաջորդաց ձեռքն անցնելէն վերջ՝ մեծին Աղեքսանդրի իշխանութեան տակ ընկաւ։ Ասոր յաջորդ թագաւորք խաղաղութեամբ գնացին Հրէից հետ, բաց ի Անտիոքոս Եպիփանէ, որ շատ չարչարեց զանոնք և շատերը նահատակեց, ինչպէս ծերունի Եղիազար քահանայն, և Մակաբայեցւոց եօթն եղբարքը՝ իրենց Շամունէ մօր հետ, խոզենի չուտելուն համար՝ զոր կ՚արգելոյր մովսիսեան օրէնքը։

Վերջապէս Հրեայք ապստամբեցան, և զՄատաթի իրենց զօրավար դրած՝ հինգ հազար հոգւով բանակ մը կազմեցին։ Մատաթեայ որդին՝ Յուդա Մակաբէ Իսրայելի ամենէն կարիճ զօրավարաց մէկն, հետզհետէ չորս անգամ յաղթեց Անտիոքոսի զօրավարաց, առաւ Երուսաղէմն ու ճշմարիտ Աստուծոյ պաշտօնը նորոգեց։ Անտիոքոս այս բանս լսելով՝ անթիւ զօրք Երուսաղեմայ վրայ եկաւ, բայց ճամբան կառքէն ընկնելով՝ սաստիկ հիւանդութիւն մը վրան եկաւ և քիչ օրէն մահուան դուռն հասաւ. և առաջադրեց՝ որ եթէ առողջանայ՝ Հրէից վընաս չհասցընէ։ Բայց Աստուծոյ արդարութեան չափը լեցուեր էր, թողուց որ չարաչար մեռնի։

2. Յուդա Մակաբէ իւր զօրաւոր թշնամւոյն ձեռքէն ազատելով՝ քիչ մ՚ատեն խաղաղութեամբ իշխեց. բայց վերջը Դեմետր Անտիոքոսի եղբօրորդին պատերազմի ելաւ վրան՝ և իւր Բաքիդ զօրավարը Յուդայի վրայ ղրկեց շատ զօրօք։ Անոր յանկարծակի գալուստն Յուդայի հետ եղած 3,000 զօրքը վախցուց ու ցրուեց. ութ հարիւր ձիաւորք մնացին, անոնք ալ խորհուրդ կու տային՝ թէ «Այս անգամ ետ կենանք»։ Յուդա ըսաւ. «Ես փախչիլ չեմ գիտեր». և այն 800 ձիաւորօք յառաւօտէ մինչև երեկոյ պատերազմեցաւ՝ ու թշնամւոյն աջ թևին յաղթեցին. բայց ձախակողմեան թևին զօրացմէ պաշարւած՝ հոն քաջութեամբ ընկաւ Յուդա՝ և զօրքը ցրուեցան, Շմաւոն և Յովնաթան իւր եղբարք վերուցին մարմինը և իրենց հայրենական գերեզմանը թաղեցին մեծ սգով։

Յուդայի եղբարքն իրեն յաջորդեցին, և միաբան գործակցութեամբ յաջողեցան Աստուծոյ լուծը բոլորովին թօթվել. վերջը թագաւորական իշխանութեան ալ հասան և որդւոց որդի անցուցին այս պատիւը՝ մինչև Հռովմայեցւոց տիրապետութեան ժամանակ։

Հերովդէս՝ որ Հրէից ազգէն չէր, խարդախութեամբ Հռովմայեցւոց ծերակուտէն և Աւգոստոս կայսերէն Հրէաստանի թագաւորութիւնն առաւ, որոյ ժամանակ Քրիստոս Տէրն մեր աշխարհ եկաւ.

---

1. Մեծին Աղեքսանդրի յաջորդք ինչպէս կառավարեցին զՀրէաստան։
2. Ի՞նչպէս մեռաւ Յուդա Մակաբէ։

ՀԱՄԱՌՕՏ
ՍՐԲԱԶԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆ

ԳԼՈՒԽ ՔԱՌԱՍՆԵՐՈՐԴ ԶՈՐՐՈՐԴ

ԾՆՈՒՆԴ ՔՐԻՍՏՈՍԻ

(ԱՐ ԱՐՔԷՆ ՆԱԽՆԻ ԲՈՒԼՈՒՆԷ)



1. Հերովդի թագաւորութեան ժամանակ, ինչպէս

1. Երբ եղաւ Մեսիայի գալուստը։

ԱՒԵՏՈՒՄՆ

սահմանած էր Աստուած, եղաւ Մեսիայի գալուստը։ Գալիլիոյ Նազարէթ փոքր քաղաքին մէջ կ'ապրէր կոյսն Մարիամ, որ Յովսէփ արդարոյն հետ նշանուած էր. երկուքն ալ Դաւիթ մարգարէին թագաւորական ցեղէն էին։

1. Օր մը աղօթից ժամանակ Գաբրիէլ հրեշտակն երևեցաւ Մարիամու՝ և ըսաւ. «Ուրախ լեր բերկրեալդ, տէր ընդ քեզ». կոյսն Մարիամ այս խօսքերէս շփոթեցաւ. «Մի վախեր, ըսաւ հրեշտակը, որդի մը պիտի ծնանիս՝ և անունը Յիսուս պիտի դնես, որուն թագաւորութիւնը յաւիտեանս պիտի տևէ»։

2. Երբ ժամանակն եկաւ որ Քրիստոս պիտի ծնանէր, Աւգոստոս կայսր նոյն ժամանակ մեծ աշխարհագիր մ'ը-

1. Ի՞նչ աւետեց հրեշտակն Մարիամու։

2. Ո՞ւր ծնաւ Քրիստոս, և ի՞նչպէս յայտնուեցաւ հովուաց։

ԵՐԿՐՊԱԳՈՒԹԻՒՆ ՀՈՎՒՒԱՅ

նելու հրաման հանած ըլլալով, որ ամեն մարդու ցեղն ու քաղաք ի գիր անցնի, Յովսէփ որ բեթղեհեմացի էր, Բեթղեհեմ քաղաքը գնաց. և հոն իջևանելու տեղ չգտնելով, ստիպուեցաւ ախոռի մը մէջ բնակիլ, ուր՝ ինչպէս մարգարէք առաջուց զուշակեր էին, սուրբ կոյսը ծնաւ զՔրիստոս, և խանձարրովք պատեց և մսրի մէջ դրաւ։

Նոյն գիշերը մինչ Բեթղեհեմի դաշտերու մէջ հովիւք բացօթեայ իրենց ոչխարները կ'արածէին, յանկարծ գեղեցիկ լուսաւորութիւն մը տեսան յերկինս. և հրեշտակ մը երևեցաւ իրենց՝ և ըսաւ. «Մի վախէք, զի ահա ուրախութիւն մը կ'իմացընեմ ձեզ. ծնաւ ձեզ այսօր փրկիչ՝ Դաւթի քաղաքին մէջ։ Եւ այս ձեզի նշան՝ պիտի գտնէք տղայ մը խանձարրոյ մէջ պատած և մսրոյ մէջ դրուած»։ Եւ այն հրեշտակին հետ յանկարծ ուրիշ անհամար հրեշտակներ ալ երևեցան յերկինս՝ ու կ'երգէին, «Փառք ի բարձունս Աստուծոյ և յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն»։

ԲԵԹՂԵՀԷՄ



1. Հովիւները փութացին Բեթղեհէմ քաղաքն երկան և ինչպէս հրեշտակն իրենց ըսեր էր, գտան այրի մը մէջ Աստուածածինն ու Յովսէփը, և զՅիսուս՝ մսրոյ մէջ դրուած, և երկրպագութիւն ըրին ու պաշտեցին զինքը։

Ութ օր վերջ, ըստ մովսիսական օրինաց, մանուկը թլփատեցին և անունն Յիսուս դրին։

---

1. Ի՞նչ ըրին հովիւներն՝ երբ հրեշտակին աւետումը լսեցին։

ԳԼՈՒԽ ՔԱՌԱՍՆԵՐՈՐԴ ՀԻՆԳԵՐՈՐԴ

ՄՈԳՈՒՑ ԵՐԿՐՊԱԳՈՒԹԻՒՆԸ

1. Այն պահուն որ հրեշտակն հովուաց կ'ուեռէր Փրկչին ծնունդը, արևելքի մէջ գեղեցիկ և արտաքոյ կարգի պայծառ աստղ մ'երևցաւ, որոյ վրայ զարմանալով երեք մոգ թագաւորներ, որովհետև ի հնուց կը սպասէին Մեսիայի գալստեան, այս իրեն աստղն է ըսելով՝ ճամբայ ելան զինքը գտնելու։

Հետերնին հարուստ ընծաներ առին, ու խորհրդաւոր աստղին առաջնորդութեամբ Բեթղեհէմ եկան, և հարցնելով թէ ո՞ւր է նոր ծնած Իսրայելի թագաւորը, գտան Յիսուս մանուկը և իրեն երկրպագութիւն ըրին, և ընծայեցին ոսկի, կնդրուկ և զմուռս, որ իրենց երկրէն բերեր էին։

1. Բայց Հերովդէս վախելով որ չըլլայ թէ այն մանուկն օր մը ձեռքէն առնու թագաւորութիւնը, սպաննել ուզեց. գաղտուկ մոգուց ապսպրած էր որ եթէ տղայն գտնեն, իմացընեն իրեն՝ որ ինքն ալ երթայ և երկրպագութիւն ընէ։ Բայց մոգերն ուրիշ ճամբով իրենց երկիրը դարձան։ Հերովդէս ալ խաբուելուն վրայ բարկացած՝ հրամայեց Բեթղեհեմի մէջ գտնուող երկու տարուանէ վար բոլոր տղայքը սպաննել. բայց հրեշտակ մը առաջուց Յովսեփայ իմացուց՝ որ զՅիսուս իւր մօր հետ Եգիպտոս փախցընէ ու կոտորածէն ազատէ։

1. Ո՞վ էին մոգերը։

ԿՈՏՈՐԱԾ ԱՆՄԵՂ ՄԱՆԿԱՆՑ

1. Ի՞նչ ըրաւ Հերովդէս՝ երբ այդ բանը լսեց։

ՓԱԽՈՒՍՏ ՅԵԳԻՊՏՈՍ

1. Քիչ վերջը Հերովդէս մեռնելով, իրեն յաջորդեց Արքեղայոս իւր որդին։ Աստուծոյ հրեշտակը դարձեալ երևեցաւ Յովսեփայ և ըսաւ, որ Իսրայելի երկիրը դառնայ. ինքն ալ դարձաւ ու Նազարէթ քաղաքը բնակեցաւ։

Երբ Յիսուս տասներկու տարուան եղաւ. սուրբ Յովսեփայ և Աստուածածնի հետ Երուսաղէմ գնաց՝ զատկական տօնը կատարելու համար։ Տօնէն վերջ ետ դարձան, բայց Յիսուս առանց իրենց գիտնալուն տաճարը մնաց։ Յովսէփ ու Մարիամ կարծելով թէ ազգականաց կամ բարեկամաց հետ կու գայ, երկար ատեն փնտռեցին զինքը. և չգտնելով՝ նորէն Երուսաղէմ դարձան, և գտան զինքը տաճարին մէջ որ Հրէից վարդապետաց հետ կը խօսէր և զամենքը կը զարմացընէր իւր իմաստութեամբն ու ճարտարիմաստութեամբ։

---

1. Ե՞րբ դարձաւ Յիսուս Եգիպտոսէն։

ՆԱԶԱՐԷԹ



1. Սուրբ կոյսն երբ տեսաւ զինքը, «Որդեակ, ըսաւ, ի՞նչ ըրիր մեզի. այնչափ փնտռեցինք զքեզ հոգալով»։ Յիսուս ալ պատասխանեց. »Զէ՞ք գիտեր՝ որ ես հօրս տան մէջ պէտք է որ ըլլամ»։ Այսպէս իւր աստուածային առաքելութիւնը կ'ուզէր իմացընել, բայց ծնողքը չհասկցան. ու հետերնին Նազարէթ դարձաւ, և իրենց հնազանդ մնաց մինչև քարոզութեան ատենն, այսինքն իւր երեսներորդ տարին։

---

1. Յիսուս մինչև իւր երեսներորդ տարին ի՞նչ կ'ընէր։

ԳԼՈՒԽ ՔԱՌԱՄՆԵՐՈՐԴ ՎԵՑԵՐՈՐԴ

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՄԿՐՏԻՉ — ՅԻՍՈՒՍԻ ՄԿՐՏՈՒԹԻՒՆԸ

1. Յիսուսի քարոզութիւն սկսելէն քիչ առաջ՝ Յովհաննէս Մկրտիչ՝ որդի Զաքարիայ՝ եկաւ անապատէն, և սկսաւ քարոզել Յորդանան գետոյն եզերքն ու կ՚ըսէր. «Ապաշխարեցէք, մօտեցաւ Աստուծոյ արքայութիւնը»։ Դարձի եկողներն իրենց մեղքերը կը խոստովանէին և Յորդանան գետոյն մէջ կը մկրտուէին իրմէ. Յովհաննէս Մկրտիչ ալ կ՚ըսէր. «Ես կը մկրտեմ զձեզ ջրով, բայց ինծմէ վերջ եկողը պիտի մկրտէ զձեզ Հոգւով սրբով»։

2. Յիսուս մինչև որ երեսուն տարեկան եղաւ, Յովսեփայ և Մարեմայ քով անծանօթ կեանք մը կ՚անցընէր՝ բայց անկէ վերջ՝ որ պիտի սկսէր իւր քարոզութիւնը, եկաւ ինքն ալ նախ Յորդանան գետը մկրտուելու։ Յովհաննէս յանձն չէր առնոյր, ու կ՚ըսէր. «Ես պէտք եմ

ԵՐՈՒՍԱՂԷՄ



քեզմէ մկրտուիլ»։ Պատասխանեց Յիսուս. «Հիմայ թող՝ որ արդարութեան պարտքը կատարենք»։ Յիսուս մկրտուեցաւ Յորդանան գետոյն մէջ. և ջրէն դուրս ելնելու ժամանակ՝ երկինքը բացուեցաւ, Հոգին սուրբ աղաւնոյ կերպարանքով Յիսուսի վրայ իջաւ. երկնքէն ալ աստուածային ձայն մը լսուեցաւ՝ որ կ՚ըսէր. «Դա է իմ սիրելի որդիս, որուն հաճեցայ»։

3. Յիսուս յետ մկրտուելուն անապատ գնաց, և քառասուն օր ծոմ պահելէ վերջ անօթեցաւ։ Այն ատեն սատանան քովն եկաւ՝ զինքը փորձելու, և ըսաւ. «Եթէ Աստուծոյ որդի ես, հրամայէ այս քարերուս՝ որ հաց ըլլան»։ Յիսուս պատասխան տուաւ. «Գրուած է՝ թէ միայն հացով չապրիր մարդ, այլ Աստուծոյ պատուիրանքով»։ Յետոյ սատանայն զՅիսուս Երուսաղեմի տաճարին ծայրն հանեց, և ըսաւ. «Եթէ Աստուծոյ որդի ես, զքեզ ասկէ վար ձգէ. գրուած է՝ թէ հրեշտակք ձեռքի վրայ պիտի բռնեն զքեզ»։ Յիսուս ալ ըսաւ. «Գրուած է՝ թէ զԱստուած մի փորձեր»։ Յետոյ սա-

տանայն զՅիսուս բարձր լերան մը վրայ հանեց, ուսկից աշխարհիս ամենայն փառքն իրեն ցըցուց՝ և ըսաւ. «Աշխարհիս ամեն թագաւորութիւնքը կու տամ քեզի, եթէ ինծի երկրպագութիւն ընես»։ Այն ատեն ըսաւ անոր Յիսուս խստութեամբ. «Գնա՛ քովէս, սատանայ. միայն Աստուծոյ պէտք է երկիր պագանել»։ Սատանայն հեռացաւ գնաց, և հրեշտակներն եկան՝ Յիսուսի կը ծառայէին։

4. Անապատէն դառնալէն վերջ՝ սկսաւ Յիսուս քարոզել և աշակերտներ ժողովել՝ որոնք առաքեալ կ'ըսուէին, և տասերկու են, Պետրոս, Անդրէաս, Յակոբոս, Յովհաննէս, Փիլիպպոս, Բարթողիմէոս, Թովմաս, Մատթէոս, Յակոբոս Ալփեան, Թադէոս, Սիմոն և Յուդա Իսկարիովտացի՝ որ զինքը մատնեց, և վերջն իւր տեղ ընտրուեցաւ Մատաթիա։

---

1. Ո՞վ էր Յովհաննէս Մկրտիչ։
2. Յիսուս քանի՞ տարեկան մկրտուեցաւ և ուսկից։
3. Յիսուս յետ մկրտուելուն ո՞ւր գնաց։
4. Քանի՞ են առաքեալք։

ԳԵՆՆԵՍԱՐԷԹ



1. Յիսուս երեք տարուան միջոց որ քարոզեց, անհամար ու մեծ հրաշքներով իւր Որդի Աստուծոյ ըլլալը կ'իմացընէր. որոնցմէ մէկ քանին պատմենք։

Իւր առաջին հրաշքն ըրաւ ի Կանա քաղաքը՝ հարսանեաց ատեն ջուրը գինիի փոխելով։

Յիսուս նաւակով Գալիլիոյ Գեննեսարէթ ծովէն Գերգեսացւոց երկիրն անցնիլ ուզեց, և նաւուն ծայրն ընկըսաւ քուն ըլլայ։ Յանկարծ սաստիկ ալէկոծութիւն եղաւ և նաւն ընկզմելու վրայ էր. աշակերտները վախցած՝ արթնցուցին զինքը. «Փրկէ զմեզ» կ'ըսէին։ Յիսուս ալ արթննալով՝ յանդիմանեց իրենց թերահաւատութիւնն, ու վերջը ծովուն սաստելով՝ մէկէն հանդարտեցաւ, և ամենքը զարմացած սկսան ըսել. «Այս ո՞վ է, որ ծովուն և ալեաց կը հրամայէ՝ ու իրեն կը հնազանդին»։

---

1. Յիսուս իւր աստուածային քարոզութիւնները ինչո՞վ կը հաստատէր։

ԳԼՈՒԽ ՔԱՌԱՍՆԵՐՈՐԴ ԵՕԹՆԵՐՈՐԴ

ՊՐՈԲԱՏԻԿԷ ԱՒԱԶԱՆԸ

1. Պրոբատիկէ անուամբ աւազան մը կար Յերուսաղէմ, ուր շատ հիւանդներ կու գային և կը սպասէին որ Աստուծոյ հրեշտակը ջուրը շարժէ. այն ատեն իրենք գիրենք մէջը կը նետէին, և ով որ առաջ ընկնէր՝ նա միայն կը բժշկուէր։ Հիւանդ մ'ալ կար՝ որ երեսուն և ութ տարիէ ի վեր այն ջրոյն քով կը սպասէր։ Յիսուս մօտենալով իրեն հարցուց՝ թէ «Կուզե՞ս առողջանալ»։ Նա ալ ըսաւ «Տէր, չունիմ մէկն, որ զիս այն աւազանին մէջ ձգէ՝ երբ ջուրերն յուզուին»։ Յիսուս ալ ըսաւ. «Ելիր, առ անկողինդ ու գնա»։ Նա ալ շալակեց ու գնաց։ Հրեայք սկսան բարկանալ՝ թէ ինչո՞ւ շաբաթ օր անկողինը կը վերցընէ կը տանի։ Պատասխան տուաւ՝ թէ «Զիս բժշկողն հրամայեց ինծի». անոնք հարցուցին՝ թէ «Ո՞վ է քեզ բժշկողն», բայց ինքն ալ չէր գիտեր։

1. Ի՞նչ էր Պրոբատիկէ աւազանը։

ԲԺՇԿՈՒԹԻՒՆ ԴԻՒԱՀԱՐԻՆ

Այսպէս Յիսուս օրէ օր իւր աստուածային կարողութիւնը նորանոր հրաշիւք կը հաստատէր։

1. Ժողովրդեան մէջ դիւահար մը կար, որ գոչեց պոռալով. «Յիսուս Նազովրեցի, եկար զմեզ կորսնցընելու»։ Սաստեց անոր Յիսուս՝ և ըսաւ. «Պապանձէ ու ել այդկէ»։ Մեծ ձայնով աղաղակեց դևն ու ելաւ, և ամենքը զարմացան։

1. Յիսուս ի՞նչպէս բժշկեց դիւահարը։

ՅԱՐՈՒԹԻՒՆ ԱՅՐԻ ԿՆՈՋ ՈՐԴՒՈՅՆ

1. Յիսուս իւր աշակերտներով Նային քաղաքը երթալու ատեն՝ շատ ժողովրդով քաղաքին դռնէն մեռեալ մը կը հանէին, այրի կնոջ մը մէկ հատիկ զաւակը։ Յիսուս երբ տեսաւ, գթացաւ վրան՝ և ըսաւ. «Մի լար». և մօտեցաւ դագաղին՝ ու ըսաւ. «Պատանի դու, քեզի կ'ըսեմ, ելիր»։ Ելաւ նստաւ մեռեալն և սկսաւ խօսիլ, ու մօրը տուաւ։ Եւ ամենքը փառաւորեցին զԱստուած ու կ'ըսէին՝ մեծ մարգարէ մը ելեր է մեր մէջ։

2. Յայրոս անունով ժողովրդապետ մը երբ տեսաւ զինքը, ոտքն ընկած՝ կ'աղաչէր կը պաղատէր՝ որ գայ իւր տունը, դատեր վրայ ձեռք դնէ՝ որպէս զի ապրի, վասն զի մեռնելու մօտ էր։ Գնաց՝ և շատ ժողովուրդ ալ եկաւէն, որ կը նեղէին զինքը։ Կին մը, որ տասերկու տարուանէ ի վեր հիւանդ էր բոլոր ունեցածը

---

1. Յիսուս ի՞նչ հրաշք ըրաւ Նային քաղաքին քով.
2. Ի՞նչպէս եղաւ հիւանդ կնոջ բժշկութիւնը։

ԵՐԿՈՏԱՍԱՆԱՄԵԱՅ ՀԻՒԱՆԴ ԿԻՆԸ

բժշկաց վատնած էր՝ և ամենևին օգուտ մը չէր տեսած, այլ մանաւանդ թէ տկարացած, երբ լսեց Յիսուսի երթալը, ժողովրդեան մէջէն եկաւ ետևէն զգեստին զըպաւ. վասն զի միտքը զրեր էր՝ որ եթէ միայն անոր զգեստին դպչիմ՝ կը բժշկուիմ։ Եւ իրաւ՝ զգաց մէկէն որ առողջացեր է։ Իսկ Յիսուս դարձաւ ամբոխին և ըսաւ. «Ո՞վ զգեստիս մօտեցաւ»։ Աշակերտները պատասխանեցին. «Կը տեսնես՝ որ ժողովուրդը շուրջդ պատած կը նեղէ զքեզ, և դու կը հարցընես՝ թէ ո՞վ ըզգեստիս մօտեցաւ»։ Այն ատեն կինը զարհուրած ու դողալով՝ ծածուկ ընելուն համար, եկաւ առջևն ընկաւ և ամեն բան խոստովանեցաւ։ Եւ Յիսուս ըսաւ անոր. «Դուստր, քու հաւատքդ զքեզ բժշկեց, գնա խաղաղութեամբ»։ Այս խօսելու ժամանակ, ժողովրդապետին տնէն եկան իմացուցին՝ թէ աղջիկը մեռեր էր, պարապ տեղ չաշխատի երթալ։ Իսկ Յիսուս ժողովրդապետին ըսաւ. «Մի վախեր, միայն հաւատա»։ Տունն եկաւ տեսաւ բազմութիւն մը՝ որ կու լային. ներս մտաւ, «Ի՞նչ

ԲԺՇԿՈՒԹԻՒՆ ԱՆԴԱՄԱԼՈՒԾԻՆ



խռովեր էք, ըսաւ, աղջիկը մեռած չէ, այլ կը քնանայ»։ Անոնք խնդացին վրան. որովհետեւ գիտէին թէ մեռած էր։ Ելաւ՝ ուր որ գրած էին մեռեալը, ու ձեռքէն բռնելով ըսաւ անոր. «Աղջիկ, քեզի կ՚ըսեմ, ելիր»։ Ու մէկէն ելաւ աղջիկը և սկսաւ քալել, և ամենքը զարմացան։

1. Իւր քաղաքը դարձաւ և անդամալոյծ մը բերին իրեն. Յիսուս տեսնելով անոնց հաւատքը, ըսաւ անդամալուծին. «Թողուած ըլլան քու մեղքերդ»։ Եւ որովհետեւ դպիրներէն ոմանք կ՚ըսէին մտքերնէն՝ թէ հայհոյութիւն կ՚ընէ, ըսաւ անոնց Յիսուս. «Որպէս զի գիտնաս՝ թէ որդին մարդոյ իշխանութիւն ունի յերկրի մեղքերը թողու», ըսաւ անդամալուծին, «Ելլ, առ անկողինդ և տունդ գնա»։ Եւ մէկէն ելաւ գնաց։ Երբ տեսաւ ժողովուրդը, զարմացաւ և փառաւորեց զԱստուած։

---

1. Յիսուս անդամալոյծը ինչպէս բժշկեց։

ՅԻՍՈՒՍ Ի ԾԱՅՐ ԼԵՐԻՆ

1. Անդամ մ՚ալ երբ իւր քաղաքին մէջ քարոզութիւն կ՚ընէր, թէպէտ կը զարմանար ժողովուրդն վարդապետութեանը վրայ, բայց հաւատք ալ չունենալնուն համար կը յանդիմանէր զիրենք Յիսուս։ Ուստի բարկանալով վրան, քաղաքէն դուրս հանեցին զինքը և տարին լերան ծայրը, որոյ վրայ շինուած էր քաղաքը. զինքը վար նետելու. իսկ Յիսուս մէջերնէն անցաւ գնաց։

Օր մը ժողովրդեան իւր պատուէրները տալէն վերջ երբ լեռնէն վար կ՚իջնէր, եկաւ բորոտ մը երկրպագութիւն ըրաւ՝ և ըսաւ. «Տէր, եթէ ուզես, կարող ես զիս բժշկել». Յիսուս ալ «Կ՚ուզեմ» ըսաւ, ու մէկէն բըժշկուեցաւ։

---

1. Յիսուսի վարդապետութիւնները ինչպէս կ՚ընդունէր ժողովուրդը։

1. Յիսուս երբ իմացաւ՝ թէ Հերովդէս իւր եաւէն ընկեր է բռնելու, նաւով դէպ ի Բեթսայիդա գնաց։ Ժողովուրդն իմացաւ, եաւէն գնաց, և անոնց քարոզ կուտար ու բժշկութիւն կ'ընէր։ Երբ երեկոյեան դէմ եղաւ, աշակերտներն սկսան ըսել իրեն. «Հրաման տուր ժողովրդեան՝ որ երթան իրենց կերակուրը գտնեն»։ Յիսուս պատասխանեց. «Դուք տուէք անոնց որ ուտեն»։ Աշակերտքն ըսին, «Հինգ հաց՝ և երկու ձուկ միայն ունինք, բայց որո՞ւ կը բաւէ»։ Այն ատեն հրամայեց Յիսուս՝ որ ժողովուրդը խոտերու վրայ նստի կարգ կարգ. և այն հինգ հացն առնելով՝ օրհնեց և աշակերտաց տուաւ՝ որ բաժնեն. և այսպէս հինգ հազար մարդիկ կերակրեց, և տասուերկու հաց ալ աւելցաւ։ Այսոր վրայ ժողովուրդն այնչափ սէր ձգեց Յիսուսի վրայ, որ մէջերնին խորհուրդ սկսան ընել զինքը թագաւոր դնելու իրենց վրայ։

---

1. Յիսուս երբ իմացաւ՝ թէ Հերովդէս պիտի բռնէ զինքը, ո՞ւր գնաց։

ԹԱԲՈՐ ԼԵՌՆ

ԳԼՈՒԽ ՔԱՌԱՄՆԵՐՈՐԴ ՈՒԹԵՐՈՐԴ

ԳԼԽԱՏՈՒՄՆ ՅՈՎՀԱՆՆՈՒ ՄԿՐՏՉԻ

1. Յովհաննէս Մկրտիչ իւր քարոզութեամբ ամենուն սիրտը Յիսուսի փրկագործութեան խորհրդոյն կը պատրաստէր։ բայց Հերովդէս թագաւորն անոր խրատներէն ձանձրացած՝ բանտը դնել տուաւ. և սպաննել կ'ուզէր, բայց ժողովրդենէն կը վախէր, գիտնալով որ սուրբ մարգարէի տեղ դրած էին զինքը։ Իրմէ աւելի իւր Հերովդիա կինն սատիկ կ'ատէր զՅովհաննէս՝ անդադար անկէ յանդիմանուելուն համար, և տուիթ կը փնտռէր զանիկա սպաննել տալու։

Հերովդէս իւր ծննդեան տարեդարձին օրը՝ իշխանաց խնջոյք մը տուաւ. իւր դուստրն ալ տաղնին կաքաւեց,

---

1. Ի՞նչպէս եղաւ Յովհաննու Մկրտչի գլխատումը։

ՏԻԲԵՐԻԱ



և շատ հաճոյ անցաւ ամեուն։ Հերովդէս երդուաւ տալ իրեն ինչ որ կ'ուզէ, մինչև իւր թագաւորութեան կէսն ալ. աղջիկն իւր մօրէն խրատուած՝ Յովհաննու Մկրտչի գլուխն ուզեց։ Տխրեցաւ Հերովդէս, բայց երդմանն համար սիրեցաւ տալ, և դահիճ մը ղրկեց բանտն՝ որ գլուխը կտրեց և աղջկան բերաւ, աղջիկն ալ մօրը տարաւ։

1. Յիսուս հացը բազմացնելու հրաշքն ընելէ վերջ՝ ժողովուրդն արձակեց ու լեռն ելաւ, և աշակերտաց պատուիրեց որ նաւով երթան։ Երբ գիշեր եղաւ, սաստիկ ալեկոծութիւն մ'ելաւ ծովու վրայ, և վախցան. ու յանկարծակի մէկը տեսան՝ որ ծովուն վրայ քայլելով դէպ իրենց կուգար, և սկսան աղաղակել։ Յիսուս «Մի՛ վախէք, ըսաւ, ես եմ»։ Պետրոս ալ ըսաւ. «Եթէ դու ես, հրամայէ ինձ քեզի գալ»։ Յիսուս «Եկուր» ըսաւ։ Պետրոս նաւակէն իջաւ ու սկսաւ քայ-

1։ Ի՞նչ պատահեցաւ Տիբերեայ ծովուն մէջ։

ՍԱՄԱՐԱՑԻՈՅՆ ԳԹՈՒԹԻՒՆԸ

լել. բայց սաստիկ հողմ ըլլալուն համար սկսաւ ընկղմիլ և գՅիսուս օգնութեան կոչեց։ Յիսուս ձեռքէն բռնեց՝ և ըսաւ. «Թերահաւատ, ինչո՞ւ տարակուսեցար»։ Վերջը նաւակը մտան, և ծովն խկոյն հանգարտեցաւ։

1. Յիսուս երբեմն իւր խրատները պատմութիւններով կը պարզէր. ինչպէս անգամ մը երբ օրինական մը հարցուց իրեն՝ թէ ո՞վ է իմ ընկերս, պատասխանեց. «Մարդ մը Երուսաղեմէն Երիքով երթալու ժամանակ աւազակաց ձեռք ընկաւ որոնք մերկացուցին զինքը և վիրաւորեցին ու կիսամահ թողուցին գնացին։ Քահանայ մը անցաւ անկէ, տեսաւ զինքը՝ թողուց գնաց. նոյնպէս Ղեւտացի մը։ Սամարացի մ'ալ եկաւ այն ճամբէն,

1. Ի՞նչ է սամարացւոյն պատմութիւնը։

ՅԻՍՈՒՍ Կ'ՕՐՀՆԷ ԶՄԱՆԿՏԻՆ

տեսաւ ու գթացաւ վրան. մօտեցաւ՝ վէրքերը պատեց, և իւր ձիոյն վրայ դնելով՝ պանդոկ մը տարաւ. երկրորդ օրը պանդոկէն երթալու ատեն՝ երկու դահեկան տուաւ պանդոկապետին՝ ու ըսաւ. «Դարմանէ զինքը, և ինչ ծախս որ ընես՝ ի դարձիս կը հատուցանեմ»։ Այս երեքէն ո՞րը կը կարծես թէ մերձաւոր է՝ աւազակաց ձեռք ընկնողին։ Այն ալ ըսաւ. Նա որ իրեն ողորմեցաւ։ Ը-սաւ Յիսուս. «Գնա դու ալ նոյնպէս ըրէ»։

1. Անգամ մը փոքրիկ աղայք բերին իրեն, որ վրանին ձեռք դնէ և օրհնէ զիրենք. իսկ աշակերտները բերողներուն կը նեղանային։ Երբ տեսաւ Յիսուս՝ կոչեց աշակերտները, յանդիմանեց ու ըսաւ. «Թողուցէք տըղայքը՝ որ առ իս գան, և մի արգելուք զանոնք, վասն զի այդպիսիներուն է Աստուծոյ արքայութիւնը»։ Ու աղայքը գիրկն առնելով, վրանին ձեռք դրաւ և օրհնեց զանոնք։

---

1. Յիսուս ի՞նչպէս ընդունեցաւ աղայքը։

ԳԼՈՒԽ ՔԱՌԱՍՆԵՐՈՐԴ ԻՆՆԵՐՈՐԴ

ԱՅԼԱԿԵՐՊՈՒԹԻՒՆ

1. Քանի մ'օր վերջ՝ Յիսուս իւր հետ առնելով Պետրոս, Յակոբոս ու Յովհաննէս առաքեալները, Թաբոր լեռն ելաւ. հոն Յիսուսի կերպարանքը բոլորովին փոխուեցաւ, երեսն արեգական պէս և հագուստը ձեան նման ճերմակ փայլուն եղան, Մովսէսն ու Եղիան ալ երևեցան՝ որ Յիսուսի հետ կը խօսէին։ Պետրոս առաքեալն այս բանիս վրայ հիացած՝ սկսաւ ըսել Յիսուսի և աղաչել որ հոն մնան. նոյն միջոց լուսաւոր ամպ մը ծածկեց զիրենք՝ և ձայն մ'եկաւ մէջէն որ կ'ըսէր. «Դա է իմ սիրելի որդիս, իրեն հնազանդեցէք»։ Առաքեալք վախցան, երեսի վրայ ընկան. Յիսուս զիրենք վերուց ու պատուիրեց՝ որ մէկու մը չպատմեն մինչև իւր մահը։

---

1. Ի՞նչ տեսիլք եղաւ Թաբոր լերան վրայ։

ՄԱՐԹԱ ԵՒ ՄԱՐԻԱՄ

1. Յիսուս ուրիշ անհամար հրաշքներ ալ ըրած է իւր աստուածութիւնն և ամենակարողութիւնը յայտնի ընելու համար. իւր մէկ խօսքովը կաղեր, կոյրեր, խուլեր կը բժշկէր և դիւահարներն իրենց չար դիւէն կ'ազատէր: Բայց այս հրաշից ամենէն պայծառն եղաւ Ղազարու յարութիւնը:

Ղազարոս՝ Յիսուսի սիրելի անձանց մին՝ ծանր հիւանդանալով, անոր քոյրերն Յիսուսի լուր ղրկեցին և խմացուցին. բայց Յիսուս երկու օր ուշացաւ երթալու. և երբ Ղազարոս մեռաւ՝ ըսաւ աշակերտներուն. «Երթանք՝ որ Ղազարոսը արթնցրնեմ»: Անոնք չհասկրցան և սկսան զարմանալ ըսածին վրայ. այն ատեն Յիսուս յայտնի ըսաւ՝ թէ «Ղազարոս մեռաւ, բայց ես ուրախ եմ՝ որ այսու ձեր հաւատքն ալ կը հաստատուի»:

---

1. Ի՞նչպէս եղաւ Ղազարու յարութիւնը:

ԳԵՐԵԶՄԱՆ ՂԱԶԱՐՈՒ



Երբ Բեթանիա հասաւ, Ղազարոս չորեքօրեայ մեռած թաղուած էր. Մարթա՝ անոր քոյրը՝ լսելով Յիսուսի գալը, դիմացն ելաւ, «Տէր, ըսաւ, եթէ հոս եղած ըլլայիր, եղբայրս չէր մեռներ. բայց կը հաւատամ՝ որ եթէ հիմայ ալ ուզես՝ կարող ես զինքը կենդանացրնել»: Յիսուս անոր արտասուաց վրայ գթալով՝ պատասխանեց. «Կը կենդանանայ՝ եթէ հաւատաս, վասն զի ես եմ յարութիւն և կեանք. եթէ մեռնի ալ կ'ապրի, և ոչ երբէք պիտի մեռնի. կը հաւատա՞ս»: «Այո՛, Տէր, պատասխանեց Մարթա, կը հաւատամ թէ դու ես Քրիստոս, որդի Աստուծոյ կենդանւոյ, որ աշխարհ պիտի գայիր»: Դնաց Մարթա և կոչեց իւր Մարիամ քոյրը, և բազմութիւն սգաւոր բարեկամաց ալ հետն եկան: Յիսուսի սիրտն ելաւ ու լացաւ. յետոյ հարցուց, «Ո՞ւր թաղեցիք». անոնք ալ տարին ցուցին տեղը:

Յիսուս վրայի քարը վերցընել տուաւ, և աչքերը երկինք վերցընելով, «Հայր, ըսաւ, շնորհակալ եմ, որ

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՂԱԶԱՐՈՒ

լսեցիր ինձ, և միշտ կը լսես. բայց ես շուրջս կանգնած ժողովրդեան համար կ'ընեմ, որպէս զի հաւատան՝ թէ դու զիս ղրկեցիր». վերջը մեծ ձայնով մը հրամայեց և ըսաւ. «Ղազարոս, ելիր դուրս եկուր». խկոյն մեռեալը պատանքով, ձեռներն ու ոտները կապած՝ ելաւ գերեզմանէն. և Յիսուս հրամայեց որ պատանքը քակեն, ու սկսաւ քայլել և փառք տալ Աստուծոյ։ Եւ մեծ ուրախութիւն եղաւ իւր քոյրերուն։ Այս հրաշքը մեծ շփոթութիւն հանեց բովանդակ Հրէաստանի մէջ. անոնք որ ներկայ էին՝ դարձան հաւատացին Յիսուսի. ոմանք ալ գնացին քահանայապետաց իմացուցին, որոնք սկսան խորհուրդ ընել՝ թէ ինչպէս սպաննեն զՅիսուս ու մէջ տեղէն վերցնեն։

1. Իսկ Յիսուս եկաւ ի Բեթանիա՝ Սիմոնի տունը, և հոն իրեն ընթրիք տուին, ուր Մարթա կը ծառայէր ու Ղազար ալ սեղան նստած էր։ Իսկ Մարիամ՝ մէկ լիտր աղնիւ մեծագին իւղ առած, օծեց Յիսուսի ոտները, այնպէս որ բոլոր տունը՝ անուշահոտութիւնը տարածուե-

ԸՆԹՐԻՔ Ի ՏԱՆ ՍԻՄՈՆԻ

ցաւ։ Իսկ Յուդա՝ որ զինքը պիտի մատնէր, «Ինչո՞ւ այդ իւղն երեք հարիւր դենարի չծախուեցաւ, ըսաւ, ու ստակն աղքատաց չբաժնուեցաւ»։ Այս ըսաւ՝ չէ թէ որովհետև աղքատաց համար փոյթ ունէր, այլ գող էր՝ և դրամին արկղը իւր քովն էր։ Պատասխանեց Յիսուս. «Թող տուէք, լաւ գործեց. աղքատները միշտ հետերնիդ են, բայց զիս միշտ հետերնիդ պիտի չունենաք. դա առաջուց մարմինս խնկեց՝ ի նշան պատանաց։ Կ'ըսեմ ձեզի. ուր որ իմ աւետարանս պիտի քարոզուի, ատոր ըրածն ալ պիտի պատմուի»։

Երբ Յիսուսի չարչարանաց օրերը մօտեցան, ելաւ Երուսաղէմ երթալու. բայց առաջ իմացուց աշակերտաց՝ թէ որչափ պիտի չարչարուի, ու մարգարէից գրածները պիտի կատարուին որդւոյ մարդոյ վրայ։ Այլ անոնք չըհասկըցան ըսածները։

---

1. Յետ յարութեան Ղազարու ո՞ւր ընթրեց Յեսուս։

ԳԼՈՒԽ ՅԻՍՆԵՐՈՐԴ

ԵՐԻՔՈՎԻ ԿՈՅՐԸ

1. Երիքովի մօտեցած ժամանակ՝ մուրացկան կոյր մը նստած էր ճամբուն վրայ. երբ ժողովրդեան անցնիլն իմացաւ, հարցուց թէ ի՞նչ կայ։ Պատասխանեցին՝ թէ Յիսուս Նազովրեցին կ'անցնի։ Սկսաւ աղաղակել. «Յիսուս, որդի Դաւթի, ողորմէ ինծի»։ Իսկ առջևէն գնացողները կը նեղանային իրեն որ լռէ. բայց նա՝ ալ աւելի կ'աղաղակէր։ Կեցաւ Յիսուս և հրամայեց՝ որ իրեն բերեն. երբ մօտեցաւ, հարցուց թէ «Ի՞նչ կ'ուզես որ ընեմ քեզի»։ Ըսաւ կոյրը. «Տէր, աչքերս բացուին ու տեսնեմ»։ Ըսաւ Յիսուս. «Նայէ, քու հաւատքդ բժշկեց զքեզ»։ Ու մէկէն տեսաւ, և ետևէն կ'երթար ու կը փառաւորէր զԱստուած։

ԶԱԿՔԷՈՍ

2. Մտաւ Երիքով և կը պտըտէր։ Զակքէոս անուամբ հարուստ մաքսապետ մը կ'ուզէր տեսնել՝ թէ ո՞վ է Յիսուս. բայց բազմութեան պատճառաւ չէր կրնար, հասակը կարճ ըլլալով. ուստի վազեց ժանտաթզենւոյ մը վրայ ելաւ՝ որ տեսնէ։ Յիսուս երբ հոն հասաւ, վեր նայեցաւ՝ ու ըսաւ իրեն. «Զակքէ, փութա՛ իջիր, վասն զի այսօր քու տունդ պիտի հանդչիմ»։ Մէկէն իջաւ և ուրախութեամբ տուն տարաւ. բայց ուրիշները կը տըրտընջէին՝ որ մեղաւոր մարդու տուն մտաւ։ Եկաւ Զակքէոս՝ ու ըսաւ. «Տէր, ահա ունեցածիս կէսը աղքատաց կը բաժնեմ. և եթէ մարդ մը զրկեր եմ, չորեքպատիկ կը հատուցանեմ»։ Յիսուս ալ ըսաւ. Այսօր եղաւ այս տան փրկութիւնը. վասն զի սա ալ Աբրահամու որդի է»։

---

1. Ի՞նչ հրաշք ըրաւ Յիսուս Երիքովի մօտ։
2. Ո՞վ էր Զակքէոս.

ԳԼՈՒԽ ՅԻՍՆԵՐՈՐԴ ԱՌՆՁՆԵՐՈՐԴ

ՅԻՍՈՒՍ ՅԱՂԹԱՆԱԿԱՒ ԵՐՈՒՍԱՂԷՄ ԿԸ ՄՏՆԷ



1. Երբ ձիթենեաց լերան մօտեցաւ, աշակերտներէն երկու հոգի գիմացի գիւղը դրկեց, ուր էշ մը և իւր քուռակը պիտի գտնէին կապած, և ըսաւ. «Գնացէք բերէք. և եթէ ձեզի հարցնող մ'ըլլայ, ըսէք՝ թէ իրենց տիրոջ պէտք են»։

Աշակերտները գնացին բերին և հագուստներն անոնց վրայ փռելով՝ հեծուցին զՅիսուս և սկսան Երուսաղէմ մտնել։ Բոլոր ժողովուրդն արմաւենւոյ և ձիթենւոյ ճիւղեր ձեռքերնին առած՝ առջևէն կ'երթային, ու զգեստներն գետինը փռելով՝ ամենքը միաբերան մեծ ու փոքրիկ՝ սկսան աղաղակել. «Օրհնութիւն որդւոյ Դաւթի. օրհնեալ է որ կու գայ անուամբ Տեառն. օրհնութիւն ի բարձունս»։

2. Փարիսեցիք սաստիկ նախանձէն սկսան բարկանալ և ըսել Յիսուսի, «Պատուիրէ որ չաղաղակեն»։ Յիսուս ալ պատասխանեց. «Եթէ սոնք լռեն, քարերը կ'աղաղակեն»։ Վերջը քաղաքին վրայ նայեցաւ. լացաւ և ըսաւ. «Վայ քեզ, քաղաք, որ չես ճանաչեր քեզի եղած բարիքն. անոր համար պիտի կորսուիս»։

Նոյն հանդիսով տաճարը մտաւ. և տեսնելով՝ որ հոն առուտուր կ'ընեն, գամենքը դուրս վռնտեց, լումայափոխներուն սեղանը կործանեց, աղաւնի վաճառողները տաճարէն դուրս հանեց և ըսաւ. «Հօրս տունը աւազակաց այր ըրեր էք»։ Վերջը կոյրերն ու կաղերը մօտեցան իրեն և բժշկեց զամենքը։

3. Քահանայապետք և իշխանք իւր հրաշքները տեսնելով, և ժողովուրդն որ տաճարին մէջ կ'աղաղակէր՝ «Ովսաննա որդւոյ Դաւթի», սաստիկ նախանձով և ատելութեամբ վառուեցան Յիսուսի դէմ. և ամէն միջոց կը փնտռէին՝ զինքը մէջ տեղէն վերցընելու համար. վասն զի յայտնապէս կը տեսնէին՝ որ ժողովուրդն իրեն կը յարէր։ Ուստի սաղուկեցիք և փարիսեցիք միաբանեցան խօսք զրին՝ որ զՅիսուս տերութեան դէմ յանցաւոր ցուցնեն ու բռնել տան. և իրեն հարցումներ կ'ընէին, բայց Յիսուս զամենքը կը պապանձեցընէր. այնպէս՝ որ ոչ ոք ալ կը համարձակէր իրեն բան հարցընել։

Վերջը Յիսուս իւր աշակերտաց խմացուց՝ թէ երկու օրէն որդին մարդոյ պիտի խաչուի։

---

1. Ի՞նչ կերպով Յիսուս Երուսաղէմ մտաւ։
2. Փարիսեցիք ի՞նչ աչքով կը տեսնէին Յիսուսի փառաւորութիւնը։
3. Ի՞նչ խորհեցան քահանայապետք և իշխանք Յիսուսի համար։

ԳԼՈՒԽ ԵՐԵՍՆԵՐՈՐԴ ԵՐԿՐՈՐԴ

ՅԻՍՈՒՍ ԱՌԱՔԵԼՈՑ ՈՏՔԸ ԿԸ ԼՈՒԱՅ



1. Յիսուսի Քրիստոսի թշնամիներն՝ Կայափա քահանայապետին քով ժողված, խորհուրդ կ՚ընէին՝ թէ ինչպէս զՅիսուս սպաննեն։ Յուդա իս կարիովտացին, որ Յիսուսի երկոտասան առաքեալներէն մէկն էր, սատանայէն գրգռուած՝ և իւր զզուելի ագահութիւնը յագեցընելու համար, գնաց անոնց հետ խօսք դրաւ՝ որ զՅիսուս ի բենց ձեռքը մատնէ. անոնք ուրախացան և երեսուն դահեկան տուին. ուստի սկսաւ յարմար ատեն մը փընտռել իւր վարդապետն անոնց ձեռքը մատնելու։

2. Զատիկը մօտ ըլլալուն և Յիսուս ուզելով իւր վերջին զատկական գառն ուտել աշակերտօք հանդերձ, Պետրոս և Յովհաննէր առաքեալները քաղաք զրկեց՝ որ ընթրիքը պատրաստեն։ Երբ ժամն հասաւ, Յիսուս նախ

ՎԵՐՋԻՆ ԸՆԹՐԻՔ

աշակերտաց ոտները լուաց՝ անոնց խոնարհութիւն սորվեցնելու համար. Պետրոս չուզեց թողուլ, Յիսուս ալ ըսաւ. «Եթէ չլուամ, ինծի հետ մասն չես ունենար». ու վերջն ըսաւ ամենուն. «Ինչպէս ես ձեզի ըրի, այսպէս դուք ալ իրարու ըրէք». և սեղան նստան։ Քանի մը սիրոյ խօսքեր ըսելէն վերջ, մինչդեռ կ՚ուտէին ըսաւ. «Ձեզմէ մէկը զիս պիտի մատնէ»։ Ամենքը խռովեցան այս խօսքիս վրայ և սկսան հարցնել. «Միթէ ե՞ս եմ, վարդապետ»։ Պատասխան տուաւ Յիսուս. «Ով որ ինծի հետ ձեռքը սկաւառակը երկնցուց՝ նա է». ու նոյն միջոց Յուդա՝ որ երկնցուցեր էր ձեռքը, հարցուց, «Մի-

---

1. Ի՞նչպէս Յուդա մատնեց զՅիսուս։
2. Վերջին ընթրեաց ատեն Յիսուս ի՞նչ ըրաւ.

թէ ե՞ս եմ»։ Յիսուս ալ ըսաւ. «Դու ըսիր»։ Եւ քանզի Յիսուս հայ մ'առաւ, օրհնեց և աշակերտաց բաժնելով՝ «Առէք, կերէք, ըսաւ, այս է մարմին իմ»։ Նոյնպէս բաժակն առնելով՝ օրհնեց, աշակերտաց տուաւ ըսելով. «Արբէք ի սմանէ, այս է արիւն իմ նորոյ ուխտի, որ շատերուն մեղաց թողութեան համար կը թափուի»։

Այսու Յիսուս Քրիստոս հաղորդութեան երկրպագելի խորհուրդը հաստատեց, յորում հացն ու գինին ճշմարտապէս կը փոխուին ի մարմին և յարիւն Քրիստոսի։

1. Վերջը Յուդայի ըսաւ. «Ինչ որ պիտի ընես, ըրէ»։ Յուդա ալ սատանայէն կուրացած՝ մատնելու գնաց։ Յիսուս իւր քով մնացած աշակերտաց շատ սիրալիր խօսքեր ըսաւ և իւր կտակը խօսքով աւանդեց, և ամենքն սկսան լալով լսել. յետոյ սեղանէն ելան ու Ձիթենեաց պարտէզը գնացին, որ Ձիթենիներով լեցուն ըլլալուն համար այսպէս կը կոչուէր, և Գեթսեմանի ալ կ'ըսուէր։

---

1. Ի՞նչպէս վերջացաւ ընթրիքը։

ԳԼՈՒԽ ՅԻՍՆԵՐՈՐԴ ԵՐՐՈՐԴ

ՁԻԹԵՆԵԱՑ ՊԱՐՏԷԶ

1. Յիսուս, ըստ իւր սովորութեան, աշակերտաց հետ Ձիթենեաց պարտէզը գնաց, և հոն ըսաւ իւր աշակերտաց. «Հոս կեցէք՝ մինչև երթամ աղօթքս լմնցընեմ». ու միայն Պետրոսը, Յակոբոսը և Յովհաննէսը հետն առած՝ յառաջ գնաց, ու սկսաւ տրտմիլ և հոգալ, ու ըսաւ անոնց. «Տրտում է հոգիս մեռնելու չափ. հոս կեցէք և ինծի հետ արթուն մնացէք»։ Եւ ինքը քիչ մ'առաջ երթալով՝ երեսի վրայ ընկաւ, սկսաւ աղօթել և ըսել. «Հայր իմ, եթէ հնար է, անցնի ինծմէ այս բաժակս. բայց ոչ իմ, այլ քու կամքդ ըլլայ»։ Նոյն միջոցին հրեշտակ մ'եկաւ երկնքէն և զինքը կը զօրացընէր. բայց Յիսուս մեծ տագնապի մէջ էր և աւելի մտադրու-

---

1. Ի՞նչ ըրաւ Յիսուս Ձիթենեաց պարտիզին մէջ։

ՅԻՍՈՒՍ ԶԻԹԵՆԵԱՅ ՊԱՐՏԻԶԻՆ ՄԷՋ

թեամբ աղօթք կ'ընէր, և քրտինքը իրրև արեան կա-
թիլներ գետին կը վազէր։ Եւ աղօթքէն ու երկու ան-
գամ Աստուածոց քովը եկաւ, տեսաւ որ տրտմութենէն
աքնոյ մէջ են. արթընցուց զիրենք և ըսաւ. «Ելէք, ա-
ղօթք ըրէք, որպէս զի փորձութեան մէջ չընկնիք»։

1. Մինչդեռ հետերնին կը խօսէր, եկաւ Յուդա Իս-
կարիովտացին Հրէից խուռն բազմութեամբ, լապտերօք,
սուսերօ քէ գաւազանօք, զՅիսուս բռնելու համար. զի-
նուորաց ալ ըսեր էր. «Զով որ համբուրեմ, նա է փընտ-
ռածնիդ, զայն բռնեցէք»։ Եւ Յիսուսի մօտենալով,
«Ողջ եղիր, վարդապետ», ըսաւ, և զինքը համբուրեց։
Յիսուս ալ ըսաւ. «Յուդա, համբուրելո՞վ կը մատնես
զիս». և զինուորաց առջև երթալով, «Զո՞վ կը փըն-
տռէք», ըսաւ։ «Յիսուս Նազովրեցին» պատասխանե-
ցին։ «Ես եմ», ըսաւ Յիսուս, և ամէնքը ետ ետ մը-
զուելով՝ գետին ընկան։ Յիսուս կրկին հարցուց. «Զո՞վ
կը փնտռէք»։ Պատասխանեցին դարձեալ. «զՅիսուս

Նազովրեցին»։ «Ըսի ձեզի՝ թէ ես եմ», պատասխա-
նեց Յիսուս. այն ատեն վրան թափեցան և կապեցին
զինքը։

2. Պետրոս առաքեալը՝ տեսնելով այս անգութ վար-
մունքը իւր տիրոջ հետ, քաշեց սուրը, և քահանայապե-
տին՝ Մաղքոս անունով ծառային ականջը կտրեց։ Յիսուս
դարձաւ ըսաւ իրեն. «Սուրդ պատեանը դիր, վասն զի
ով որ սուր կը գործածէ՝ սրով կ'ընկնի. կը կարծես՝ թէ
չէմ՞ կրնար Հօրս աղաչել՝ որ երկոտասան գունդէ աւելի
հրեշտակ հիմայ հոս զրկէր. բայց ի՞նչպէս մարգարէու-
թիւնները պիտի կատարուին». և մօտեցաւ բժշկեց ա-
կանջը։

Իսկ զինուորներն առին զՅիսուս՝ Աննա քահանայա-
պետին տարին։

---

1. Ի՞նչպէս Յուդա մատնեց զՅիսուս։
2. Ի՞նչ ըրաւ Պետրոս առաքեալը Մաղքոսին։

ԳԼՈՒԽ ՅԻՍՆԵՐՈՐԴ ԶՈՐԲՈՐԴ

ՅԻՍՈՒՍ ԿԱՅԻԱՓԱՅԻ ԵՒ ՊԻՂԱՏՈՍԻ ԱՌՋԵՒ



1. Աննա քահանայապետն զՅիսուս դատապարտելով Կայիափա քահանայապետին ղրկեց։

Հոն երկու սուտ վկաներ ամբաստանեցին զՅիսուս և ըսին. «Մենք լսեցինք որ կ'ըսէր՝ թէ երեք օրուան մէջ տաճարը կրնամ շինել»։ Ուրիշ սուտ ամբաստանութիւններ ալ կ'ընէին, որ իրարու չէին համաձայներ։ Բայց որովհետև բոլոր ըրած ամբաստանութիւններին մահուան դատապարտութեան բաներ չէին, ոտք ելաւ Կայիափա՝ և ըսաւ Յիսուսի. «Կ'երդմնցընեմ զքեզ յԱստուած կենդանի, որ ըսես՝ թէ Աստուծոյ Որդին ես»։ Պատասխանեց Յիսուս. «Դու ըսիր. օր մը պիտի տեսնէք զՈրդին մարդոյ՝ Աստուծոյ փառաց աջակողմն նստած, և երկնից ամպերու վրայ պիտի գայ»։ Այս խօսքիս վրայ բարկացաւ Կայիափա, իւր զգեստները պատառեց

ըսելով. «Հայհոյեց, ալ ինչ վկայութիւն պէտք է մեզի». ժողովուրդն ալ աղաղակեց. «Հայհոյեց, պէտք է մեռնի». և սկսան նախատել. զինուորքն ալ Յիսուսի գլուխը քօղ մը ձգած՝ կը դարնէին ու վերջը կը հարցընէին «Մարգարէացիր, ո՞վ է քեզի զարնողը»։

2. Իսկ Յուդա տեսնելով՝ թէ զՅիսուս դատապարտեցին, սաստիկ զղջաց, ու առած ստակը ետ դարձուց և ըսաւ. «Մեղայ, որ անպարտ արիւնը մատնեցի»։ Հրեայք ալ պատասխանեցին. «Մեր փոյթը չէ. քու գիտնալու բանդ է». ինքն ալ յուսահատած՝ գնաց կախուեցաւ։

3. Կայիափա քահանայապետին քովէն առին միւսանգամ զՅիսուս, Պոնտացի Պիղատոսի տանը տարին, որ Հրէաստանի կուսակալն էր, և ամբաստանեցին՝ թէ կայսրէն կ'ապստամբեցընէ զՀրեայս և ինքզինքը թագաւոր կ'անուանէ։ Պիղատոս՝ Հրէից տեսութենէն զատ ուրիշ յանցանք մը չգտնելով Յիսուսի վրայ, ուզեց ազատել զինքը։ Եւ որովհետև սովորութիւն էր ամէն տարի մահապարտ մ'արձակել Զատկի տօնին, նոյն տեղն Բարաբբա անունով նշանաւոր մարդասպան մը կար բանտին մէջ. Պիղատոս հարցուց ժողովրդեան. «Զո՞վ կ'ուզէք որ ազատ թողում. Բարաբբա՞ն թէ զՅիսուս»։ Ամէնքն աղաղակել սկսան. «Բարաբբայն ազատ թող»։ «Իսկ Յիսուս ի՞նչ կ'ուզէք որ ընեմ», հարցուց դատաւորը. ամէնքը «խաչեսցի, խաչեսցի», աղաղակեցին։ «Յանցանքն ի՞նչ է», հարցուց։ Իսկ Հրեայք աւելի ևս կ'աղաղակէին, «խաչեսցի»։

Այն տեղն Պիղատոս թողուց զԲարաբբա. բայց ուրիշ փորձ մ'ալ ուզեց ընել զՅիսուս ազատելու համար. սաստիկ ծեծել տուաւ զինքը, ու արիւնլուայ՝ «Ահա մարդը», ըսաւ, և ժողովրդեան ցըցուց. կը յուսար՝ որ այսու անոնց սիրտը յուզուէր. բայց անողորմ Հրեայք դարձեալ «խաչեսցի» աղաղակեցին։ Ալ չկարենալով Պիղատոս դէմ դնել ժողովրդեան, անոնց առջև ձեռքերը լուացաց՝ և ըսաւ. «Բաւական եմ ես այդ արդարոյն արիւնէն». և զՅիսուս անոնց ձեռքը մատնեց։

---

1. Ո՞ւր տարին զՅիսուս։
2. Յուդա ի՞նչպէս մեռաւ։
3. Ի՞նչպէս դատապարտուեցաւ Յիսուս։

ԳԼՈՒԽ ՅԻՍՆԵՐՈՐԴ ՀԻՆԳԵՐՈՐԴ

ՅԻՍՈՒՍ ԿԸ ՁԱՐՁԱՐՈՒԻ ԵՒ ԳՈՂԳՈԹԱ ԿԸ ՏԱՐՈՒԻ



1. Պիղատոսի զինուորք զՅիսուս իւր զգեստներէն մերկացընելով, կարմիր քղամիդ մը հագուցին. գլուխն ալ փշէ պսակ մը դրին և ձեռքը եղէգ մը տուին, ու սկսան առջևն երկրպագութիւն ընել. և ծաղրելով ու կատակելով, «Ողջ եղիր, Թագաւոր Հրէից» կ'ըսէին. երեսը կը թքնէին և եղէգը ձեռքէն առնելով՝ գլխուն կը զարնէին: Իսկ Յիսուս լուռ կը կենար, և այս ամէն նախատանաց կը համբերէր առանց խօսք մը զրուցելու, կամ գանգատ մը հանելու իւր անգութ դահճաց դէմ:

2. Վերջը զինուորներն հանեցին քղամիդը և դարձեալ Յիսուսի սովորական զգեստներն հագուցին և ելան Գողգոթա լեռն երթալու: Յիսուսի Տեառն մերոյ ոյժը բոլորո-

վին սպառած ըլլալով այնչափ չարչարանքներէ, և ստէպ խաչին ծանրութենէն ալ դետին ընկնելով՝ վախցան զինուորք որ թերևս ճամբան մեռնի. ուստի Սիմոն անունով կիւրենացի մէկը, որ իւր արտերէն քաղաք կը դառնար, ստիպեցին որ խաչը վերցընէ մինչև Գողգոթա լեռը:

Անթիւ ժողովուրդ այս տխուր հանդիսին ետևէն կ'երթար. շատ կանայք ալ կային՝ որ սրտերնուն ցաւէն կ'արտասուէին դառնապէս: Յիսուս իրենց դառնալով ըսաւ. «Դստերք Երուսաղեմի, իմ վրաս մի լաք, այլ ձեր անձանց և որդւոց վրայ լացէք. վասն զի օր պիտի գայ՝ որ ըսէք. Երանի այն կանանց՝ որ զաւակ չեն ունեցած»:

Յիսուս ուժէ ընկած և արիւն քրտինք մտած՝ ճամբան կ'երթար. հետը զնացող բարեպաշտ կանանց մէկը՝ որբուհին Վերոնիկա՝ վարշամակով անոր սուրբ երեսին քրտինքը սրբեց, և Փրկչին աստուածային դէմքը վրան տպաւորուած մնաց:

3. Յիսուսի հետ երկու ուրիշ յանցաւոր չարագործ մարդիկ կը տանէին, որոնք իրեն պէս խաչուելու դատապարտուած էին. և այս ամէն բան կ'ըլլար, որպէս զի սուրբ գրոց խօսքը կատարուի, որ կ'ըսէ՝ թէ «Անօրինաց կարգը դասուեցաւ»:

---

1. Ուրիշ ի՞նչ չարչարանք տուին Յիսուսի:
2. Ո՞վ օգնեց Յիսուսի խաչը վերցընելու:
3. Յիսուսի հետ ինչո՞ւ երկու աւազակներ ալ խաչեցին:

ԳԼՈՒԽ ՅԻՍՆԵՐՈՐԴ ՎԵՑԵՐՈՐԴ

ՅԻՍՈՒՍԻ ԽԱՉՈՒԻԼԸ

1. Երբ Գողգոթա լեռն հասան, հոն զՅիսուս խաչին վրայ գամեցին. երկու աւազակներն ալ երկու կողմը խաչեցին: Յիսուս իւր վշտաց ու ցաւոց մէջ Աստուծոյ կ'աղօթէր զինքը չարչարողներուն համար և կ'ըսէր. «Հայր, ներէ իրենց, վասն զի չեն գիտեր ըրածնին»:

Զինուորներն Յիսուսի զգեստները իրենց մէջ բաժնեցին, իսկ պատմուճանն որ առանց կարի վերէն վար հիւսուած էր, չուզեցին պատառել. այլ որպէս զի մարգարէին խօսքը կատարուի՝ որ կ'ըսէր, «Բաժնեցին ըզգեստներս և պատմուճանիս վրայ վիճակ կը ձգէին», վիճակ ձգեցին և մէկու մը տուին:

2. Խաչին քով կեցած էին Աստուածամայրն, Մարիամ մագդալենացին և այլ բարեպաշտ կանայք: Յիսուս իւր մայրը տեսնելով, ըսաւ իրեն՝ Յովհաննէս առաքեալը ցուցընելով. «Կին դու, ահա քու որդիդ». վերջը Յովհաննէսին ալ ըսաւ. «Ահա քու մայրդ»: Եւ անկէ վերջ Յովհաննէս միշտ Աստուածածնայ հետ բնակեցաւ:

3. Քիչ մը վերջ Յիսուս «Ծարաւի եմ», ըսաւ: Զինուորներն սպունգ մ'առին, ու քացախի և լեղւոյ մէջ թաթաւելով՝ եղեգի մը ծայրն անցուցած իրեն տուին, ու ծաղրելով կ'ըսէին. «Եթէ Հրէից թագաւոր ես, ըզքեզ փրկէ»: Խաչին վրայ ալ այս արձանագրութիւնը գրեր էին. Յիսուս Նազովրեցի թագաւոր Հրէից:

Յիսուսի հետ խաչուած աւազակներէն մէկն ալ կը հայհոյէր զինքը և կ'ըսէր, «Դու չե՞ս Աստուծոյ որդին, փրկէ զքեզ և զմեզ». իսկ աջակողմեանն իրեն գործած

---

1. Ո՞ւր խաչուեցաւ Յիսուս:
2. Որո՞ւ հետ բնակեցաւ Աստուածածին՝ Յիսուսի մահուանէն վերջ:
3. Ի՞նչ խմցուցին Յիսուսի:



ՅԻՍՈՒՍԻ ԽԱՉԵԼՈՒԹԻՒՆԸ

յանցանաց վրայ զղջալով, դարձաւ ըսաւ Յիսուսի. «Տէր, յիշէ զիս՝ երբ թագաւորութեամբդ աշխարհ գաս». Յիսուս ալ պատասխանեց. «Այսօր ինծի հետ արքայութեան մէջ պիտի ըլլաս»։

1. Եւ մինչ ժամը դեռ վեցն էր, արեգակը խաւարեցաւ, և Յիսուս հզօր ձայնով մը գոչեց. «Հայր, քու ձեռքդ կ'աւանդեմ հոգիս». և հոգին աւանդեց։ Այն տեղն տաճարին մեծ վարագոյրը վերէն վար պատռեցաւ, գետինը շարժեցաւ, քարերը ճեղքուեցան, և շատ ննջեցեալ սրբոց մարմինք յարութիւն առին։ Խաչին քով եղողները վախցան և մէկմէկու կ'ըսէին. «Իրաւ՝ Աստուծոյ Որդին էր սա»։ Եւ օրն ուրբաթ ըլլալուն համար՝ Հրեայք խնդրեցին Պիղատոսէն՝ որ խաչուողներուն ծունկերը խորտակեն, որպէս զի շաբաթ օրուան չմնան։ Եկան աւազակներուն ծունկերը խորտակեցին. բայց Յիսուս նոր մեռած ըլլալով՝ զինուոր մը նիզակով կողը խոցեց, ուսկից արիւն և ջուր ելաւ։

---

1. Ինչ հրաշքներ եղան Յիսուսի մահուան ժամանակ։

ԳԼՈՒԽ ՅԻՍՆԵՐՈՐԴ ԵՕԹՆԵՐՈՐԴ

ՔՐԻՍՏՈՍԻ ԹԱՂՈՒՄԸ

1. Յիսուսի մեռնելէն վերջ՝ Յովսէփ՝ արիմաթացի հարուստ նախարարը, խնդրեց Պիղատոսէն՝ որ Յիսուսի մարմինը վերցնէ. հրաման տուաւ Պիղատոս. եկան առին և պատեցին կտաւով խնկով, ու քարէ փորած նոր գերեզմանի մէջ դրին և մեծ քարով մը գոցեցին։ Հրէից իշխաններն ու քահանայապետք ալ Պիղատոսի հրամանաւ գնացին գերեզմանը կնքեցին և պահապաններ դրին՝ որպէս զի աշակերտներն մարմինը չգողնան։

---

1. Ի՞նչպէս թաղուեցաւ Յիսուս։

ՔՐԻՍՏՈՍԻ ՅԱՐՈՒԹԻՒՆԸ

1. Բայց այս ամէն զգուշութիւնք փոխանակ խափանելու, աւելի պայծառացուցին Յիսուսի յարութիւնը՝ ինչպէս որ ինքն ըսեր էր։ Վասն զի երրորդ օրը՝ մեծ շարժում մ'եղաւ, և հրեշտակ մի քարը մէկ կողմ գլորեց ու վրան նստաւ. իւր երեսը փայլակի կը նմանէր և ըզգեստը ձեան պէս ճերմակ. զինուորները վախերնէն խռովեցան և մեռելի պէս ընկան. և Յիսուս իւր ամենակարողութեամբ գերեզմանէն յարութիւն առաւ։ Իսկ զինուորները փախան քահանայապետներուն իմացուցին եղածը. անոնք ալ շատ դրամ տուին իրենց՝ որպէս զի մարդու չպատմեն։

2. Քանի մը բարեպաշտ կանայք, Մարիամ՝ Յակոբայ մայրը, Սողոմէ և Մարիամ մագդալենացի, կիրակի առաւօտանց կանուխ՝ պէս պէս խունկեր և անուշահոտ իւղեր հետերնին առած՝ գերեզման եկան, որպէս զի Յիսուսի մարմինը օծեն ըստ սովորութեան Հրէից. բայց ճամբան կը տարակուսէին՝ թէ ինչպէս դրած մեծ քարը պիտի շարժեն. երբ գերեզմանը հասան, տեսան որ քարը մէկ կողմ նետուած էր. ներս մտան՝ ու մարմինը մէջը չէր։

Եւ երբ այս եղածին վրայ հիացեր էին, լուսաւոր ըզգեստով հրեշտակն ըսաւ իրենց. «Մի վախէք. գիտեմ, խաչուած Յիսուս Նազովրեցին կը փնտռէք. յարեաւ. գնացէք պատմեցէք աշակերտաց»։ Եւ անոնք մէկէն վախով և ուրախութեամբ գնացին աշակերտաց պատմելու։ Պետրոս և Յովհաննէս եկան, ու տեսան՝ որ մարմինը չկայ, և ետ դարձան. բայց Մարիամ մագդալենացին հոն կեցաւ ու կու լար։ Յանկարծ ձայն մը լսեց որ կ'ըսէր. «Կին դու, ինչո՞ւ կու լաս, զո՞վ կը փընտռես»։ Մարիամ դարձաւ ըսաւ. «Յիսուս կը փընտռեմ»։ «Մարիամ», ըսաւ Յիսուս. այն ատեն ճանչցաւ զՏէր. «Վարդապետ» ըսաւ։ Եւ Յիսուս՝ «Մի մօտենար ինծի, ըսաւ, վասն զի դեռ Հօրս քով չեմ գնացած. այլ գնա իմ աշակերտներս գտիր, և պատմէ իրենց ինչ որ տեսար»։

3. Նոյն օրը Յիսուս իւր երկու աշակերտաց ալ երեւցաւ, մինչդեռ Եմմաուս գիւղը կ'երթային։ Իրիկունն ալ մինչ Առաքեալք դռները գոց՝ տան մէջ կեցեր էին, Յիսուս յանկարծ մէջերնին երեւցաւ, ու «Խաղաղութիւն» ըսաւ. յետոյ երեսնին փչեց՝ ըսելով. «Առէք Հոգին սուրբ. որոնց մեղքը թողուք՝ թողուած ըլլան, և որոնցը կապէք՝ կապուած ըլլան». և այսու՝ խոստովանութեան խորհուրդն հաստատեց։

---

1. Ի՞նչպէս եղաւ Յիսուսի յարութիւնը։
2. Յիսուս որո՞նց երեւցաւ յարութենէն վերջ։
3. Յիսուս ուրիշ անգամ ալ երեւցա՞ւ Առաքելոց։

ԳԼՈՒԽ ՅԻԱՆԵՐՈՐԴ ՈՒԹԵՐՈՐԴ

ՅԻՍՈՒՍԻ ՀԱՄԲԱՐՁՈՒՄԸ

1. Աշակերտներն օր մը Տիբերեայ ծովը գնացեր էին ձուկ որսալու, և չէին կրցած որսալ։ Յիսուս իրենց երևցաւ և ըսաւ. «Նաւին աջակողմը ձգեցէք ուռկանը». ձգեցին ու հարիւր յիսուն մեծամեծ ձկներ բռնեցին. այնպէս որ քիչ մնաց՝ ուռկանը պատռէր։ Այս հրաշքէս իմացան Առաքեալք՝ թէ Յիսուս է խօսողը. քովը ժողվեցան, ու նստան ձուկ եփեցին և կերան։ Եաթը Յիսուս Պետրոսի հարցուց երեք անգամ. «Ձիս ուրիշներէն աւելի կը սիրե՞ս». Պետրոս «Այո, Տէր, դու ալ գիտես որ կը սիրեմ», պատասխանեց։ Յիսուս ալ ըսաւ. Գառներս և ոչխարներս արածէ». և իմացուց՝ որ ինքն ալ պիտի խաչուէր։

2. Յիսուս ուրիշ շատ անգամ երևելէն և աշակերտաց խրատ տալէն վերջ՝ քառասներորդ օրը նորէն երևեցաւ, ու ապացրեց որ Հոգւոյն սրբոյ գալստեան սպասն, որ զիրենք շնորհօք պիտի լեցընէ, ու բոլոր աշխարհ պիտի երթան քարոզելու։ Եաթը զամէնքը հետն առաւ, Զիթենեաց լեռը գնաց, ու հոն օրհնեց և ըսաւ. «Ամենայն իշխանութիւն տրուած է ինծի յերկինս և յերկրի. գնացէք ամէն ազգերը լուսաւորեցէք, ու մկրտեցէք յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ. սորվեցուցէք անոնց պահել ինչ որ ձեզի պատուիրեր եմ. և ահաւասիկ ես ձեզի հետ եմ մինչև ի կատարած աշխարհի»։ Այս ըսելէն վերջ՝ երկինք համբարձաւ, և ամպ մը զինքը ծածկեց աներևոյթ ըրաւ։

3. Մինչդեռ Առաքեալք ապշած Յիսուսի վեր երթա-

---

1. Յիսուս ի՞նչպէս երևցաւ Առաքելոց՝ Տիբերեայ եզերքը։
2. Յիսուս ի՞նչպէս համբարձաւ։
3. Համբարձմանէն վերջ ի՞նչպէս իջաւ Հոգին սուրբ Առաքելոց վրայ։

ՔՐԻՍՏՈՍԻ ՀԱՄԲԱՐՁՈՒՄԸ

լուն կը նայէին, երկու հրեշտակք երևցան, և ըսին. «Ի՞նչ կը նայիք զարմացած. գիտցէք՝ թէ Յիսուս ինչպէս որ հիմայ գնաց, նոյնպէս ալ օր մը պիտի դայ փառօք»։ Առաքեալք ուրախութեամբ ու փառք տալով Աստուծոյ՝ Երուսաղէմ դարձան, և ինչպէս Քրիստոս իրենց ապսպրած էր, միաբան Աստուածածնայ հետ տասն օր աղօթիւք կ՚անցընէին. և ահա յանկարծ երկնքէն սաստիկ հողմի ձայն ելաւ, տունը լեցուեցաւ, և ամենուն վրայ հրեղէն լեզուներ երևցան։ Առաքեալք ալ Հոգւով սրբով լցեալք՝ սկսան այլ և այլ լեզուներ խօսիլ։

ԳԼՈՒԽ ՅԻՍՆԵՐՈՐԴ ԻՆՆԵՐՈՐԴ

ՍՈՒՐԲ ՊԵՏՐՈՍ ԱՌԱՔԵԱԼ

1. Առաքեալք Հոգւով սրբով լցուած՝ սկսան ամէն տեղ Յիսուսի Քրիստոսի վարդապետութիւնը քարոզել, և միայն Պետրոսի մէկ քարոզութեամբ 3000 Հրեայք դարձի եկան։ Հաւատացեալք իրենց ունեցածը կը վաճառէին, և հասարակաց կը բաշխէին՝ որուն որ պէտք կ՚ըլլար. առաքինութեամբ ու աստուածպաշտութեամբ կ՚ապրէին, և ժողովուրդն ալ զիրենք կը յարգէր ու կը սիրէր։ Իսկ Առաքեալք շատ հրաշքներով իրենց յանձնուած աստուածային պաշտօնը կը փառաւորէին. յանուն Յիսուսի Նազովրեցւոյ՝ կաղեր ու կոյրեր կը բժշկէին. և համբաւն ամէն տեղ տարածուելով՝ հազարաւոր Հրեայք Յիսուսի Քրիստոսի հաւատքը կ՚ընդունէին։

---

1. Ի՞նչպէս սկսաւ քրիստոնէութիւնը տարածուիլ։

ՍՈՒՐԲ ՊԱՒԼՈՍ ԱՌԱՔԵԱԼ



1. Բայց այս խաղաղութիւնը և յաջողութիւնը երկար չտևեց. շուտով սկսաւ քրիստոնէից դէմ հալածանք ելնել, և անոնց նախանձաւոր թշնամեաց թուէն էր նաև Սաւղոս, որ փարիսեցւոց աղանդին մէջ մեծցեր էր:

2. Օր մը մինչդեռ ի Դամասկոս կ'երթար՝ մեծ քահանայապետին հրամաններն ի գործ դնելու քրիստոնէից դէմ, յանկարծ քաղաքին պարսպաց մօտ՝ երկնաւոր լոյս մը փայլատակեց չորս կողմը: Սաւղոս ձիէն վար ընկաւ, ու ձայն մը լսեց որ կ'ըսէր իրեն. «Սաւուղ, Սաւուղ, ինչո՞ւ կը հալածես զիս»: Սաւղոս պատասխանեց. «Տէր, ո՞վ ես»: – «Ես Յիսուս եմ՝ զոր դու կը հալածես». պատասխանեց ձայնը: – «Տէր, ի՞նչ կ'ուզես որ ընեմ», ըսաւ Սաւղոս ու պատասխան առաւ՝ թէ «Եա՛ւ, քաղաքը մտիր, և ինչ որ քեզի կ'ըսուի՝ կատարէ»: Սաւղոս ելաւ գետնէն, և ահա աչքերը կուրցած էին. քովի մարդիկը զարհուրած՝ զինքը Դամասկոս տարին, ուր երեք օր անօթի կեցաւ, առանց ուտելու և խմելու:

3. Աստուած զրկեց Անանիա առաքեալն, որ ձեռքը վրան դրաւ բժշկեց աչքը, մկրտեց՝ և անունը Պաւղոս դրաւ, որ անկէ վերջը Պետրոս առաքելոյն հետ քրիստոսական կրօնքին գլխաւոր ախոյեանքն եղան: Երկուքն ալ Հռովմ գնացին, և հոն հալածանաց ժամանակ նահատակուեցան: Պետրոս առաքեալը խաչի վրայ գամուեցաւ, բայց ինքզինքն արժանի չհամարելով Յիսուսի պէս մեռնելու՝ ուզեց գլխիվայր խաչուիլ:

4. Իսկ սուրբն Պաւղոս հազարաւոր հեթանոսներ դարձընելէ և բազմաթիւ եկեղեցիներ հաստատելէ վերջը, որովհետև Հռովմայեցւոց քաղաքացի էր, գլուխը կտրեցին Ներոն կայսեր ժամանակ՝ 67 տարի Քրիստոսէ ետքը:

---

1. Ո՞վ էր Սաւղոս:
2. Սաւղոսի ի՞նչ պատահեցաւ Դամասկոս գնալու ժամանակ:
3. Ի՞նչ մահուամբ մեռաւ Պետրոս առաքեալը:
4. Սուրբ Պաւղոս առաքեալը ո՞ր կայսեր ժամանակ գլխատեցին:

ԳԼՈՒԽ ՎԱԹՍՆԵՐՈՐԴ

ՀԱԼԱԾԱՆՔ — ՔՐԻՍՏՈՆԷՈՒԹԵԱՆ ՏԱՐԱԾՈՒՄԸ

1. Ներոն կայսրը՝ որ այնչափ նշանաւոր եղաւ իւր անզթութիւններով, մասնաւոր կերպով քրիստոնէից դէմ ցոյց տուաւ իւր ատելութիւնը։ Քրիստոսի աշակերտները սպաննելն իրեն համար մեծ զուարճութիւն էր։ Երբ ա-հաւոր հրդեհ մը Հռովմայ մէկ մասն այրեց և անոր տաճարներն ու պալատները կործանեց, յանցանքը քրիստոնէից վրայ ձգեց և անողորմ տանջանաց մատնեց զանոնք. զոմանս վայրենի գազանի մորթով պատած՝ շանց կերակուր կ՚ընէր, ոմանց ձիւթով օծեալ զգեստներ հագուցած՝ կանթեղի պէս կը վառէր գիշեր ժամանակ և իւր պարտէզը կը լուսաւորէր, որոնք բոցերու մէջ անբացատրելի չարչարանօք կը մեռնէին, մինչդեռ Ներոն իւր կառաց մէջ նստած և անձամբ ձիերը կառավարելով՝ անոնց լուսով կը զուարճանար։

Քրիստոնէից դէմ տասը մեծ հալածանք կը հարուին, որս բիւրաւոր վկայք մեծ քաջութեամբ նահատակեցան։ Իրենց վեհանձն մահը՝ փոխանակ եռանդները մարելու՝ աւելի կը վառէր և կը բազմացնէր ճշմարիտ կրօնից աշակերտները։

2. Կամաց կամաց քրիստոնէութիւնն սկսաւ նաև երևելի ընտանեաց մէջ մտնել, և Քրիստոսէ 50 տարի վերջ՝ Դոմետիանոս կայսեր (81–96 թուականին) ազգականքն անգամ քրիստոնեայ եղած էին, և քիչ ժամանակի մէջ այս սուրբ կրօնքն աշխարհիս ամէն կողմը տարածուեցաւ, և նախկին հաւատացելոց կեանքն ամենուն հիացումը կը շարժէր։ Վերջապէս Մեծին Կոստանդիանոսի ժամանակ Քրիստոսի 312 թուականին՝ կայսերաց գահուն վրայ տիրեց քրիստոնէութիւնը։ Այս կայսրը քրիստոնէութիւնն ընդունեցաւ երկնատուր հրաշքով մը։ Վասն զի մինչդեռ Մաքսենտիոս բռնաւորն պաշարած էր Հռովմայ մէջ և յաղթութեան վրայ կը տարակուսէր, լուսաւոր խաչ մը տեսաւ յերկինս՝ որոյ վրայ գրուած էր. Այսու յաղթեա։ Կոստանդիանոս հրամայեց իւր զօրաց դրօշակին վրայ այս նշանը դրոշմել, և մեծ յաղթութիւն մ՚ըրաւ ու կայսրութեան հասաւ։

Իրմէ վերջը քրիստոնէութիւնը տէրութեան կրօնքն եղաւ, և խաչը՝ որ մինչև այն ժամանակ նախատանաց նշան համարուած էր, ի Հռովմ Կապիտոլիոնի վրայ դրուեցաւ՝ ի նշան յաղթութեան սուրբ կրօնից՝ հեթանոսութեան վրայ։

3. Այսօրուան օրս գրեթէ 300,000,000 քրիստոնեայք կան բոլոր աշխարհիս վրայ, և օրէ օր կը բազմանայ այս հաւատացելոց թիւը անձնանուէր քարոզչաց ձեռքով, որք ամենայն վտանգ յանձն առնելով՝ հեռաւոր երկիրներ կ՚երթան Յիսուսի Քրիստոսի սուրբ վարդապետութիւնը տարածելու։

---

1. Ո՞վ նշանաւոր եղաւ քրիստոնէից հալածչաց մէջ։
2. Քրիստոնէութիւնը միշտ հալածուեցա՞ւ։
3. Ո՞րչափ քրիստոնեայք կը հաշուին հիմայ աշխարհիս վրայ։

ՀԱԼԱԾԱՆՔ — ՔՐԻՍՏՈՆԷՈՒԹԵԱՆ ՏԱՐԱԾՈՒՄԸ



1. Ինչպէս գուշակեր էր Քրիստոս, Երուսաղէմ քաղաքն հետզհետէ ի կործանումն կը դիմէր. քահանայապետք տաճարին մէջ կը սպաննուէին ու կը խեղդուէին. և հռովմայեցի կուսակալք հպիւ կրնային իրենց իշխանութիւնը յարգել տալ և ի գործ դնել՝ քաղաքին մէջ գտնուած անթիւ սրիկայ մարդկանց պատճառաւ. որոնք վերջապէս յանդգնաբար ապստամբութիւն յարուցին, և Տիտոս՝ Վեսպասիանոս կայսեր որդին, վրանին եկաւ և Երուսաղէմ քաղաքը պաշարեց: Բնակիչք չուզեցին անձնատուր ըլլալ, և երկար ժամանակ պաշարողաց դէմ կռուեցան. սով ու ժանտախտ ալ պատերազմական աղետից վրայ աւելցան, բայց չուզեցին խոնարհիլ: Պաշարութիւնը կ'առանդէ մեր մը անլուր խժդժութիւն, որ անօթութենէ յիմարեալ՝ իւր որդւոյն օրօոցին մօտեցաւ, առաւ տղան՝ խեղդեց, խորովեց և մաս մ'ուտելէ վերջ՝ մաս մ'ալ պահեց հետևեալ օրուան: Արիկայք խորտակեցին հոտէն ձգուած՝ բռնութեամբ տունը

մտան, և մահ սպառնալով՝ կը ստիպէին կինը՝ որ եփած կերակուրը մէջ բերէ. կինն որդւոյն դիակին մնացորդը դիմացնին հանեց. «Որդիս է, ըսաւ, ես սպաննեցի ու նախ ես կերայ. առէք կշտացէք, անողորմք»: Սարսափեցան, և քար կտրած սոսկումէ թողուցին տունը փախան, իբրև թէ Աստուծոյ անէծքը գիրենք անկէ հալածած ըլլար: Քաղաքն առնուեցաւ վերջապէս և Տիտոս հիմնայատակ կործանեց:

2. Սակայն հայրենեաց աւերակը չյուսահատեցուցին Հրեաները դարձեալ հոն բնակութիւն հաստատելու. քիչ քիչ նորանոր շէնքեր բազմացան հին Երուսաղէմի վրայ, և Ադրիանոս Հռովմայ կայսեր ժամանակ՝ այս քաղաքս իւր առաջին պայծառութիւնը նորէն ստացեր էր: Բնակիչքը դարձեալ ապստամբեցան Հռովմայեցւոցմէ, և յամառ դիմակալութենէ վերջ յաղթուեցան: Ադրիանոս հին քաղաքին վրայ նոր քաղաք մը շինեց Ադրամազդայ նուիրեալ, և սովէն ապրած սակաւաթիւ Հրեայները կամ վաճառեց և կամ օտար երկիր քշեց: Այն ժամանակէն յետոյ չկրցան Հրեայք տէրութիւն մը կազմել. և աշխարհիս ամէն կողմ ցրուած՝ անդադար կը սպասեն Մեսիայի գալստեան, ինչպէս գուշակեր են մարգարէք, զոր չուզեցին ճանաչել ի Քրիստոս Յիսուս:

Այսօր Հրէաստան Օսմանեան Պետութեան տակ է. և անթիւ ուխտաւորք տարուէ տարի Երուսաղէմ կ'երթան սուրբ տեղեաց այցելութեան:

---

1. Ի՞նչպէս կործանեցաւ Երուսաղէմ:
2. Ի՞նչ կատարած ունեցան Հրեայք:

ՍԱՄԱՐԻՏԱՆ
ՍԱՄԱՐԻՏԱՆ

ՀՀ Ազգային գրադարան
NL0026512